

323.1

U-80

Շ. Ն. ԱՂՈՅԻ

ԸՐԴԱԿԱՆ
ԱԶՈՒՅՈՒՆ ԱԶԻՏԱԳՐԱՎԵՆ
ՇԱՐՇՈՒՄԵՐԸ ԻՐԱՐՈՒՄԸ
ԱՐԿՐՈՐԳ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ
ՀԵՏՈ

Հ. ՈՒՆՅԱՆ, 1960

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Յ. Խ. ՄԳՈՒ

КУРДСКОЕ
НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЕ
ДВИЖЕНИЕ В ИРАКЕ
ПОСЛЕ ВТОРОЙ МИРОВОЙ
ВОЙНЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Երևան 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԽԱՆԱԳՆՏՈՒԹՅԱՆ ԱԿՏՈՐ

323.1
Մ-80

Ե. Խ. ՄԳՈՒ

ԳՐԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՈՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐՋՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՒՄ
ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀՈՒՄԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

267



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳՈ ՀՐԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ
ԱՐԽԱՆԱՆ 1965

Աշխատութիւնը շատարանում է Իրարում երկ-
րորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունե-
ցած բրդական ազգային ազատագրական շարժումները,
նրանց տեղը և գերը Իրաքի ժողովրդի ընդհանուր հա-
կախմղերթաշխատական պայքարի մէջ:

Ազգային ինքնավարութիան համար Իրաքյան Քուր-
դիստանում տեղի տնեցող շարժումները սերտորեն
կապված են Իրաքի և հատկապես Իրաքյան Քուրդիս-
տանի սոցիալ-անտեսական կյանքի պայմանների հետ:
Այդ պատճառով զգալի տեղ է հատկացված երկրի սո-
ցիալ-անտեսական պայմանների վերլուծմանը, ստար-
երկրյա տիրապետութեան հետևանքների հարցերին:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ժամանակակից Քուրդիստանը մասնատված է Քուրդիստի,
Իրանի, Իրաքի և մասամբ Սիրիայի միջև: Բարդ ժողովուրդը
գտնվում է կտրուկ դրաքայան մեջ և ենթարկված է ազգային
ու սոցիալական ճնշման:

Քուրդիստան, որինսույ, սաղրում են ափէի յան 4 միլիոն
բրդեր, բայց կրանց պաշտօնապես արգելված է յուրդ կոշիկ,
բարքական կատակորչուրներ կրանց անվանում է «շեռային
բարքեր»: 1930 թ. Քուրդիստի պրեմիեր-մինիստր Իսմե-
յան բացկեցող հաշտարարում էր. «Մեր երկրում միայն յուր-
քանան ազգի իրավունք ունի պահանջներ ենթադասկելու Էթի-
կական և ստատայական իրավունքների համար: Ուրիշ ոչ մի
տարր այդ իրավունքը չունի»¹:

Ափէի չով չէ նաև մասնատված Քուրդիստանի միւս շրջան-
ների բնակչության դրաքայունը: Իրանի կատակորչական սո-
ցիալտարական ըստարակաւուրդներ իրագործվում է այն «ան-
տարան» յուրի տակ, ըստ որի «բրդերը և պարսիկները մեկ
ազգ են...»: Այդ յուրի ժամանակ կատակորչական «ճնեկանե Էմ-
րուգ» յնրորդ դրում էր. «Հարկավոր է յուրերի բերանը երկար
լքնել, ոչնչարցնել յուրերեն չեղով հրատարակուրդունները»²:

¹ «Millet», 30 հոգտոսոսի 1930թ.

² Լ. Կաւուտ, Les kurdes et le Droit, Paris, 1947, p. 22.

Քուրդ ժողովրդի ազգային իրավունքները չեն ճանաչվել և տեսահարվել են նաև Բրաքում:

Այդ երկրների կառավարությունները քրդական ազգային-ազատագրական շարժումները համարում են «անջատողական» շարժումներ և ազատագրական պայքարի յուրաքանչյուր փորձ ինդիզում արվան մեջ:

Անգլիական հարստի գրող Ե. Ս. Արմսթրոնգն իր «Իրաւաֆա Ռեմալ» գրքում գրում էր. «Կարևոր և սուրբ հանրության Բուրդիստանի թշնամության և անպայման պատճառը: Տղամարդիկ խոչտանգվում և սպանվում էին, գլուխըրը արվում, սլանտացիաները ճակոկում ու անապայվում, կանաչ բոխարարվում, իսկ երեխաները ոչնչացվում: Մուստաֆա Ռեմալի էպոսայում այնպիսի դաժանությունը ամենահար էին տնում և սպանուց քրդերին, ինչպես սուլթանների էպոսայում՝ հուլներին, հաշերին և բալլարներին»: Բնորոշ է, քննադականների այսպես կոչված «Անկախության դառաբանի» 1925 թ. հունիսի 28-ի վճիռը քրդական 53 գործիչների նկատմամբ, որոնք մեղադրվում էին քրդական ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու մեջ: Այդ դատավճռում ոչլրական ավաված էր. «Դուք բոլորը մեղադրվում եք նույն բանում՝ Դուք բոլորը ձգտել եք Բուրդիստանի անկախությանը: Հատկապես դրա համար պետք է մեր կյանքում հատուցեք և ենթակա եք մահապատժի՝ կախաղանի միջոցով»: 1960 թ. օգոստոսին Եսկիչների իր էլուրում, Յուրքիտի այժմյան արեւիդիես Չուրբելը ասում էր. «Պատմությունն էլ ապացուցում է, որ քրդություն չկա, թրքություն կա»: Խակ թուրքական «Կարան» թերթը գրում էր. «Անկախում «քրդեր» կոչված մի համալսում ուղի: Արևելքում թուրքների շխտող մի թուրքական գանգված կա, որը, սակայն, թուրք չի լինի մեր թուրք անկախը: ... Մեր լեզվով շխտող հարյուրամիլիոններ օրերից

մի օր մեզ համար վտանգ են դառնալու: Մենք պետք է մեր ամբողջ կարողությամբ աշխատենք նրանց մեզ միացնել, մեր մեջ ձուլել»: 4

Ներկայումս, երբ Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը մտել է իր բուն վարզացման էտապը, քրդական ազգային-ազատագրական շարժումները պետք է դիտել և զնահատել ներքին տեսցիկայի և ինքնեղիպի տիրապետության դեմ մղվող պայքարի տեսակետից: Այստեղից առաջ է գալիս քրդական ազգային-ազատագրական շարժումների բնույթի հարցը: Հայտնի է, թե Լենինը ինչպիսի ուղարկությամբ էր ուսումնասիրում և զնահատում Արևելքի ժողովուրդների շարժումները: Նա միշտ պզուշացնում էր, որ հարկավոր է հաշվի առնել այն առանձնահատուկ պայմանները, որոնց անկախությամբ տեղի են ունենում Արևելքի ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները: Հարկավոր է տարբերել Լացիոնալիզմի տարբեր մեներ: Կա ուրիշ ժողովուրդներին ճնշող ազդերի Լացիոնալիզմ և կա շահագործվող, ճնշվող ազգի Լացիոնալիզմ, որը ճգտում է իր ժողովրդի տնտեսական և քաղաքական ազատությանը, նրա անկախության ամրապնդմանը: «Ճնշված ազգի յուրաքանչյուր բուրժուական Լացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակությունը և ընդդեմ ճնշման, և Ռենց այդ բովանդակությունն է, որ մերքե անապայման պաշտպանում ենք»: 5

Այս տեսակետից քրդական ազգային-ազատագրական շարժումներն հանրիստանում են Արևելքի ժողովուրդների ընդհանուր համադեմոկրատական պայքարի մի մասը, և նրանց այդ բնույթը չի փոխվել որոշ նեղ ազգային եղանակների հետևանքով: Հասկանալի էրկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ շարժումների համար բնորոշ է եղել է առավել սերտ մտնելուը և միասնական պայքարը ավայ երկրի ժողովուրդների հետ ներքին և արտաքին տեսցիկայի դեմ: Բրդական հասարակայնության լայն խավերում գեալով ավելի ամրապնդվեց այն համու-

3 Յ. Մ. Ա. Ք. Ք., Կյուրստան ուն շրաւո Կյւրմ. Երբրտ. 1945 թր. 19.

4 Եսիք սեղան.

5 «Աքսում», 12 սպտեմբեր 1960թ.

6 «Վատ», 30 սպտեմբեր 1960թ.

7 Վ. Բ. Լ. Ա. Ք. Ք., Երկր, Կուր. 20, Երևան, պետրատ, 1960, էջ 323.

մունքը, որ բոլոր ժողովրդի ազգային նպատակների իրականացումը հնարավոր է միայն տվյալ երկրի ժողովրդի հետ համատեղ հակամարտության միջոցով:

Ընդդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների հետ կապված մի շարք պրոպեդանդա են այսօր կարող են պատշաճ յուսաբանանա: Արգելափակող քրեականները հատկապես վերջին տարիներին դգայի աշխատանք են կատարել այդ ուղղությամբ, սակայն քննադատել ամամբ մեծ աշխատանքը դեռևս առջևում է: Իսկ արտասահմանում քրեական հարցի շարքը լույս տեսած գրականությունը փարձեր չէ մի շարք ինտեսներին: Փոքրիսի և Իրանի սեանկցին թարծուական պատմագրության մեջ ամուսարակ անտեպում է քրդերի՝ որպես ինքնուրույն ժողովրդի գոյության փաստը, և դրա հիման վրա սկզբնորոշ է ներկայացվում դեմոկրատական, ազատագրական յուրաքանչյուր շարժում, որի նպատակն է քրդերի ազգային իրավունքների ճանաչումը: Արևմտյան թարծուական պատմագրությունը քրդական ազգային-ազատագրական շարժումները դիտում և գնահատում է, այն տեսանկյունից, թե դրանք որքանով են շրջափում ինքնիշխանական տերությունների շահերը:

Անգլիական պատմաբան Լեյպիգը, օրինակ, իր «Իրաքը 1900—1950 թթ.»⁸ աշխատության մեջ խնդրաբարձում է 1919 թ. Իրաքում ծավալված քրդական ազգային-ազատագրական շարժումները: Նա այդ շարժումների պատճառները հանդիսանում է դրանց ղեկավարների «անհնական փառք մեք քերելու ճգտանք»: Նույնպիսի գնահատական է տրված Իրաքում ծավալված քրդական ազգային-ազատագրական շարժումներին նաև Լենգրիգի և Սաունդսի «Իրաք» աշխատության մեջ⁹: Հիշյալ աշխատություններում սխալ են մեկնաբանվում քրդական ազգային-ազատագրական շարժումներին վերաբերող բազմաթիվ հարցեր, միաժամանակ անտեսվում, կամ զիսակործին յուրյան է

⁸ St. Longrigg, Iraq 1900-1950, London, 1955.

⁹ St. Longrigg and Fr. Stoakes, Iraq, London, 1955.

մասնվում և, և երկրիմ քաղաքականությունը, որ արևմտյան տերությունները վարում են քրդական շարժումների նկատմամբ:

Նորագույն ժամանակաշրջանի քրդական ազգային-ազատագրական շարժումների մասին ակզերեն ուշագրավ աշխատություն է գրել սուսբաղեծ պատմաբան Ա. Գավանը¹⁰: Ոչ մեծ ծավալի այդ աշխատության մեջ փորձ է արվում ներկայացնելու քրդական ազգային-ազատագրական շարժման արդի կառաքնկա գարգացման հետևյալները: Սակայն միշտ աշխատության մեջ առաջ քաշված մի շարք հարցեր վիճելի են:

Հնագույնիրական քրդական ազգային-ազատագրական շարժումների պատմությանը նվիրված հետաքրքիր աշխատություն է գրել արտասահմանյան քուրդ հեղինակներից Ալա ադ-Դի Ալադին: «Քրդական ազատությունները և իրաքյան քրդերը» աշխատության մեջ նա քննադատելով ակնարկի ձևով կանգ է առնում 19-րդ դարի երկարոց կեսի և 20-րդ դարի քրդական ազգային-ազատագրական շարժումների փառ: Սակայն, չնայած քրդական ազատություններին վերաբերող հետաքրքիր փաստական նյութի, այդ աշխատությունն ունի մի շարք էական թերություններ: Աշադին որպես ազգային-ազատագրական շարժման ներխուժությունները թերաբարձում է մի շարք այնպիսի գործիչների, որոնք ճիշտ է, ազգությամբ քուրդ են, սակայն, կրթական թիչ են ևն աշխույժում ակնարկի կամ չեն ունեցել այդ շարժումների հետ: Հեղինակը նեղ ազգային տեսանկյունից է մեկնաբանում մի շարք դեպքեր և իրադարձություններ: Աշխատության մեջ ամենատարեքանությամբ թերևս այն մասն է, որ վերաբերվում է բարգանդների ազատագրությանը: Իր թերություններով հանդերձ, Աշադիի աշխատությունը օգնում է ճիշտ պատկերացում կազմելու Իրաքի քրդական ազգային-ազատագրական շարժումների մասին:

Մերձավոր և Միջին արևելքի երկրների նկատմամբ անգլիական կառավարության վարած քաղաքականության հույություն

¹⁰ S.S. Gavan, Kurdistan, Divided Nation of the Middle East, London, 1956.

բացանալող փաստական կուր է պարունակում Մայր Բուրջի «Նավը» և արաբին բաղաբանությունը՝ աշխատությունը¹¹։ Այն աշխատության մեջ թեև թի, բայց հետաքրքիր փաստեր են բերվում այն մասին, թե յորական չլուծված հարցը ինչպիսի կշռակալություն է ունեցել Իրաքի նկատմամբ անգլիական իմպերիալիզմի վարած քաղաքականության մեջ։ Բուրջը միանգամայն ճիշտ կերպով երգում է այն դեղը, որ անգլիական իմպերիալիզմը իր ապրամ-սարսուղիական պլաններում հատկացնում էր հուրդիստանին։

Ռուրջ ժողովրդի հետպատերազմյան ազգային-ազատագրական շարժումների հետ կապված որոշ հարցեր օրինակով կերպով ներկայացված են մի շարք առաջավոր արար մտափորականների աշխատություններում։ Նրանք ողջախոհությամբ կոչ են անում՝ ճանաչել բրդերի ազգային իրավունքները և դրանով իսկ ուժն ազդեցել պայքարը ներքին և արտաքին ռեակցիոն ուժերի դեմ։ 1943 թ. հոկտեմբերին, եգիպտական «Ալ-Հիլալ» ամսագրում արաբական լիզայի գլխավոր քարտուղար Աբդուլ Ռամման Ապվանը գրում էր. «... Երբ նրանց (Իրաքի բրդերի—Շ. Մ.) մասին խոսեց է գնում, իմ մեջ դեպի նրանք առաջացած պայամունքը մրցակցում է այն վզացմունքի հետ, որ ես տածում եմ դեպի արաբները։ Ես չեմ կարող որոշակի ասել, թե դրանցից որն է ուժեղը»¹²։ Արաբ պատմարան Շաքիր Խաթաբը, անդրապատմաբան Իրաքի ազգային-ազատագրական շարժման հետաևակարներին, գրում էր. «Արաբների ազատության համար շարժումը լիարժեք կլինի միայն այն դեպքում, եթա չնոտանաք, որ Իրաքը հանդիսանում է ոչ թե սուկ արաբական, այլ արաբ-բրդական պետություն, և թանկ շարժանկվում է բարեկամությունը արաբների և բրդերի միջև, Իրաքի ազգային-ազատագրական շարժումը անխնայափնիչորեն կարճաժամա քրդական ազգայնականության ջերմ պաշտպանությամբ»¹³։ Արաբ և քուրդ

ժողովուրդները ունեն փոխադարձ բարեկամության և ազգային իդեալների փոխըմբռնման լավ սրբադիցաններ, որոնք հատկապես ցայտուն կերպով դրսևորվեցին այն ժամանակվանից, երբ բաղաբանական գործունեության առաջադեպ իջան կոմունիստական պարտիաները։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրաքի քրդական ազգային-ազատագրական շարժումները քնդուկեցին ավելի կազմակերպված բնույթ և հանդիսացան պայի ներդրում Արեմավոր և Միջին արևելքի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարում։

Իրաքում ծավալված քրդական ազգային-ազատագրական շարժումները հանդիսանում են գուրացիների, բանվորների, մանր արհեստավորների և առաջավոր ինտելիգենցիայի պայքարը քուրդ ժողովրդի ազգային իրավունքների ճանաչման համար։ Այդ պայքարին հարկ են տես նոր պարզացող քրդական ազգային բուրժուազիան, և նույնիսկ՝ որոշ ֆեոդալներ։ Հիմնական շարժիչ ուժը կազմում է գուրացիությունը։ Սակայն բանվոր դասակարգը և առաջավոր ինտելիգենցիան, համեմատաբար փոքրաթիվ լինելով հանդերձ, նոր բովանդակություն և բարձր կազմակերպվածություն են հաղորդում այդ շարժումներին։

Ռուսմասիքիվող ժամանակաշրջանում Իրաքի քրդական ազգային-ազատագրական շարժումները չեն հանդիսացել «սեպարատիստական» շարժումներ։ Դրանք, պատմական ներկա կառույցում, նպատակ չեն դրել հասնել «քրդական անկախ պետության» ստեղծմանը, ինչպես ճգնում են պնդել բուրժուական պատմագրությունը և մամուլը։ Իրաքի քուրդ աշխատավորությունը պայքարում է Իրաքի սահմաններում իր ազգային իրավունքները ձեռք բերելու համար։

Ներկա աշխատության նպատակն է՝ դուրջ տալ քրդական ազգային-ազատագրական շարժումների բնույթը, շարժիչ ուժերը և նրանց տեղը Իրաքի ժողովրդի քնդհանուր հակաիմպերիալիստական պայքարում։

11 Մ. Երյուկ, Եգիպտոսի և Սուդանի քաղաքական, Մ., 1939.

12 Լ. Ռամման, Եգիպտոսի պատմություն, էջ 85.

13 «شكر حسين، الكرد و قضية كردية» ، بغداد 1959

Այդ հարցին նվիրված ամփոփ աշխատություն առաջիկ չկա: Մյուս կողմից այն աշխատությունները, որոնք այս կամ այն շափով շոշափում են Իրաքի քրդերին վերաբերող տարբեր հարցեր, կամ խիստ սակավ կյուրեր են պարունակում, կամ էլ բոլորովին շոշափում են քրդական ազգային-ազատագրական շարժումների խնդիրները: Այսպես, Իրաքի բնակչության սոցիալ-տնտեսական դրությունը վերաբերվող փաստական բազմակետի հարուստ կյուր է պարունակում Ջաֆար Հալաթի «Իրաքյան զուլդը» աշխատությունը, որը 1950 թ. հրատարակվել է Քեյրուսում, իսկ 1953 թ. աստիճան թարգմանությամբ՝ Մոսկվայում¹⁴: Հալաթի աշխատությանը պատշաճը հատուցելով, պետք է նաև նշել, որ այն ունի կական թերություններ: Առաջին հերթին, այդ աշխատությունը հիմնականում ագրարային հարցերին նվիրված լինելով հանդերձ, լուրջյուն է մատնում գյուղատնտեսական շարժումները: Մինչդեռ հայտնի է, որ Օսմանյան կայսրության լծի տակից դուրս գալուց հետո էլ Իրաքում շլուծված մնաց ագրարային հարցը, որը հանդիսանում է արաբական և քրդական գյուղացիական շարժումների հիմնական պատճառը: Երա նու է կապված նաև անգլիական իմպերիալիզմի տիրապետության հետևանքների հարցը, որը նույնպես լուրջյուն է մատնված Հալաթի աշխատությունում: Պատահական չկեր համարում ազգային հարցի շրջանցումը: Հեղինակը Մուսուլի, Էրբիլի, Մուլեյմանեհի, Կիթլուկի գավառների մասին չի խոսում որպես քրդական գավառների, կրա աշխատությունում այդ գավառների բնակիչները ներկայացված են պարզապես որպես «խրաբիներ»:

Իրաքի գյուղացիական մասունների մասը դրություն մասին զգալի կյուր է պատկերավոր անգլիացի գիտնական Գ. Ուոթկինսիի՝ «Հողային տնօրենները Միջին արևելքի երկրներում» աշխատությունը¹⁵: Ուոթկինսը առաջ է արարալային հարաբերությունների պատկերը և տնօրենական այն փոփոխությունները

գյուղատնտեսության մեջ, որոնք հասկանալի վերջին տարիներին տեղի ունեցան, ինչպես Եգիպտոսում և Սիրիայում, այնպես էլ Իրաքում: Բերված փաստական տվյալները վերաբերում են ինչպես Իրաքի արաբական, այնպես էլ քրդական շրջաններին: Ուոթկինսը անզրպարտում է երկիրը տնտեսական փառասիր դրությունից դուրս բերելու մնալավորություններին, սակայն ոչինչ չի առում օտարերկրյա իմպերիալիստական տիրապետության հետևանքների մասին, այնինչ իմպերիալիզմը հանդիսանում էր Իրաքի տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտներից: Նա ոչ մի սոցիալական ուժ չի գտնում, որը կարողանար Իրաքը դուրս բերել հետամնաց փնձակից և արմատական ագրարային տնօրենի փոխարեն առաջադրում է «Հարկային սխտանի տնօրեն»:

Իրաքի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ ոչ շագրով աշխատություն է՝ հայտնի տնտեսագետ Մուհամեդ Ալի Ջարկափի «Իրաքի ազգային տնտեսությունը»¹⁶: Նա կենդան փաստերով ցույց է տալիս, թե ինչպես անգլիական իմպերիալիզմի տիրապետությունը խեղդում էր Իրաքի նոր զարգացող արդյունաբերությունը, պատճառ դառնում մանր նեոստրուկտուրների և տնտեսականների անակազման, արդյունավետ բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Քուրդ մոլոդոլին, կրա ազգային-ազատագրական պայքարի հետևանքներին է նվիրված Յուսուֆ Մալեքի «Քուրդիստանը կամ քրդերի երկիրը» գործակն¹⁷: Մալեքը, խոսելով քուրդ մոլոդոլիցի ազգային անկախության հարցի մասին, գրում է, «Քուրդ այն պետությունները, որոնք մինչև առաջին համաշխարհային պատերազմը գտնվում էին Օսմանյան կայսրության կազմում և պատր որոշ չափով ինքնուրույն և անկախ են, ճգնում են օտարերկրյա տիրապետությունից լրիվ ազատագրվել: Մինչդեռ նույն այդ մասնակ իրենք տիրապետում են Քուրդիստանին և

14 Д. ж. Х а й а т, Иракский террон, М., 1951.

15 Д. У о т к и н с и, Земельная реформа в странах Ближнего Востока (Египет, Сирия, Ирак), М., 1958.

16 М. А. Ж а р к а ф и, Национальная экономика Ирака, 1949 (И. А. ИСААФ СССР, ф. 449, т. 2, кн. 4199).

17 И. М а л е к и, Курдистан или страна курдов, Бейрут, 1947.

նրա ժողովրդին¹⁸: Մանրը ընդհանուր մեծ դանակ է ատուժ առաքին համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած քրդական ազգային-ազատագրական շարժումների վրա: Հոդհանրապես օրվելով՝ ընդհանուր մեծ դանակը թուրք ժողովրդի պայքարը ազգային ինքնուրույնության համար, եւս միանգամայն սխալ է բացահայտում արևմտյան, նատիապես անգլիական իմպերիալիզմի՝ քրդական ծարրի նկատմամբ զսպման դիրքը:

Մեր աշխատությունում քննարկված հարցերի հետ այս կամ այն կերպ առնչվում են սովետական հեղինակներից Գ. Մրուկու «Իրաքը խոտմահույց ժամանակաշրջանում»¹⁹, Բ. Ղանգիզի՝ «Իրաքը անցյալում և ներկա ժամանակ»²⁰, Ա. Միլոզետովի և Ֆ. Սեյիուլ-Մուլլաովի՝ «Իրաքը երկև և այսօր»²¹, Ի. Անիկի՝ «Իրաք»²², Ամինովի և Մուլիմանի՝ «Իրաք»²³, Օ. Տուգանովաի՝ «ԱՄՆ-ի և Անգլիայի քաղաքականությունը Մերձավոր և Միջին արևելքում»²⁴ աշխատությունները:

Այս բոլոր աշխատությունների համար բնորոշ է երկու հանգամանք, եւսի՝ նրանցում Իրաքյան Բուրժուատանի և քրդական ազգային-ազատագրական շարժումների մասին խոսվում է հարևանցիորեն, քանի որ այդ հեղինակներից և ոչ մեկի խեղճ մեջ չի մտել Բուրժուատանի աշխատավորության սոցիալ-տնտեսական կյանքի և քրդական ազգային-ազատագրական շարժումների լուսարանումը, երկրորդ՝ ինչպե՛ս հեղինակների աշխատությունները միմեկանում չեն համընկնում մեր աշխատությունում ընդգրկված ժամանակաշրջանին:

Ներկա աշխատության երկրորդ զգալի մասը վերցված է արխիվներից, ինչպես նաև սովետական և հասկապես արտասահմանյան մամուլից:

¹⁸ Նույն անգամ, էջ 8:

¹⁹ Բ. Մրուկու, *Ирак в смутное время*, М., 1931:

²⁰ Б. Дзанин, *Ирак в прошлом и настоящем*, М., 1960:

²¹ С. Миловилов и Ф. Сейфулла-Муллаев, *Ирак вчера и сегодня*, М., 1959:

²² И. Антик, *Ирак*, М.-Л., 1936:

²³ Смирнов и Сулейман, *Ирак*, Тбилиси, 1934:

²⁴ О. Туганова, *Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке*, М., 1962:

ՔՈՒՐԳ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ԵՐԿՐՈՐԳ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀՆՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական կայսրությունը քայքայվեց: Նոր իրաքյան պետության մեջ, որը գտնվում էր Անգլիայի ազդեցության ոլորտում, քրդական հարցն իր լուծումը չտաացավ: Իրենց ազգային իրավունքների ճանաչմանը հասնելու համար թուրք աշխատավորները շարունակեցին պայքարը Իրաքի սեռակցիոն կառավարության և անգլիական իմպերիալիզմի տիրապետության դեմ: Այդ պայքարը զարգացման նոր էտապ մտավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Իրաքյան, կամ Հարավային Բուրժուատանը, որը վարչականորեն կազմված է Մոսուլի, էրբիլի, Կիրկուկի և Սուլիմանիեի լիվաններից, տարբերվում է երկրի մյուս շրջաններից: Սակայն, թուրք աշխատավորությունը ընդհանուր առմամբ գտնվել է

նույնպիսի ճնշման տակ և ենթարկվել նույնպիսի զրկանքների, ինչպիսին՝ արար աշխատավորությունը:

Բրիտանական իմպերիալիզմը ոչ միայն խոչընդոտում էր Իրաքի տնտեսական զարգացումը, այլև պաշտպանում էր իր տիրապետության նենարան հանդիսացող սեակցիան ֆեոդալա-վաշխատական վերախաղվին: Ազգային իրավազրկությունը և հալածանքը, միաձուլվելով սոցիալական ծանր դրուժյան հետ, առանձնապես անտանելի էին դարձնում քրդական հասարակայնության ամենարագամամարզ գաստիարգի՝ գյուղատնտեսության դրությունը:

Գյուղատնտեսության մեջ շարունակում էին մեծ դեր խաղալ ֆեոդալա-նահապետական հարաբերությունները, երբ մի կողմից գոյություն ունեւր ֆեոդալական խոչոր հողատիրություն, մյուս կողմից՝ հողագուրկ կամ սեկսիաճող ազրբա գյուղացիական զանգվածներ, գյուղատնտեսական արտադրամիջոցների ցածր մակարդակի հետ: Իրաքի գյուղական հասարակության օտումնասիրությունը, — գրում է Ջաֆար Հալալբը, — ցույց է տալիս, որ իրաքյան գյուղերի սոցիալական հարաբերություններում մինչև այժմ գեոես պահպանված են նախնազարյան հողագործական համայնքի տարրեր՝ ֆեոդալական հարաբերությունների տիրապետությանը հանդերձ¹:

Ինչպես Իրաքի հարավային և միջին շրջաններում, այնպես էլ Քուրդիստանում հակայական թվով գյուղացիներ կամ հողագուրկ էին, կամ էլ ստեհին անբերբի հողեր: Կալվածատերերը կազմում էին բնակչության մեկ տոկոսը, բայց նրանց բաժին էր բնկած 75 տոկոսը, այն էլ՝ ամենաբերբի հողերը²:


Այն ժամանակ, երբ կարելի էր մեքենայական աշխատանքի օգտադործման շնորհիվ մեծ շափով ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Իրաքի գյուղատնտեսության մեջ շարունակում էին գործածվել ամենապրիմիտիվ արտադրագործիքներ, Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1945—1952 թթ. զնվել են թվով շնչին հետևյալ գյուղատնտեսական մեքենաները³:

Տարեթիվ	արակոսը	գու. թան	կու. յարկատոսը	(կամայն՝ 1945 = 100%)
1945	134	115	31	12
1946	69	40	65	30
1947	94	110	8	35
1948	84	65	36	53
1949	73	119	39	87
1950	167	146	46	98
1951	54	78	43	98
1952	105	74	45	96

¹ „Проблемы мира и социализма“, 1959, № 4, стр. 57.

² „Government of Iraq. Statistical abstract 1952“, Baghdad, 1954, p. 222.

³ Дж. Халил, «Երկամ աշխ.», էջ 54.



Ի՞նչն հաշվի առնենք այն հանգամանքը, որ անհրաժեշտ պահեստամասերի քայքայությունը հետևանքով գյուղատնտեսական մեքենաներն աշխատում էին ոչ երկար ժամանակ, ապա պարզ կդառնա, որ վիճակը մնում էր անմխիթար, աշտինքն, ամեն տարի ստացվող նոր մեքենաները փաստորեն փոխարինում էին արդեն ժամանակից շուտ շարքից դուրս եկածներին:

Գյուղատնտեսական արտադրամիջոցների ցածր մակարդակի հետևանքով Իրաքում հսկայական հողատարածություններ չէին մշակվում: Այդ վերաբերվում էր մեծ մասամբ նաև Քուրդիստանին: Շաքիր հասրակը բերում է հետևյալ տվյալները քրդական զավառների մասին⁴:

Գավառ	Հողերի ընդհանուր թիվը	Յանտի ցածրագույն թիվը	Յանտի հողատարածությունների հարաբերությունը
Սուլեյմանիե	9552	3551	37 %
Էրբիլ	18170	4557	25 ..
Կերկուկ	20376	5743	28 ..
Մոսուլ	29770	29058	98 ..

Այդ տվյալներից երևում է, որ քայքայության մոտավոր Քուրդիստանի մնացած երեք զավառներում, շուրջ գյուղացիական հոծ մասաների հո-

ղադուրի լինելուն կամ սակավահողությանը, ցանրերի տակ էին գտնվում հողերի միայն 25—37 տոկոսը: Մեկնարկություններն արդեն ավելորդ են:

Քուրդիստանի գյուղացիության դրությունը վատանում էր նրանով, որ ցանքատարածությունների հսկայական մասը չէր ոռոգվում և այդպիսով, բերքատվությունը կախված էր տեղումներից: «Քուրդ գյուղացին,— գրում է Շաքիր հասրակը,— մշտապես տարերային աղետների է ենթարկվում ավելի շատ, քան արաբ գյուղացին: Նա ֆինանսական միջոցների և հացահատիկի կարիք ունի և գտնվում է մշտական պայտերի տակ⁵: Իրաքի քրդական շրջանները տալիս են այնպիսի կուլտուրաների բացարձակ մեծ տոկոսը, ինչպիսիք են խաղողը, ծիրանը, զեղձը, սալորը, նուռը, խնձորը, ծխախոտը, բամբակը, բրինձը, կաշիներ: Գրանց բերքատվությունը մեծապես կրածրանար, եթե օգտադրծվենք ոռոգման և տեխնիկայի արդիական միջոցներ:

Իրաքյան Քուրդիստանում առավելագույն տիրապետող էր մանր հողատիրությունը: 1952 թ. Իրաքում անցկացված հաշվառումը ցույց տվեց հետևյալ պատկերը: Բազմադիր զավառում եղած հողակտորների թիվը 3823 էր և նրանց միջին չափը հավասար էր 102 հեկտարի: Սուլեյմանիեում համապատասխանաբար՝ 17628 և 110, Կերկու-

⁴ Նշված աղբ. էջ 25 شکر خاکی

⁵ Նույն տեղում:

կում՝ 7409 և 118, Մունթաֆիրում՝ 2502 և 177, Քուֆում՝ 1531 և 272, իսկ Ամարալում այն հասնում էր սեկորդային թվի. ամբողջ լիվալում կար 483 հողատեր և նրանց միջին շափր հասնում էր 1721 հեկտարի⁶: Բերված թվերը խոսում են այն մասին, որը բացառությամբ Բաղդադի լիվալի, արաբական մյուս բոլոր շրջաններում հողաբաժինների միջին շափր անհամեմատ շատ ավելի մեծ էր, քան Քուրդիստանում: Գ. Ուորինբերը այդ հարցի մասին գրում է. «Մուսուլի մի խոշորագույն հողային սեփականատեր ունի 20 գյուղ, որը տարածությամբ մոտավորապես հավասար է 20 հարյուր գեոնում հողի (1 գեոնումը = 1/4 հեկտարի), երկրի հարավային մասում նրա տիրույթը չէր համարվի շատ խոշոր»⁷: Այսպես ուրեմն, անվիճելի է, որ Քուրդիստանը աչքի է բնկնում առավելապես մանր հողատիրությամբ:

Սակայն, հարկավոր է նշել մի կարևոր հանգամանք. արդյոք նման իրավիճակը չի նշանակում, որ Քուրդիստանի գյուղացիական հիմնական զանգվածները ազատված են գոնե նվազագույն չափի հողատարածությամբ: Ոչ, չի նշանակում: Ինչպես ևսարակի, այնպես էլ Հայասթի կողմից բերված «միջին» թվերի ետևում թաքնված է քրդական գյուղի իսկական պատկերը: Աղբյուրների ուշադիր ու-

սումնասիրությունը ցույց է տալիս, որ «միջին» անասնությունների զգալի մասը կուպակային անասնություններ են, որոնք օգտագործում են հողազուրկ գյուղացի բաղադրիչի աշխատանքը:

Պետք է նշել նաև մի ուրիշ հանգամանք. նույն չափի հողատարածություն ունեցող գյուղացիական անասնությունների գրույթյան մեջ ևս կա զգալի տարբերություն՝ կապված հողատարածության պիտանիության հետ: Ոռոգման ցանցի անբավարարության և հողամշակույթյան այլ միջոցների բացակայության հետևանքով բավական մեծ հողատարածություններ փաստորեն չեն մշակվում, այն դեպքում, երբ հսկայական թվով գյուղացիներ մնում են հողազուրկ: Արևմտագերմանական «Բնդուստրի կուրիրներ» թերթի հարդրգման համաձայն «Իրարում մշակվում էր հողատարածությունների 25 տոկոսը: Իսկ բնակչության յուրաքանչյուր շնչին (1956 թ.) բնկնում էր պիտանի հողատարածության 6,2 մուշարը (1 մուշարը = 1/4 հեկտարի)»⁸:

Քուրդիստանի գյուղատնտեսության համար մեծ շարիք են վնասատուները, որոնց դեմ արդյունավետ պայքար չի մղվում:

Իրաքի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: 1952—1953 թթ. տվյալներից երևում է, որ քրդական չորս գավառներում հիմնականում պահում են ոչխար և խոշոր եղջյու-

⁶ Statistical abstract, Baghdad, 1956, p. 81.

⁷ Ա. Սօրսոբ, Նշված աշխ., էջ 211.

⁸ Industriekurier, 6 սեպտեմբերի 1956 թ.

րավոր անասուններ: Բավականին մեծ թիվ են կազմում նաև ձիերը: Գծրախտաբար, մեր ձևուքի տակ շկան կոնկրետ թվեր այն մասին, թե միջին հաշվով որքան անասուն ունի յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն, սակայն կարելի է ենթադրել, որ ինչպես հողատիրության, այնպես էլ տնտեսագահության բնագավառում բնականաբար գոյություն ունի համանման բևեռացում: Հնարավորությունները շատ անբավարար չափով են օգտագործվում անասնագահության զարգացման համար: Արոտավայրերը չոր են, մշտապես զգացվում է ջրի պակաս: Հարմարավետ անասնագահական շենքերի և այլ պայմանների բացակայության հետևանքով անասունների անկումը տարեկան ներքևին հասնում է ընդհանուր զխաբանակի 50 տոկոսին: Պարզ է, որ այդ կարգի կորուստներն ատանձնապես կործանարար են միջին և շրավոր գյուղական տնտեսությունների համար:



Հողատիրության հիմնական ձևերն էին «թափու»-ն և «լլաղմա»-ն: Քրդական շրջաններում տիրապետող էր հիմնականում «թափու»-ն, որը մտցրել էին թուրքական իշխանությունները, երբ Իրաքը գտնվում էր օսմանյան տիրապետության տակ: Հողն անժամկետ սրվում էր արենդով, սակայն, ժամանակի ընթացքում խոշոր սեփականա-

տերերն իրենց էին ամրացնում այդ հողերը և դառնում դրանց իսկական տերը: Հողատիրության «լլաղմա» ձևով, որը մտցվել էր Իրաքի կառավարության կողմից, «թափու»-ի նման՝ պետական հողերը անժամկետ վարձակալման էին սրվում կալվածատերերին: Բայց այդ «վարձակալումը» ձեռնարկ էր: Կալվածատերերը, իրենց հերթին այդ հողերը վարձակալման տալով գյուղացիներին, մեծ շահույթ էին ստանում: Այդ բանը օրինակալացվեց 1932 թ. երբ իրաքյան կառավարությունը հրաժարվեց «թափու» և «լլաղմա» հողերի դիմաց փոխհատուցում ստանալուց:

Իրաքում հողային հարցը սրվեց հատկապես վերջին տասնամյակների ընթացքում, երբ սկսեցին հող ձեռք բերել քաղաքային անտարականները և օտարերկրացիները: Հաճախ անգլիական պաշտոնատարները, որոնք աշխատում էին Իրաքում և ստանում բարձր աշխատավարձ, շահավետ էին համարում հողեր գնել և շահագործել գյուղացիների աշխատանքը:

Մեծ չափերի էր հասնում հողը գյուղացիներին վարձակալությանը տալու պրակտիկան: Ստացվող բերքից գյուղացու բաժինը կախված էր սահմանված պայմաններից: Դրանք տարբեր էին Իրաքի տարբեր շրջաններում: Ամբողջ բերքը բաժանվում էր հողատիրոջ և վարձակալողի միջև: Այսպես, Քուրդիստանում հողատերը իրավունք ուներ գյուղացուց վերցնելու տեխնիկական կուլտուրաների

(բամբակ, ծխախոտ՝ առաջին հերթին) բերքի կեսը և հացահատիկային կուլտուրաների տասներորդ մասը⁹։

Քննարկով ավելի լայն տարածում էր գտնում վարձակալման այնպիսի պրակտիկան, նոր գյուղում ապրող հողատերերը տեղափոխվում էին քաղաք, իրենց կալվածքի և անտեսության կառավարումը «կառավարիչներին» թողնելով։ Նշելով, որ այդպիսի պայմաններում շահագրգռվածություն չկար բարձրացնելու հողի բերքատվությունը, անպիտան էր «Ով էլ ուզում է լինի, ամենից առաջ նա (իրաքցի հողատերը—Շ. Մ.) ձգտում է որքան կարելի է շատ օգուտ ստանալ՝ նվազագույն ծախսեր կատարելով։ Ի հակադրություն այն երկրների հողատիրոջ, որտեղ բանվորական ուժը թանկ է, նա (հողատերը—Շ. Մ.) շահագրգռված չէ արտադրողականության բարձրացմամբ, քանի որ աշխատանքի վարձը ուղիղ համեմատական է բերքին։ Բացի այդ, հողը նրա համար ոչինչ չարժե, քանի որ նա ոչ արենդավարձ, ոչ էլ հողային հարկ չի վճարում, դրա համար էլ շահագրգռվածություն չունի հողային մեկ միավորից մաքսիմալ բերք ստանալու»¹⁰։

⁹ Д. Ж. Хайят, *Եղված աշխ.*, էջ 37։

¹⁰ New states men and nation, 19 հունիսի 1954թ.

Հողագուրկ գյուղացիների բանակը ավելանում էր ի հաշիվ հողը նոր կորցրած գյուղացիների, որոնք սարկական պայմաններով կամ վարձակալում էին հողը, կամ էլ առհասարակ թողնում էին գյուղը և մեկնում քաղաք՝ ապրուստ հայթայթելու։

Ընդհանրապես Իրաքում և Իրաքյան Քուրդիստանում հողային հարցի սրությունը ակնհայտ փաստ էր։ Հնդկական «Քայմա Օֆ Ինդիա» թերթը նշում էր. «Իրաքում հողատիրության քեևացումը ամենամեծն է Արևմտյան Ասիայում, զույգ ամենամեծը՝ ամբողջ աշխարհում։ Գյուղացիների 88% տիրում են հողի 7%-ից էլ պակասին։ Մնացյալ հողը պատկանում է պետությանը, սակայն այդ հողը նրա կողմից տրված է մոտ հազար շեյխերի, որոնք վերահսկում են պառլամենտը և կառավարությունը»¹¹։

Իրաքի կառավարությունը երբեմն փոխառություններ էր բաց թողնում գյուղատնտեսության ֆինանսավորման համար։ Ընդունելի պայմանների առկայության զեպրում, գյուղացին կարող էր այն օգտագործել գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար։ Սակայն, ստացվում էր բուրբոլին այլ պատկեր։ 1946 թ. օրինակ, որպես գյուղատնտեսական փոխառություն բաց թողնվեց 255.222 դինար։ Զաֆար Հա-

¹¹ „The Times of India“, 26 սպետեմբ 1956թ.

յաթի բերած ավայններից երևում է, որ յուրաքանչյուր ստացողի փոխառության միջին գումարը կազմել է 250—300 դրնար: Տնտեսագետ Մուհամեդ Ալի Զարիկաթի հաշվումների համաձայն «պատերազմի նախօրյակին Իրաքի գյուղացիների մեծ մասի տարեկան եկամուտը չէր անցնում հիսուն դրնարից»¹²: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում գյուղացին չէր կարող օգտվել այդ փոխառությունից, որովհետև այն գերազանցում էր նրա մի քանի տարվա եկամուտը՝ միասին վերցրած:

Ինչպես արար, այնպես էլ բուրդ գյուղացիները վերը նշված եկամուտով էին կարողանում պահել իրենց գոյությունը: Որպեսզի պահպանեն իրենց ընտանիքների գոյությունը, յուրաքանչյուր ձմռանը գյուղացիները շեյխին, կուլակին կամ վաշխառուին շեյխն գներով վաճառում էին իրենց հողակտորի հաջորդ տարվա բերքը «արմատի գրա»¹³: Երբ գալիս էր բերքահավաքի ժամանակը, գյուղացին հատուցում էր պարտքը, և այսպիսով, նորից ստիպված զիմում կալվածատիրոջը կամ վաշխառուին: «Շապիվ թև գտնվեր մի գյուղացի, որ կարողանար երբևէ ազատվել անվերջ պարտքերից»¹⁴:

Խոսելով այն անտանելի սոցիալական պայմանների մասին, որոնց մեջ գտնվում էր Իրաքի գյուղացին, Զարիկան գրում էր. «Մեր գյուղում գյուղացիների ճնշող մեծամասնությունը, գտնվելով ֆեոդալների անմիջական իշխանության տակ, չի ստանում իր ֆիզիկական գոյությունը պահպանելու անհրաժեշտ նվազագույնը: Նրանք աշխատում են անհավատարի դժվար պայմաններում, ոչ մի մարդկային էներգիա ի վիճակի չէ հաղեցնելու գյուղական երեցի և շեյխի ազատությունը, նրանց ծաբավք գեպի շահունջներ»¹⁵:

Ֆեոդալական հարաբերությունների տիրապետության մասին խոսելիս, չի կարելի չնշել այն փաստը, որ գյուղատնտեսության մեջ միաժամանակ ուղի էր հարթում նաև բուրժուական արտագրանդանակը: Հարուստ հողատերերը, շեյխերը սկսում էին շուկա հանել իրենց սեփականությունը կազմող գյուղատնտեսական միջոցները, առանձնապես արժավք, գարին, քամրակը և այլն: Գրանով սկսվեց հողաուրկ գյուղացու վարձու աշխատանքի շահագործումը:

Հետպատերազմյան տարիներին, զգալի տեղաշարժ կատարվեց գյուղատնտեսության մեջ. հատկապես Քուրդիստանում աճեց հասցահատիկային կուլտուրաների արտադրությունը: Մոսուլի և Կիրկուկի գավառներում ցորենի արտադրությունը

¹² ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1190, л. 16.

¹³ նույն տեղում:

¹⁴ նույն տեղում:

¹⁵ ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1190, л. 17.

կրկնապատկից, կազմելով ամբողջ Իրաքի ցորենի արտադրութեան կեսից ավելին¹⁶։

Սակայն գյուղատնտեսական արտադրանքի ավելացումը ոչնչով չէր թեթևացնում գյուղացիութեան տնտեսական վիճակը։ Ընդհակառակը, կապիտալիստական հարաբերությունները, միախառնվելով ֆեոդալականի հետ, ավելի էին ծանրացնում գյուղացիական դանդաղածների դրութիւնը։ Հողատերերի և գյուղացիների տնտեսական փոխհարաբերությունների մեջ գնալով մեծ դեր էր խաղում դրամը, իսկ դա նոր հնարավորություններ էր տալիս վաշխատուներին գյուղացիների վերջին ունեցվածքը քամելու համար։ Ֆեոդալական նատուրալ տնտեսությունը աստիճանաբար փոխում էր իր բնույթը, ֆեոդալները, հողատեր շէյխերը ավելի ու ավելի հաճախ էին բնամթերքի փոխարեն դրամ ստանում գյուղացիներից։

Իրաքի գյուղացին կրում էր նոր, բուրժուական շահագործման լուծք, շաշատվելով ֆեոդալականից։ Այս կապակցությամբ տեղին է հիշել Մարքսի խոսքերը, որոնք բերված են Վ. Ի. Լենինի կողմից նախառնելուցիս Ռուսաստանի գյուղացիութեան գրութիւնը բնութագրելու համար. այն, որ նման պայմաններում գյուղացիները «տառապում են և կապիտալիզմից, և կապիտալիզմի ոչ բավական

նաշափ զարգացումից»¹⁷։ Այդպիսին էր նաև Քուրդիստանի գյուղացիութեան վիճակը, որովհետև, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, այնտեղ էս գնալով ավելի շատ նկատելի էր դառնում կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը գյուղատնտեսութեան մեջ։

Գյուղացիների շահագործման նոր միջոց հանդիսացան ջրապումպերի օգտագործումը, որը շահութիւններ էր բերում խոշոր հողատերերին։ Քուրդիստանի այն հողերում, որոնք սոսոզվում էին պոմպերի միջոցով, հողատիրոջ բաժինը հասնում էր համարաան բերքի 50%-ին։ Իսկ շոտոզվող հողատարածություններում վարձավճարների մակարդակը ցածր էր, տատանվում էր ¼-ից մինչև ⅓-ը¹⁸։ «Ֆեյլահները, անոզք կերպով հետապնդելով իրենց հողատերերի կողմից... գնում են քաղաքները և նավթարդյունաբերութեան կենտրոնները, սակայն նրանցից շատերը մնում էին առանց աշխատանքի և վարում են կիսաբազց գոյություն»¹⁹։ Իսկ աշխատող բանվորների դրութիւնը վատանում էր նրանով, որ մինչև նրանց աշխատավարձը մնում էր նույնը, ապրանքների գները գնալով բարձրանում էին։ «Կյանքի արժողութիւնը, — գրում էր անգլիական «Փայմս» թերթը, — 1939 թ.

¹⁶ Նույն տեղում, թ. 20։

¹⁷ Լենին, Երկեր, հատ. 3, էջ 781։

¹⁸ The Times, 12 մայիսի 1938թ.։

¹⁹ Նույն տեղում։

սկսած աճել է 700 տոկոսով, իսկ աշխատավարձի աճը չի հասնում նրան»²⁰:

Սակայն բանվորների համար ամենատարափելիին գործազրկությունն էր: Յզավելով աշխատուժի առկայությունից, ձեռնարկատերերը հաճախ կամայականորեն աշխատանքից վտարում էին բանվորներին և նրանց գցում անտեսական ծանր դրություն մեջ: «Գործազրկության ծանր հետևյալները, — գրում էր Մուհամեդ Չարիան, — շուտենն իրենց սահմանը: Քշվառությունը աճում է գործազրկության ժամկետի երկարացման և գործազուրկների թվի ավելացման լափով»²¹:

Աշխատանքային ծանր պայմանները, անբավարար սնունդը, բժշկական օգնության անմխիթար վիճակը հանդիսանում էին Քուրդիստանում տարածված հիվանդությունների հիմնական պատճառը: Չնայած բարձր ծննդաբերությանը, Քուրդիստանի բնակչության աճը խիստ դանդաղ էր, քանի որ մահացության տոկոսը, հատկապես երեխաների՝ բարձր էր: 1953 թ. Սուլեյմանիեի զավառում ծննդաբերության մակարդակը կազմում էր 2,3, իսկ մահացությանը 3,3%, էրբիլի զավառում համայատաախտանքար՝ 2,9 և 2,8%, Կիրկուկի զավառում՝ 5,5 և 2,6, Մոսուլի զավառում՝ 16,9 և 8,8%: Անդրադանալով Քուրդիստանում մահա-

ցության բարձր տոկոսին, Խասրակը գրում է. «Բնակչության մեծ մասը ունի ցածր եկամուտ, որը տարեկան չի գերազանցում 60 դինարից: Ահա թե ինչն է այդպիսի բարձր մահացության մակարդակի պատճառը»²²:

1951 թ. ամբողջ Իրաքյան Քուրդիստանը սպասարկում էր 130 բժիշկի և կար ընդամենը 23 հիվանդանոց²³, սակայն զրանք էլ հավասարաչափ չէին բաշխված, հիմնականում կենտրոնացված էին քաղաքներում և վարչական կենտրոններում: Գյուղական շրջաններում համարյա բացակայում էր բուժ. սպասարկումը: Օրինակ, Սուլեյմանիեի ամբողջ զավառում ընդամենը կար 10 բժիշկ, սակայն զրանցից երեքն էին միայն աշխատում գյուղական վայրերում:

Իրաքյան Քուրդիստանում նույնպիսի անմխիթար վիճակում էր նաև կրթության և լուսավորության գործը: Պատկանելի թիվ էին կազմում այն զպրոցահասակ երեխաները, որոնք չէին կարողանում ուսում ստանալ, զպրոցների բացակայության և անտեսական վտաճար պայմանների պատճառով: 1952 թ. Սուլեյմանիեի զավառում զպրոց չէին հաճախում 179.937, էրբիլի զավառում՝ 186.203, Կիրկուկի զավառում՝ 214.980 և Մոսուլի զավառում՝ 375.064 երեխա²⁴, Բացակայում էին քաղա-

²⁰ «The Times», 14 մայիսի 1948 թ.

²¹ ЦГАОР СССР, ф. 4459, он. 2, ед. хр. 1190, л. 34.

²² Եզված աշխ., էջ 32. شکرستیمت

²³ Նույն տեղում:

²⁴ ЦГАОР СССР, ф. 4459, он. 2, ед. хр. 1180, л. 46.

կանաչափ պատրաստված ուսուցչական կադրերը՝ Մշտայեւս զգացվում էր գասազրբերի պակասը։ Ուսուցումը միայն տարրական դպրոցներում էր կատարվում քրդերեն լեզվով, իսկ միջնակարգ դպրոցներում՝ արաբերեն։ Քրդերեն լեզվի այդպիսի անաւետուճ հանդիսանում էր Իրաքի կառավարության և անգլիական իմպերիալիզմի խտրական քաղաքականութեան արատահայտութեաններէն։



Անգլիական իմպերիալիզմը Իրաքում և Քուրդիստանում վարում էր զազոտմային քաղաքականութիւն։ Քրդական փոքրամասնութեան ազգային իրավունքները ստահարվում էին ամենուրեք։

1933 թ. փետրվարի 15-ին, Իրաքի անգլիական գերագույն կոմիտար Հենրի Գորթը հայտարարում էր. «Մեզ չհաջողվեց լուծել հողատիրութեան պրոբլեմը... Ամեն իրոպէ կարող է բռնկվել ազգաբախին ռեալուցիան, որի հետ, հնարավոր է, իրաքյան բանակը ի վիճակի չի լինելու հաշիվ տեսնել։ Հաշիվ թէ պետութեան և քաղաքային հողատերերի շահերը թույլ տային գնալ գնպի ազդարային պրոբլեմի արդարացի լուծումը... Ասորիների մեջ զժգոհութիւն է տիրում... Մշտս կրմից քրդական հարցը համարյա անլուծելի է մնացել... Օթէ քրդերի պահանջները այս կամ այն կերպ չբա-

վարարվեն, քրդերի ապստամբութիւնը կգանձաւսխուսափելի...»²⁵։

Անգլիական կառավարութիւնը մտադիր չէր այս կամ այն կերպ աշակցել քրդերի ազգային իրավունքների ճանաչմանը, որովհետեւ քրդական շուտված պրոբլեմի առկայութիւնը ձեռնառու էր նրան։ Գրավելով Մոսուլի շրջանը, 1920-ական թվականներին անգլիական իմպերիալիստները աշխատում էին քուրդ բնակչութեանը հրահրել արաբական ազգային-ազատագրական շարժման գնմ²⁶։ Հաշիվ տանելով քրդերի զժգոհութիւնը ինչպէս թուրքական, այնպէս էլ իրաքյան կառավարութեանից, անգլիացիները մի կողմից ձեռնում էին քրդերի անկախութեան կողմնակից, մշտս կողմից, քրդական շարժումները պատրվակ օդտազործելով ձեռնում էին գործադրում Իրաքի կառավարութեան վրա, արդարացնում անգլիական գնմված ուժերի ներկայութիւնը Իրաքում։ Անգլիական կառավարութեան այդ քաղաքականութեան մասին Մալքը Բրուքսը գրում էր. «Քրդերի թշնամական վերաբերմունքը Իրաքի նոր կառավարութեան նկատմամբ որոշ շափով ձեռնառու էր Անգլիային։ Դա հանդիսանում էր հիշեցում ֆեյսալին և նրա բարեկամներին, որ անգլիական սուլթան-օղային ուժերը միանգամայն անհրաժեշտ էին լեռնային

²⁵ Անգլերումն ըստ Сулейман и Смирнов Ирак, стр. 79.

²⁶ „Революционный Восток“, 1935, №4, стр. 43.

ազգութիւններին հպատակութեան մեջ պահելու համար, որ Անգլիան կարող էր հակվել դեպի բրդերին անկախութեան տալու կողմը, եթէ Իրաքը շարժակցի բրիտանական կառավարութեան հետ: Իհարկե, բրիտանական գիվանագետները չէին կարող լրջորեն մտածել ավտոնոմիա ստեղծելու մասին այնպիսի կարևոր շրջանում, ինչպիսին էր Մոսուլը²⁷: Անգլիական իմպերիալիստները զործում էին «Բաժանիր, որ տիրես» սկզբունքով:

Իրաքյան բրդերը խոստումներից բացի ոչինչ չստացան անգլիական իմպերիալիզմից: 1918 թ. նոյեմբերի 8-ին անգլիական և ֆրանսիական կառավարութիւնների հանրահայտի հայտարարութիւնում ասված էր, որ Անտանտի նպատակն է Արևելքի ժողովուրդների «լրիվ և վերջնական ազատագրումը» օսմանյան լծից և «ազգային կառավարութիւնների ստեղծումը»²⁸: Իսկ 1920 թ. հունիսի 17-ին, Բաղդադում բրիտանական գերագույն կոմիսարը հայտարարում էր. «Մանգատը Միջագետքը կպարձնի անկախ պետութիւն... Կառավարութիւնը կհրապարակի օրենքներ լիովին հաշվի առնելով երկրի ամբողջ (ընդգծումը մերն է—Շ. Մ.) բնակչութեան իրավունքները և շահերը»²⁹:

Սակայն Իրաքի կառավարութիւնը թշնամական դիրք գրավեց քուրդ ժողովրդի նկատմամբ, փորձեց օսմանյան լուծք փոխարինել անգլո-իրաքյան լծով: Դրա հետևանքով էլ դեռևս 1919 թ. ժողովրդական հուզումներ սկսվեցին Քուրդիստանում: 1920 թ. հուլիսի 2-ին Թեյ-Աֆարում բռնկված ապստամբութիւնը շուտով տարածվեց նաև Կիր-կուկում, Մուլեյմանիեում, Էրբիլում և Քուրդիստանի այլ քաղաքներում³⁰:

Տեյսային թաղավոր կարգիւց հետո, անգլիական կառավարութիւնը պլաններ մշակեց ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար: 1922 թ. Անգլիայի գաղութների մինիստր Ու. Չեքլիը Կահիրեում հրավիրեց հատուկ կոնֆերանս, որտեղ քննարկվեց Անգլիական գաղութները հնազանդութեան մեջ պահելու կարգը: Կոնֆերանսին մասնակցում էին Իրաքի և Պաղեստինի անգլիական գերագույն կոմիսարները և Աքենի ու Մոմայիի նահանգապետները: Խնամարկյալ տերիտորիաները կառավարելու նոր պլանը ստացավ «Վերահսկողութիւն առանց սկուպտիայի» անունը: Խախտանելով իր առաջացող ժողովրդական, ազգային-ազատագրական շարժումների դեմ լայնորեն օգտագործել ավիացիան և զորքը: Իրաքում առաջացած բրդական ազգային-ազատագրական բոլոր

²⁷ М. Брусс, Нефть и внешняя политика, стр. 101.

²⁸ „Бюллетень Народного Комисариата Иностраных дел., 1922, №112, стр. 45.

²⁹ Նույն տեղում, էջ 46:

³⁰ Նույն տեղում:

շարժումների դեմ անզլիական իմպերիալիստները պայքարել են այդ միջոցներով:

1932 թ. հոկտեմբերին, երբ Իրաքն ընդունվեց Ազգերի լիգայի մեջ, անզլիական «Դեյլի Հերալդ» թերթը գրում էր. «Երեկ մենք վերացրինք Իրաքի մանդատը Այս փոփոխությունը նշանակում է մեր պատասխանատվության հետագա նվազում... Զորքն առայժմ որոշված է շհանել Իրաքից: Իրաքից մեր զորքերը կարող են պաշտպանել Հնդկաստան տանող ճանապարհը, և կարող են հարված հասցնել անխոցելի Ռուսաստանին: Մանդատը վերացավ, բայց դրա փոխարեն կա պայմանագիր: Մենք պատասխանատու ենք Ազգերի լիգայի ասիական անդամ պետության պաշտպանության համար: Մեր ավիացիան պետք է պարեկություն անի պետության սահմաններին, օմբակոծի խոռվաբար ցեղերին (բրդերին—Շ. Մ.) և ունենա օդային մեծ բազա Իրաքի անբխորիայի վրա: Իրաքը մտնում է Ազգերի լիգայի մեջ, բայց Մեծ Բրիտանիան Իրաքից չի հեռանում»²¹:

Իրաքում, այսպիսով, բրդական հարցի ճակատագիրը մեծապես կախված էր Անզլիայից: Իրաքի նկատմամբ անզլիական տիրապետության հաստատումը ձեակերպվել էր Վերսալի և Սերի պայմանագրերով: Անզլիան իրավունք էր ստացել Իրաքը կառավարելու այնքան ժամանակ, երբ սերկիրը

ընդունակ կլինի ինքն իրեն կառավարելու: Չնայած բրդերի իրավունքները ճանաչելու մասին անզլիական և իրաքյան կառավարությունների հայտարարություններին, նրանք փաստորեն մնացին ճնշվող փոքրամասնության վիճակում, և հնարավորություն չունեին ստիպելու, որ լսեն իրենց ձայնը, որ կառավարությունը ուշադրության արժանի կարիքները²²:

Անզլիական իմպերիալիստները աշխատում էին բոլոր միջոցներով, անգամ զենքի ուժով, ապահովել շահույթների ստացումը Իրաքից: Խոսքն առաջին հերթին վերաբերում էր նավթին: Իսկ անզլիական նավթային ընկերությունները առանձնապես «Իրաք Պետրոլիում կոմպանին» խաղում էին նաև քաղաքական մեծ դեր: «Անմտություն կլինեք պնդել,— գրում էր Գ. Ուորիները,— թե «Իրաք Պետրոլիում կոմպանին» չի համարվում քաղաքական ուժ»²³: Անզլիական նավթային ընկերությունները ֆինանսավորում էին աստիճանավորների, քաղաքական գործիչների և մշտապես հանդիսանում էին «պետություն պետության մեջ»: Ավելին, նավթային մոնոպոլիաների ազդեցությունը այն աստիճան ուժեղ էր, որ հաճախ ներկի ներքին և արտաքին քաղաքական ու տնտեսական շատ հարցեր լուծվում էին՝ հաշվի առնելով քաղա-

²¹ «The Daily Herald», 20 հոկտեմբերի 1932 թ.

²² Г. Мирский, *издано 1930.*, էջ 78:

²³ Л. Уорниер *издано 1930.*, էջ 257:

ուպես նրանց շահերը՝ ի վնաս Իրաքի ժողովրդի:

Անգլիայի համար Իրաքը, իսկ սուսվել ևս քրդական շրջանները, բացի անսեսականից ունեին նաև խոշոր սաղմա-ստրատեգիական նշանակություն: Այն Իրաքը ընդհանրապես անհրաժեշտ էր որպես կամուրջ դեպի Իրան և Հնդկաստան, ինչպես նաև վառելիքային բազա՝ միջերկրածովյան անգլիական նավերի համար, ապա Փուրգիստանը կարևոր էր իր սաղմա-ստրատեգիական դիրքով: Մայրը Բրուքսը գրում է. «Միջագետքի բրիտանական սրտակոտորաբառը, և՛ ինչ շտաբամբիլի Ռեվանդուզի լեռնաշղթայի վրա՝ հյուսիսում, կորցնում է իր ստրատեգիական նշանակությունը»²⁴:

Իրաքի նկատմամբ անգլիական իմպերիալիզմի վարած քաղաքականության համար բավական բնորոշ է անգլիական աստիճանավորներից մեկի կողմից իրաքցիներին ուղղված հետևյալ խոսքերը. «Դուք մեզ դուր չեք գալիս, մեզ դուր չի գալիս ձեր երկիրը, մեզ դուր չի գալիս ձեր կլիման և մեզ դուր չեն գալիս ձեր քաղաքական համոզմունքները: Բայց մենք սիրում ենք ձեր նավթը: Եվ ի սեր ձեր նավթի, մենք պետք է հաշտվենք ձեզ հետ, ձեր երկրի հետ և ձեր քաղաքական համոզմունքներին հետ»²⁵:

²⁴ М. Брукс. Указан. стр., т. 2, с. 101.

²⁵ „The Nineteenth Century and After“, 1948, № 4, p. 16.

Անգլիան, իրոք, սիրում էր իրաքյան նավթը և այդ «սիրելը» հանդիսանում էր արար և բուրդ աշխատավորների թշվառության պատճառներից մեկը: «Իրաք Պետություն կոմպանին», որը մշակում էր Իրաքի նավթը, մաքրված նավթամթերքները ևս էր բերում Իրաք և վաճառում թանկ գներով: Անգլիան այդ հարստությունից Իրաքի կառավարությունը ստանում էր շնչին բաժին. սակայն այդ բաժինն էլ չէր ծառայում ժողովրդի կյանքի բարելավման գործին: Պատկերը նույնն էր նաև երկրի տնտեսության մյուս բնագավառներում:

Իրաք այցելած բուրժուական հրապարակախոս Իոն Կիմիսեն գրում էր. «Իժգոհությունը և սովը Իրաքում ավելի շուտ սովորական բան են, քան բացառություն»²⁶: Մարապիելի ծանր պայմանների մեջ էին այն գյուղացիները, որոնք չունենալով սեփական տնտեսություն, աշխատում էին ճանապարհահանություն, երկաթուղագծերի և այլ շինարարական օբյեկտներում: Նրանք անպլիացիներից ստանում էին այնպիսի ողորմելի աշխատավարձ, որով հնարավոր չէր ֆիզիկական գոյությունը պահպանել: «Երբից... նոր երկաթուղի կառուցող անգլիական ինժեներները տեսել են, որ բանվորները համարյա ի վիճակի չէին բահը բարձրացնելու, իսկ նրանք, ովքեր աշխատանքի չէին գալիս սովորական աննշան հիվանդությունների

²⁶ ИСАО? СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1079, л. 23.

դատաճառով, շէին ապրում երկու-երեք օրից
ափելի»²⁷:

Փողովորդական զանգվածների թշվառությունը
այն աստիճանի էր հասել, որ եղել են դեպքեր, երբ
ծնողները հոժարակամ վաճառում էին իրենց հա-
րազատ զավակներին: «Ես իմ աչքերով տեսա, —
գրում է բուրգ պրոգրեսիվ գրող Հաժարը, — մի
քրդուհու, որը կիրկուկի փողոցներից մեկում ու-
ղում էր վաճառել իր երկու տարեկան որդուն: Ար-
տասվելով նա ասում էր. «Ես երեք երեխա ունեմ
և նրանց պահելու ոչ մի միջոց չունեմ: Նրանք մա-
հանում են սովից»: Կողքից անցնող բանվորը
գրպանից հանեց կես դիւար և տվեց այդ աղքատ
կնոջը: Ոստիկանները անմիջապես նրան ձերբա-
կալեցին. եթե օգնեց, ուրեմն կոմունիստ է: Այդ
բանվորը վեց ամիս նստեց բանտում, իսկ հետո
մի ամբողջ տարի ոստիկանական հսկողության
տակ էր»²⁸:

Իրաքի ժողովրդական զանգվածների սոցիալ-
տնտեսական պայմանների մասին խոսելով, Ալի
Ջարկան գիպուկ գրում է. «Այն ժամանակ, երբ
մեր երկիրը նման է մի շտեմարանի, որը լցված է
անեղամթերքով, ժողովուրդը ապրում է աղքատ.
Հնաշած այն բանին, որ մեզ մոտ կա բուրգ և բաժ-
բակ, ժողովուրդը վատ է հագնվում, հագուստի

կարիք զգում: Իրաքի բնակչությունը ապրում է
խարխուլ բնակարաններում և կյանքի մեծ մասը
բաղցած է մնում...»²⁹:

Անգլիական իմպերիալիզմի և սակավաթիվ շեյ-
խերի ու ֆեոդալների տիրապետությունից տուժում
էին միջակ, և նույնիսկ, որոշ դեպքերում, խոշոր
անփականատերերը:

Անգլիայի տեքստիլ և թեթև արդյունաբերու-
թյան մյուս ճյուղերի արտադրանքը մշտապես հե-
ղեղում էր Իրաքի շուկան: Տեղական արդյունաբե-
րությունը, ինչպես քրդական, այնպես էլ Իրաքի
մյուս շրջաններում ոչ միայն չէր զարգանում, այլև
օպտոռոգ լունենալով, կանգնում էր քայքայման
ստացի:

Հետպատերազմյան Իրաքում քաղաքային շուկա-
ված պրոդյուսներ, առաջին հերթին ազրաբային և
ազգային պրոդյուսները հանդիսանում էին երկրի
բազաքական անհանգիստ գրուժյան պատճառը:

Երկրի ազգային-ազատագրական շարժումները
մշտապես շոշափել են անգլիական իմպերիալիզմի
շահերը, բանի որ տվյալ ժամանակաշրջանում
Իրաքը գտնվում էր Անգլիայի ազդեցության ուղե-
տուժում: Եստ գիպուկ են հեղհական «Թայմս Օֆ Ին-
դիա» թերթի հետևյալ տողերը. «1921 թ. անգլիա-
ցիները իրօքցիներին ավելցին և թագավոր, և պե-
տություն, սակայն թագավորին շնույալատերցին

²⁷ „The Nineteenth Century and After“, 1948, № 4,
p. 17.

²⁸ „Иностранная литература“, 1959, №7, стр. 72.

²⁹ ИГАОР СССР, ф. 4459, он. 2, ел. хр. 1190, а. 31.

կառավարել, իսկ պետությունը թույլ չտվեցին ստեղծելու ավելի մեծ բան, քան ներկայացուցչական կառավարության տպավորությունն⁴⁰։ Ինքը Ֆենյայի թագավորը հայտարարում էր՝ «Ես անդլիական շինովնիկ եմ թագավորի աստիճանով»։

1932 թ., երբ Իրաքը ձևականորեն անկախություն ստացավ և դարձավ Ազգերի լիգայի անդամ, ոչ մի կարիքնետ միջին հաշվով նույնիսկ մեկ տարի չի մնացել իշխանության գլուխ։ Եվեյցարական «նեյե-Ցյուրխեր ցելտունգ» թերթը գրում էր. «Հաղիվ թե արագորեն իրար փոխարինող պրեմիեր մինիստրներից որեւէ մեկը վարեր քաղաքական այնպիսի դիմ, որը սկզբունքորեն տարբերվեր նախորդների քաղաքական դիմից⁴¹։ Բավական է նշել, որ 1935—1954 թթ. Իրաքում տասնմեկ անգամ ռազմական գրություն է հայտարարվել, որը ընդհանուր առմամբ տեղ է ավելի քան ինը տարի⁴²։

«Սև սեծիմի տարիներին» հետապնդում էր յուրաքանչյուր պրոգրեսիվ միտք, աբյան մեջ խեղդվում ազգային իրավունքների ճանաչման ձգտող յուրաքանչյուր փորձ։ Նուրի Մաիդի իշխանության տարիներին տարածված էր այսպիսի ցինիկ արտահայտություն՝ «Ասում են, թե բանտում չկա ազատություն։ Չէ՞ որ այնտեղ կարելի է քնել և վեր

կենալ, էլ ի՞նչ ազատություն է հարկավոր»։ Հալածանքի էին ենթարկվում առաջավոր մտավորականներն ու արվեստագետները։

Պաշտոնական տվյալներով,— գրում է բուրգ գրող Հաժարը,— միայն Իրաքի մայրաքաղաքում՝ Բաղդադում, հաշվվում էր յոթ հազար ոստիկանական զործակալ... Իրաքի որդիներին ու զուտարեւին հետապնդում էին ոստիկանական 100 հազար լրտեսներ⁴³։ Ոստիկանության կամայականությունները ոչնչով սահմանափակված չէին. «Կոմունիստական շարժում» էին համարում ամեն մի պայքար։ Եստ հաճախ մարդկանց կանչում էին ոստիկանատուն և ատում. «Դու կոմունիստ ես, պետական հանցագործ, պետական զանձարանը մուծիր 200 կամ 500 դինար և պարտավորություն վերցրու, որ երկու տարվա ընթացքում չես զբաղվելու հակապետական գործունեությամբ»։ Եթե զրամ չկար, այդ դեպքում «հանցագործին» պցում էին բանտը, շտտ հաճախ երկար ժամանակով⁴⁴։

Հակահոմոնիստեական մոլուցքով տարված ռեակցիոներները մարդկանց հետապնդում էին նվազագույն կասկածանքի դեպքում։ Արար և բուրգ հայրենասերները մշտապես գտնվում էին ձերբակալման, տեսուրի վտանգի տակ։ Մարդկանց ձերբակալում էին բուրյոզիկն անտեղի, աննշան բանի

⁴⁰ „The Times of India“, 26 օգոստոսի 1956թ.

⁴¹ „Heute Woerher Heute“, 8 մայիսի 1955թ.

⁴² „Револуция и Ирак“, 1958, М., стр. 24.

⁴³ „Иностранная литература“, 1959, № 7, стр. 73.

⁴⁴ նույն տեղում։

Համար: Մի քաղաքացի, օրինակ, դատապարտվել էր 6 ամիս բանտարկություն աչն բանի Համար, որ ստացել էր նամակ, որտեղ նրան «խաղաղություն» էին մաղթում... Ընդ որում խոսքը չէր վերաբերվում խաղաղության մասնակիցների շարժմանը⁴⁵: Մի նկարչի բանտարկել էին միայն նրա Համար, որ իր տաղավարում կախել էր պատանոտված շորերով մի աղքատի նկարը: «Եթե գուկամունիստ չես,— ասացին նրան ոստիկանները,— ինչո՞ւ կախեցիր այս նկարը»⁴⁶:

Քուրդիստանում առաջացող ամեն մի օպոզիցիա, կառավարության կողմից օրակվում էր սրպես «ռուսների, կոմունիստների» գործ: Այդ մաշված հերյուրանքները երբեմն մերկացվում էին մինչև անգամ անպիական մամուլում: «Նայտինթ Սենչըրի Ընդ Էֆտեր» հանդեսը գրում էր. «Բազմագում ամեն տեսակ շշուկներ են շրջում ռուսների գործունեության մասին քրդերի մեջ: Սակայն մանրադիրն ստուգումը ցույց տվեց, որ քրդերը և հյուսիսի փոքրամասնությունները տառապում են տրնտեսական դժվարություններից, ավելի քան բազմազգիները...»⁴⁷:

Անգլիական իմպերիալիստները Նուրի Սաիդին համարում էին «իմաստուն պետական գործիչ», իսկ Իրաքը՝ զարգացման լավ օրինակ արաբական

հարեան երկրների համար: Մինչդեռ անգլիական «Քայմա» թերթը գրում էր, որ «երբեք հարուստների և աղքատների միջև աշխարհի հակադրություն չի եղել, ինչպես Իրաքում»: Անգլիական մի ուրիշ հանդես՝ «Մատերիլիզ իվինդ պոստը» խոսելով Միջին արևելքի, այդ թվում և Իրաքի բնակչության սոցիալական ծանր դրություն մասին, գրում էր. «Այս շրջանում... կարելի է գտնել ամենասարսափելի սոցիալական հակասություններ... վիճակագրությունը ցույց է տալիս, որ շատ տեղերում անասունների ավելի լավ են ապրում, և ավելի թանկ են գնահատվում, քան մարդիկ: Նա, ով տեսել է Միջին արևելքը, կարիք չունի վիճակագրության: Բազմազգի փոփոցների անկյուններում նստած աղքատ կանայք, նիհարած երեխաներ, որոնք մեկնում են իրենց ոսկրոտ ձեռքերը և անվերջ կրկնում խղճուկ երգեր, ամենուրեք լայն տարածված տրախոմաչի պատճառով տարօրինակ հայացքով նայող մարդիկ, մեծ քաղաքների թաղամասերի կեղտոտ խրճիթները, այս ամենը բավական են, համարվելու համար զանգվածների ծայրահեղ աղքատության մեջ»⁴⁸: Այդպիսի գրություն մեջ էին Իրաքի արար և բուրդ աշխատավորները:

Իրաքի աշխատավորների համար անգլիական իմպերիալիզմի տիրապետության տարիները եղել

⁴⁵ TACC, Իրակ, 16 հոկտեմբերի 1955 թ.

⁴⁶ Նույն աղբյուր:

⁴⁷ „The Nineteenth Century and After“, 1948, № 4, p. 20.

⁴⁸ „The Saturday Evening Post“, 20 սեպտեմբերի 1947 թ.

են համառ պայքարի տարիներ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարստահարիչների դեմ: «Այդ թախծալի, խղճուկ պատմության էջերը,— գրում էր «Թալմ» Օֆ Ինդիա» թերթը,— պատմում են ցեղերի ապստամբությունների, բռնությունների, դիմադրական հեղաշրջումների, փոքրամասնությունների անողոր ճեշման մասին: Ներկա պահին Իրաքը մեծ հարցական նշան է արաբական աշխարհում, մեծ դատարկություն. ոչ ոք չգիտե, թե Իրաքն ուր է գնում: Հարևան արաբների համար Իրաքը օտարերկրյա տերությունների ճամբար է, իսկ նրա ժողովրդի համար՝ շիրականացված երազանք, ընդհատված ճանապարհորդություն, ճախողված միսիա»⁴⁹: Իրաքի պրոգրեսիվ հասարակական գործիչ Գաիբ Ֆարմանը գրում էր, որ «Իրաքը կառավարողները գատախարակված են թուրքական դեսպոտիզմի և օկուպանտների լիովին ենթարկվելու ոգով: Նրանց զաղափարախոսությունը ոսկրացի է և ոչ մի փոփոխության չի ենթարկվում, նրանց աչքերում թուրքական կառավարան սխտեմը համարվում է բողոքական գործունեության օրպարո նրանք բարձրացել են ծառայության այն աստիճաններով, որոնք պահպանվում են անզիխական սվինոզ»⁵⁰:

⁴⁹ «The Times of India», 26 ապրիլի 1955թ.

⁵⁰ Г а и б Ф а р м а н, Ирак в годы черного режима, М., 1959, стр. 45.

Այդ բոլորը ժողովրդական զանգվածներին մղում էին բողոքի ելույթների, որոնց սուր ծայրը, վերջին հաշվով, ուղղված էր անզիխական իմպերիալիզմի դեմ: Ժողովրդի դժգոհությունը,— գրում էր «Նայտինթ Սենչրի» Լնդ շֆտեր»-ը,— ուղղված է կառավարության դեմ, սակայն ավելի արտահայտված ձևով ուղղված է Իրաքը կառավարող հարյուրընտանիքների դեմ, և ամենից շատ անզիխացիների դեմ, որոնց փաստորեն ամբողջ ազգը պատասխանատու է համարում Իրաքի այժմյան ծանր դրության համար»⁵¹:



Իրաքի բրգական ժողովրդական զանգվածների սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, ազգային իրավազրկությունը, հասկանալի է, չէին կարող չհասցնել ազգային-ազատագրական նոր պայքարի, որն սկսվեց զենուս պատերազմի տարիներին:

Հետպատերազմյան Իրաքի բրգական ազգային-ազատագրական պայքարի վրա բարերար ազդեցություն ունեցան Սովետական Միության և զեմկրատական ուժերի հաղթանակը իմպերիալիստական առավել սեակցիոն ուժերի դեմ, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարի այն

⁵¹ «The Nineteenth Century and After», 1948, № 4, p. 13.

հզոր ալիքը, որ սկիզբ առավ Արևելքի երկրներում: Այդ ժամանակաշրջանի ազգային-ազատագրական պայքարի հակաիմպերիալիստական բնույթը հատուկ է նաև քրդական ազգային-ազատագրական շարժումներին:

Ի տարբերություն Իրաքի մյուս շրջանների ժողովրդական շարժումների, Քուրդիստանում տեղի ունեցող շարժումները սուսումնասիրելիս, առաջին հայացքից ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ դրանք ուղղված են եղել միայն ազգային իրավունքների ճանաչման նպատակին: Մինչդեռ այդ շարժումների պատճառներից մեկն էլ ազդարարին չլուծված պրոբլեմն էր: Այդ է պատճառը, որ Քուրդիստանի խոշոր հողատերերը հաճախ հանդես էին գալիս այդ շարժումների դեմ և հանդիսանում Իրաքի կառավարության և անգլիական իմպերիալիզմի հենարանը քրդական ապստամբությունների ճնշման գործում: Փառավորական Իրաքում հողային հարցի սրությունը մեծ մասամբ պայմանավորված էր անգլիական իմպերիալիստների վարած քաղաքականությամբ: Պաշտպանելով խոշոր հողատիրությունը, նրանք ֆեոդալներին օգտագործում էին երկրի հարստությունները անարգել կողոպտելու և զեմեկրատական շարժումները ճնշելու համար: Անգլիական իմպերիալիզմի զաղութային քաղաքականության հետևիվան էր գյուղատնտեսության և նոր զարգացող արդյունաբերության ցածր մակարդակը: Կարճ

ասած, Իրաքը անգլիական իմպերիալիզմի համար հումքի աղբյուր էր և վաճառահանման շուկա:

Իրաքյան Քուրդիստանի բնակչությունը, բացի սոցիալ-տնտեսական զրկանքներից ենթարկված էր նաև ազգային ճնշման: Անգլիական իմպերիալիզմի հետ համագործակցարար Իրաքի կառավարությունը մշտապես անտեսում էր բուրդ ժողովրդի ազգային իրավունքները:

Այսպիսով, Իրաքյան Քուրդիստանը Իրաքի այն շրջաններից էր, որտեղ ցայտուն կերպով առկա էին բուրդ հիմքերը ժողովրդական շարժումների համար: Այդ կարգի ազգային-ազատագրական ժողովրդական հուզմունքները Իրաքյան Քուրդիստանում սկսվում են 1943—1945 թթ. ապստամբություններով:

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՍԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐՓՈՒՄՆԵՐԸ 1943—1957 ՔՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին քրդական հարցը շարունակում էր մնալ Իրաքի ներքին շուռված սրբբլմաներից մեկը: Չնայած գերմանական իմպերիալիզմի շանքերին՝ քրդական շարժումներն օգտագործել իր նպատակների համար, Քուրդիստանի ժողովրդական լայն խավերը իրենց բախտը կապեցին ֆաշիզմի զեմ պայքարող դեմոկրատական ուժերի հաղթանակի հետ: Պետք է առանձնապես նշել քուրդ աշխատավորության համակրանքը Մովսեսական Միության նկատմամբ, որի արդարացի պատերազմը գերմանական իմպերիալիզմի և նրա դաշնակիցների դեմ, մեծ համատ էր ներշնչում լավագույն ասպարաջի համար: Գավառը խոսելով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կոմսոց կոդմերի նկատմամբ քրդական ժողովրդական լայն խավերի գրաված դիրքի մասին, գրում է. «Այն ժամանակ, երբ թուրք ղեկավարները սիրաբանում էին գերմանական զեռպան նացիստ ֆոն Պապենին և բացահայտորեն հա-

մակրում Գերմանիային, երբ Ռեզա շահը տվելի ու ալիելի էր մոտենում նացիստներին և Թրանում գերմանաֆիլ տարրերը ազդեխիվ պլաններ էին պատրաստում, քրդական լայն հասարակությունը գործնական մասնակցություն ունեցավ հակահաշխատական դաշինքի ամրապնդման մեջ»¹:

Այս արամագրությունները ոչ բիշ լախով օգտագործում էր Անդրեան, որը, հատկապես ընդգծելով իր դաշնակցությունը ՄԱՄԿ-ի հետ, ձգտում էր ամրապնդել իր դիրքերը Քուրդիստանում: Անդրեանի և ԱՄՆ-ի կողմից քրդերին արվում էին մեծ խոստումներ՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նրանց աղջային իրավունքների ճանաչման մասին: Ամբողջ Միջին արևելքում տարածվել էին ԱՄՆ-ի պրեզիդենտ Թրուդելիտի լուսանկարները, որոնց վրա քրդերին զրված էր. «Մենք ձեզ չենք մոռանա՞ծ»՝ «Անդրեանիսն դիվանագետները իրենց հայտարարությունների մեջ հասան մինչև այնեղ. — դրում է «Բախլան է Մուսայն Սրիտիք» — սր քրդերին խոստացան ղեռքի ծով էլք արամադրել Ալեքսանդրեոսայի շրջանում»²:

Արևմտյան տերությունների, հատկապես Անդրլիայի խոստումները, ուղղակի հակասության մեջ էին նրանց սրբակտիկ գործողությունների հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում

¹ G a v a n, նշված աշխ., էջ 37:

² Les Balkans et le Moyen-Orient, 28 մայիսի 1955թ.

³ Նույն տեղում:

Իրաքյան Քուրդիստանը ընդհանուր առմամբ զբտնրվում էր հանգիստ վիճակում, շնայած այն բանի, որ Բաղդադը շարունակում էր բրզերի իրավունքները շճանաչելու քաղաքականությունը:

Պատերազմի տարիներին Իրաքի ժողովրդական մասսաների առանց այն էլ վատթար տնտեսական պայմանները ալվելի ծանրացան: 1943 թ. Քուրդիստանում հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը խիստ ցածր էր սովորական տարիներից. շնայած դրան, անզլիացիները Իրաքից արտահանեցին ցորենի և զարու պաշարները մեծ մասը: Պարենային և արդյունաբերական ավրաների վրա սահմանված էր պետական հսկողություն. դրանք բնակչությանը բաշխվում էին քարտային սխտեմով: Տեղական իշխանությունները, որոնք կատարում էին բաշխողի ֆունկցիա, քարտային սխտեմը գարծրել էին շահույթ ձևոք բերելու միջոց: Դեֆիցիտային ավրանքները վաճառվում էին սև շուկայում սպեկուլյատով գներով: Գյուղացիներին կախվածությունը վաշխատուններից մեծ շափեր ընդունեց:

Քուրդիստանի ժողովրդական մասսաները, առաջին հերթին գյուղացիները, հասել էին տնտեսական ամենավատթար դրության, որը ալվելի էր ծանրանում անզլիական, իրաքյան զինվորականության կամայականությունների հետևանքով: Քրզական լեռնային շրջաններում նույնիսկ բարձր գներով հնարավոր չէր ձևոք բերել պարենային և արդյու-

նաբերական ավրանքներ: Տնտեսական այս զվտարությունները ալվելի ուժեղացրին զժգոհությունը Իրաքի կառավարության և Անզլիայի դեմ: Քուրդիստանում առկա էր ավստամբական արմատադրություն, որը կարող էր վերածվել զինված ելույթի:

Այս ժամանակաշրջանում իր աշխատանքը աշխուժացրել էր քրզական ազգային մանրբուրժուական «Հայվա» (Հույս) կազմակերպությունը, որը կազմակերպվել էր 1939 թ. Իրաքի բանակի առաջագեմ բուրզ սպաների կողմից: Սոցիալ-տնտեսական հարցերի բնագավառում նա որևէ արմատական միջոցառում չէր առաջարկում. հիմնական շեշտը դնում էր քրզերի ազգային իրավունքների ճանաչման վրա «Հայվա»-ի շարքերում հիմնականում միավորվել էին քրզական ինտելիգենցիայի ներկայացուցիչներ՝ բժիշկներ, սուսանողներ, ուսուցիչներ և այլն: Քրզական ազգային-ազատագրական շարժման առաջիկ ձախ թևն էին ներկայացնում «Շորբը» (Հեղափոխություն) և «Ռիզզարի» (Փրկություն) կազմակերպությունները: Գործում էր նաև «Հաշկարի» (Զինվորներ) կազմակերպությունը, որը զգալի ազդեցություն էր ձևոք բերել բուրզ զինվորների շրջանում:

Այդ կազմակերպությունները ամենուրեք գործուն մասնակցություն էին ցույց տալիս ավստամբության նախապատրաստմանը: 1943 թ. «Հայվա»-ի անդամների օգնությամբ քրզական ազգային-ազա-

ազգրական շարժման ակնաւոր գործիչ Մուշա Մուստաֆա Բարզանին հետացավ Սուլէյմանիէից, որտեղ իր եղբոր՝ Ահմեդ Բարզանու և մի շարք բարդ օպոզիցիոն պարագլուխների և հասարակական գործիչների հետ միասին գտնվում էր արտրակական վիճակում 1933 թվից ի վեր Բարզան հասնելուց հետո Մուստաֆա Բարզանին հարձակում կազմակերպեց ոստիկանական ջոկատի վրա, որը կարճատև դիմադրությունից հետո անձնատուր եղավ: Ծուռով բարզանցիների դեմ ուղարկվեցին ոստիկանական նոր ուժեր: Ապստամբների հետ ունեցած բնդհարման ժամանակ ոստիկանները թողեցին պենտերը և մազապուրծ փախան⁴: Բարզանցիներին միացան նաև Սաիդ Բիրոսի դիմված ջոկատները, որոնք մինչև Բարզանու ժամանելը հաջողությամբ կռվել էին Թուրք-իրաքյան սահմանաչիւն ուժերի դեմ⁵:

• 1943 թ. սեպտեմբերին Բարզանում սկսվեց ապստամբություն, որը լայն թափ բնորոնեց: Երկու ամիս անց, նրա մասնակիցների թիվը հասավ մոտ 13 հազարի, որոնց մեծ մասը հեծյալներ էին: Ապստամբությունը Բարզանից շուտով տարածվեց նաև Մոսուլի և Էրբիլի զավառները: Իրաքի կառավարությունը միանգամից սկսեց ազմակական մեծ բնույթի զործողություններ: Սակայն ընդհարումները ապստամբների և կառավարական ուժերի

միջև վերջացան վերջիններիս պարտությունը: Հատկապես նշանակալից էր Շերվանի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որտեղ իրաքյան զորամասը զլխովին պարտության մատնվեց: Բարզանցիները այստեղ գերի վերցրին երկու ջոկատներ, այնուհետև հարձակվեցին Բելուս գտնվող ոստիկանական ջոկատի վրա և փախուստի մատնեցին: Հաջորդ կատաղի ճակատամարտը տեղի ունեցավ Աքրայի մտակալքում գտնվող Բիրեսում: Կառավարական զորքերի հարձակումները 1944 թ. սկզբների հաջողությամբ ետ էին մղվում⁶:

Ապստամբները պահանջում էին՝ Իրաքի սահմաններում ճանաչել քրդերի ավտոնոմ իրավունքները, վերջ տալ քրդերի նկատմամբ խտրականության քաղաքականությանը, քրդերին նշանակել Քուրդիստանի տեղական ինքնավարության օրգաններում, բարեկամիկ քրդաբնակ շրջանները պարենային և արդյունաբերական ապրանքներով մատակարարելու զործք, ապահովել դեմոկրատական ազատություններ, պայմաններ ստեղծել մայրենի լեզվի ուսուցման համար:

Քուրդիստանի ապրքի շրջաններից նորանոր ջոկատներ միանում էին բարզանցիներին: Ապստամբությունը ճնշելու փորձերը վերջացան անհաջողությամբ: 1943 թ. սեպտեմբերից մինչև 1944 թ. ապստամբների և կառավարական ուժերի միջև տե-

⁴ Gavan, նշված աշխ., էջ 37:

⁵ S. L. Longrigg, Iraq 1900—1950, p. 235.

⁶ Б. Гемков, Кюрдистан, София, 1954, стр. 62.

դի ունեցան կատարի մարտեր: Տեսնելով զեպրերի սպառնալից բնույթը, Իրաքի կառավարությունը ապստամբների դեմ ուղարկեց մի ամբողջ բանակ անդլիական զենեքով Բրոմիլոյի հրամանատարության ներքո: Սակայն զեպրեբը զարգանում էին ու կառավարության օգտին: Վերջինս երկրորդ անգամ փորձեց ապստամբությանը վերջ տալ բանակցությունների միջոցով:

Այն բանից հետո, երբ քրդական մի շարք քաղաքական գործիչներ մերժեցին միջնորդի դեր խաղալ ապստամբների և կառավարության միջև, այդ միտքի ստանձնեց Իրաքում անգլիական զեսպան Կորնվալիսը: Անգլիական կառավարության անունից ֆաշիզմի դեմ պատերազմի ավարտից հետո ինքնավարության խոստանալով քրդերին, զեսպանը պահանջում էր զազարեցնել ապստամբությունը⁵: Իսկ 1944 թ. հունվարին անպրոտֆել միևիտար պղտոթյամբ բուրջ Մաշիզ Մուստաֆան կառավարության հանձնարարությամբ այցելեց Քուրդիստան, փոխեց մի քանի պաշտոնյաների, աշխատեց կարգավորել հացահատիկի բաշխումը և այլն. նրա խնդիրն էր՝ հանդարտեցնել ապստամբներին: Որքան էլ շոշափելի լինեին ապստամբների սկզբնական հաշտությունները, նրանք չէին կարող լքելու իրեն նկատի շահել կառավարության հաշտության

առաջարկը, քանի որ պարենի և զենքի պահաս էր զգացվում:

Հաշտության բանակցություններում նուրի Սաիդի կառավարության ներկայացուցիչը նշանակվեց Մաշիզ Մուստաֆան⁶: Բարդանցիները հաշտության առաջարկը ընդունեցին հիմնականում այն պատճառով, որ նրա պայմանները սվյալ էտապում բավարարում էին իրենց:

Սակայն, այդ համաձայնագիրը տարբեր նշանակություն ուներ կառավարության և ապստամբների համար: Ապստամբության զեկավարները կարծում էին զբանով ապահովել քրդերի ավանտում իրավունքների ճանաչումը և մյուս հրատապ հարցերի լուծումը: Իսկ կառավարության համար հաշտության համաձայնագիրը սոսկ միջոց էր Քուրդիստանի հակակառավարական սպոդիցիան լիկվիդացնելու համար:

Հաշտության համաձայնագիրը ուներ հեռանայ պայմանները.

1. Ապստամբների գրաված տերիտորիաները մնում են նրանց իշխանության տակ:
2. Ազատ են արձակվում ապստամբության բոլոր ձեռքազաված ներկայացուցիչները:
3. Ապստամբները պահպանում են իրենց զինված ուժերը և զենքերը, ներառյալ Իրաքի բանակից իլված զենքերը:

⁵ ИГАОР СССР, ф. 4459, он. 2, ел. кр.-1191, а. 10

⁶ նույն անգումը

⁶ Longrigg, նշված աշխ., էջ 325:

4. Արդարացի սկզբունքներով իրազործվելու է պարենի և արդյունաբերական ապրանքների մասակարարումը Քուրդիստանում:

5. Իրաքի քրդական շրջաններում բոլոր արար պաշտոնյաները փոխարինվում են քրդերով:

6. Իրաքյան Քուրդիստանը մշակույթի և լուսավորության բնագավառում ստանում է ավտոնոմ իրավունքներ:

7. Իրաքի կառավարությունը միջոցներ է հատկացնելու Քուրդիստանում դպրոցներ և հիվանդանոցներ բանալու համար¹⁰:

Քուրդ սպաներից առանձնացվեց մի խումբ, որի խնդիրն էր՝ վերահսկել պարենի արդարացի բաշխումը, պայքարել սպեկուլյացիայի և կաշառակերության դեմ: Նրանք ղեկավարական նահանգապետի իրավունքներով ստանձնում էին իշխանությունը հետևյալ շրջաններում. գեներալ Բահիդգին Նուրի՝ Մուլեյմանիեի, փոխգնդապետ Ամին Թեանզուզի՝ Թեանզուզի, մայոր Իզզետ Աղիզ Ամեզի՝ Բարզանի, կապիտան Ֆուադ Արիֆ՝ Կալա Գիզելի, կապիտան Մաշիդ Ալի՝ Ամեզիայի, կապիտան Մուստաֆա Խոշնամ՝ Քյեի, կապիտան Եամզինի Սաիդ Աղիզ՝ Մերգա Սորի շրջանում¹¹:

1944 թ. մայիսին Նուրի Սաիդը շրջագայեց քրդական շրջանները և, տեսնելով զոյություն ունե-

ցող զժգո՛ւթյունը, հայտարարեց, որ կառավարությունը մտադիր է հիմնել համաքրդական մի լիվա, լուսավորության մեխանիզմի մեջ հաստատել քրդական գոյրոցների հարցով զբաղվող բաժին, բարելավել հասարակական սպասարկումները, վարկեր տրամադրել գյուղացիների անտեսությունները կարգի բերելու համար, վերանայել միախոտի արտադրության և վաճառքի վրա սահմանված մոնոպոլիան, որից տուժում էին ծխախոտազործությունը զբաղվող քրդական շրջանները: Կառավարության այս խոստումները կատարվում էին տակտիկական նկատառումներով և նպատակ ունեին ժամանակ շահել նոր շարժումների վտանգը հեռացնելու համար:

Լոնգրիգզն այդ առթիվ գրում էր. «Մուլային (Բարզանուն—Շ. Մ.) արված զիջումները, հավանաբար ի չիք էին դարձվելու, ձգձգումների և խափանումների միջոցով»¹². Այդպես էլ նպավ: Իրաքի սեզենս Աբդուլ Իսհը մեթոց քրդերի իրավունքների մասին օրենքի նախագիծը Այդ բանը հասցրեց Նուրի Սաիդի կարիներտի անկմանը Գա, իհարկե, ավելի շուտ տակտիկական միջոցառում էր, բանի որ զրանից հետո էլ Նուրի Սաիդը շարունակեց ուղղությունն առ իրաքի կառավարության քաղաքականությունը:

Նոր, Համդի Պաշլիի կառավարությունը ձեռք առավ հակաքրդական միջոցառումներ, կառավա-

¹⁰ Rambout, նշված աշխ., էջ 73.

¹¹ МГАОП СССР, ф. 4459, он 2, ед. хр. 1192, л. 4.

¹² Longrigg, նշված աշխ., էջ 326.

բության կազմից հանվեց Մաշիզ Մուստաֆան, սեպտեմբրյալի եմբարկվեցին բրզգական օպոզիցիոն պարտիաների և կազմակերպությունների անդամները, վերացվեցին բուրգ նահանգապետների պաշտոնները:

Այդ բանից հետո Քուրդիստանում խմորումները վերակսվեցին: «Հալվա» կազմակերպության ձախքի հետ վերակազմավորումից հետո «Ռիզդարի» իր կենտրոնը հաստատեց Բարզանի շրջանում: Չնայած կառավարության սեպտեմբրյալ միջոցառումներին, զեմտիրատական ուժերը և կոմունիստները եռանդուն թափով աշխատում էին պայքարի ընդհանուր ճակատ կազմել սեակցիայի զեմ: Բոլոր նախանշանները ցույց էին տալիս, որ ապստամբություն էր նախապատրաստվում Քուրդիստանում:



Իրաքի կառավարող շրջաններում տարածայնություն կար նոր ապստամբությունը ճնշելու ձևերի բնորոշյան շուրջը: Որոշ շրջաններ, որոնց գլխավորում էր Նուրի Սաիզը, գտնում էին, որ պետք է քրդերին ազգային ինքնավարություն խոստանալ ժամանակ շահելու համար, արգելակել ապստամբության բռնկումը և տարածումը: Որոշ շրջաններ էլ կարականապես զեմ էին, թևկուղ ձևականորեն, ճանաչել քրդերի ինքնավարության իրավունքը:

1944 թ. հուլիսին Սուլեյմանիեում տեղի ունեցավ բուրգ պարագլուխների խորհրդակցությունը, որին

հետևեց էկոնոմիկայի մինիստր Թաուֆիզ Ուսերիի «բարի կամքի» այցը Քուրդիստան: Սակայն կառավարության այդ միջոցառումը չէր կարող մեղմացնել դրությունը: Մուստաֆա Բարզանին և ապստամբության մյուս ղեկավարները պահանջում էին հաշտության համաձայնագրի կենսագործումը¹³:

էկոնոմիկայի մինիստրի մեկնելուց հետո դուրացիները զբաղեցին կառավարության անօրինականության մասի գտնվող հացահատիկի պաշարները:

Տեղի էր ունենում վերահաս ապստամբության նախապատրաստությունը: Բացի այդ, կապ հաստատվեց Բազդադի, Կիրկուկի, Հերբիլի, Մոսուլի, Սուլեյմանիեի, Ռեանդուզի և այլ վայրերի զեմտիրատական գործիչներին և կազմակերպությունների միջև:

Քուրդ ազգարևակչության ազգային իրավունքների ճանաչումը մասսաների գիտակցությանը հասցնելու գործում մեծ աշխատանք էին տանում Իրաքի կոմունիստները: 1945 թ. սկզբներին կոմպարտիայի ընդհատակյա քրդերեն «Ազադի» թերթում հրատարակվեց մի փաստաթուղթ, որը հայտնի է «Քուրդ ժողովրդի խարտիա» անունով¹⁴: «Քուրդ ժողովրդի խարտիայում» ասված էր, որ ներքին և արտաքին սեակցիայի զեմ պայքարելու անհրա-

¹³ علاء الدين العبادي، شورش كنى كورد و كوردو كيمارى عراقى، بغداد، 1929، ص. 178.

¹⁴ Rambout, եղված աշխ., էջ 132.

ձեշտ պայման է հանդիսանում եզրայրական փոխադարձ հասկերի ամբողջումը բրդերի և արարների միջև։ Միասնական պայքարով անհրաժեշտ է հասնել երկրի իսկական անկախությանը. ստեղծել աշխարհի կոոսովարություն, որը ծառայի ժողովրդին, վերացնի այն օրենքները և դեկրետները, որոնք չեն համապատասխանում ժողովրդի շահերին։ Քուրդ ժողովրդին պետք է իրավունք տրվի իր կամքը ազատորեն արտահայտելու, ստեղծելու քաղաքական և ոչ քաղաքական միություններ, գումարելու ժողովներ, վայելելու մամուլի ազատություն։ Երկրի հարստությունները պետք է օգտագործվեն ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու օգտին։ Պաշտպանել գյուղատնտեսական հողերը։ Գյուղացիներին պետք է բաժանել այն հողերը, որոնք գտնվում են պետության և ազանների ձեռքում։ Ստեղծել գյուղատնտեսական արհմիություններ գյուղացիներին վաշխատուների ձանկիր պաշտելու համար։ Ստեղծել աշխատանքային օրենսդրություն։ Հող արտահանող էլ կիսանստակյաց ցեղերին։ Կազմակերպել սոցիալական օգնություն, աշխատավորներին պաշտպանել զործադրվողյան, հիվանդության և ծերության ժամանակ։ Հաստատել պարտադիր զինվորական ծառայություն, մաքրել բանակը ռեակցիոն սարքերից և այն ծառայողներին ժողովրդի շահերին ու հայրենիքի անկախության զործին։ Բարձրացնել ժողովրդական կրթության մակարդակը, պարզեցնել բրդական բնթերցանությունը և

գրերը, ստեղծել բրդական բարձրագույն, միջնակարգ և տարրական տեխնիկական դպրոցներ Երկսեռ քաղաքացիների համար։ Կատարել հարկերի արդարացի բաշխում, հարկերից ազատել բանվոր դասակարգին և մանր առևտրական ծառայողներին։ Վերացնել շարժահամայնքը և սպեկուլյացիան։ Չափավորել առևտրականների շահույթները¹⁵։

Միաժամանակ պահանջվում էր պահպանել Քուրդիստանում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունների էթնիկական և կրոնական իրավունքները¹⁶։

«Քուրդ ժողովրդի խարտիայում» առաջ բաշխված պահանջներն ունեին զեմտիրապետական բնույթ և նպաստում էին բրդական հասարակայնության ազգային լայն խավերը պայքարի հանելու գործին։

Իրաքի կառավարությունը մերժեց որևէ կերպ ճանաչել բրդերի ազգային իրավունքները։ Ի պատասխան բրդերին խեղճավարություն տալու մասին օրենքի նախագծի մերժմանը, Քուրդիստանում նորից բռնկվեց ապստամբություն, որը զարձայլ զեկավարում էր Մուսաաֆա Բարդանին¹⁷։ 30 հազարանոց բանակ, ինչպես նաև 12 հազար ոստիկաններ ուղարկվեցին Չախոյի, Ամեդիայի, Աբրայի և Ռեանդուզի շրջանները։ Էրբիլի և Մոսուլի օդանավակայանները փոխադրվեց Իրաքի գրեթե ամբողջ

¹⁵ R a m b o u t, ելգած աշխ., էջ 132։

¹⁶ Նույն տեղում, էջ 124։

¹⁷ ԱԴԱՕՔ ՄԱՐԿ. փ. 4459, օտ. 3, Էձ. ԽՐ. 139, յ. 13։

ավիացիան: 1945 թ. օդոստուսի 7-ին Իրաքի բանակը և հրեական սկսեցին գնդակոծել քրդական գյուղերը: Ապստամբների դեմ գործող բանակի ընդհանուր հրամանատարությունը հանձնվեց անգլիական զինկուսի Ռենտոնին, որը Հյուսիսային Աֆրիկայում պատժիչ արշավախմբեր կազմակերպելու և դիվերսիոն գործողություններ մեծ փորձ ունենալու պատճառով ստացել էր «անապատի աննետ» մականունը: Քուրդ ապստամբներին շուտով հաջողվեց գրավել Ջախո, Աքրա, Ամեդիա, Ջիրբար, Ռեանդուզ քաղաքները¹⁸: Այդ մարտերում ոչնչացան Իրաքի կառավարական զորքերի շուրջ 40 մարտակներ:

Ապստամբության ղեկավարները սկզբից ևեթ բազմաթիվ կոչերով դիմեցին Իրաքի բնակիչներին, պարզաբանելով ապստամբությունը նպատակները: Նրանք բացատրում էին, որ ապստամբությունը ուղղված է ներքին և արտաքին սեպագիտաբանության և բանակի արքայի դեմ, որ ապստամբությունը առաջարկում «չթափել հրաշքական արյունը, չկոպել քրդական չոկիաների դեմ»: Իրաքի արքայի բնակչության մեծ տարածված մի թուօնցիկում ասված էր. «Մենք չենք կոպում արարական, թուրքական և իրանական ժողովուրդների դեմ, Արաբները, թուրքերը և իրանցիները մեր բարեկամները և ընկերներն են: Մենք հանդիսավոր կերպով հայտարարում ենք, որ պետք

¹⁸ Նույն տեղում:

է շարունակվի սրբազան և երախտավոր դաշինքը Իրաքի քրդերի և արաբների միջև, որ մենք հարգում ենք արքայի ժողովրդի պայքարը հանուն իմպերիալիզմի լծից ազատագրման, հանուն իսլամական ազատության նվաճման: Մենք, քրդերս և արաբներս ուսուսի ավամ պետք է պայքարենք սեպագիտաբանի, դիվատատուրայի և իմպերիալիզմի տապալման համար»¹⁹:

Ապստամբները դիմեցին նաև անգլիական իշխանություններին, պահանջելով լիքամտել երկրի ներքին գործերին: Մակայն անգլիական իմպերիալիզմը այլ պլան ուներ, անսնկելով, որ ապստամբները մտածենու՞մ են կերկուցիկ, անգլիական ինքնաթիռները սկսեցին ուժերկոծել ապստամբության շրջանները: Լոնդրից դրում է. «...Բանակը երբ պորտություններով շարժվեց ղեկավար ապստամբության շրջանը, իսկ օդային ուժերը սուժեր էին տեղում նրանց հետևորդների և ունեցվածքի վրա»²⁰: Թուրքիան, իր հերթին, փակելով սահմանները, օգնում էր Ամեդիայից հարձակվող սուսիականական ջոկատներին: Բացի այդ, թուրքական իշխանությունները ապստամբության տարածումը արգելակելու նկատառումով զգալի բանակազորներ զորքեր կենտրոնացրին կովկասյան գոտում²¹:

¹⁹ „Экити текушин“, 1945, № 4, стр. 14.

²⁰ Longrigg, ելված աշխ., էջ 327.

²¹ ИГАОР СССР, ф. 4459, он. 3, ел. хр. 1476, л. 17.

1945 թ. Հուլիսին կառավարութիւնը ապստամբութեան շրջանում կենտրոնացրել էր բնգամներ 4200 զինվոր, որից 3000 Հետակախիներն և 1200 ստտիկաններ²²։ Ռազմական գործողութիւններին մասնակցեց նաև 25 կործանիչներէից և ութբազմիչներէից բաղկացած ավիախումբը։

1945 թ. օգոստոսի 7-ին Իրաքյան բանակը մեծ հարձակում սկսեց Ռեանդուզի շրջանում, որով ձգտում էր Հարավային Քուզիստանը բաժանել կրկու մասի և հեշտացնել ապստամբութեան ջախջաջախման խնդիրը։ Դաշնադէտի մտա Իրաքյան շորս գումարտակներ զլխովին ջախջաջվեցին²³։ Այդ ժամանակ ապստամբների դեմ սկսեցին գործել Անգլիայի ռազմավարական ռազմա-օդային ուժերը։ Էրբիլից 20 կիլոմետր հեռու գանձող վայրում նրանց ուժեղ ուժերի հետ մեծ ճակատամարտներ կատարեցին։ Սակայն վերջիններս քաշվեցին լեռնային շրջանները։ Գրանից հետո, ինչպէս նախկինում, անգլիական ռազմա-օդային ուժերը սկսեցին անողորմ ուժերով ճնշել կառավարչական խաղող բնակավայրերը։ Մեծ թվով ծերեր, կանայք և երեխաներ զոհվեցին կամ վիրավորվեցին 15.000 բուրջ կանայք, երեխաներ և ծերեր, զլխավորապես Բարզանի շրջանից, ստիպված հեռացան իրենց բնակավայրերից։ Թմբակոծումները տեղի էին ու-

նենում օրական երկու-երեք անգամ։ Քրդական ապստամբների հիմնական ուժերը շարունակում էին մնալ անբեկնելի²⁴։

Չնայած ապստամբների դեմ նետած զինված ուժերի գերակշռութեանը, կառավարութիւնը ստիպված էր դատարկել 11 ռազմական բազաներ և ամբողջ Քուզիստանում հայտարարել ռազմական դրութիւն։ 1945 թ. օգոստոսի 20-ին Ռեանդուզի հյուսիս-արևմտյան շրջանում ապստամբները պինաթափեցին և զերի վերջին մի կայազորի։ Ապստամբների կողմն էին անցնում Իրաքի բանակի շատ զինվորներ և սպաներ։ Զիբուրի շրջանում մի ամբողջ գումարտակ միացավ ապստամբներին²⁵։

Իրաքի բանակի զլխավոր շտաբի կից անգլիական խորհրդակցանք հասուկ նամակով Բարզանում առաջարկեց ցած դնել պենթերը։ Այդ առաջարկը մերժվեց։ Այնուհետև, Իրաքի կառավարութիւնը և նրա անգլիական խորհրդակցանքները ձեռնարկեցին մի շարք այլ միջոցներ՝ ապստամբութիւնը ճշնշելու համար։ Խորից վերսկսվեց հին պրոպագանդան այն մասին, թէ քրդական շարժումը որսից է հրահրված, կապ չունի ժողովրդի շահերի հետ, և ուղղված է ունեւոր մարդկանց դեմ, բնասնիքի միասնութեան դեմ և այլն։ Թացի այդ, Իրաքի ներ-

²² D. TCMROB, նշված աշխ., էջ 63.

²³ Նույն աղբյուր։

²⁴ Նույն աղբյուր։

²⁵ նշված աշխ., էջ 179, علاءالدین السجادی

քին զործերի մինխատութիւնը բավականին մեծ գումար հատկացրեց որոշ բուրգ ֆեոդալների կաշառելու և նրանց ուղղակի ապստամբների դեմ հանելու համար: Իրանի բրգերին կոչ արվեց՝ շօղնել Բարդանուն: Պետր է նշել, որ բուրգովին ապարդյուն շանցան այդ միջոցառումները Գտնվեցին այնպիսի բուրգ շեխներ և ֆեոդալներ, որոնք շոկատներ կազմեցին և զուրս եկան ապստամբների դեմ²⁶:

1945 թ. սեպտեմբերին անգլիացիները ուժեղացրին ապստամբների դեմ կռիւղ իրաքյան զինված ուժերը: Իրաքի ազգային պաշտպանութեան մինխատրի հաղորդման համաձայն Անգլիան իրաքյան բանակին «նվիրել էր» 31 ռազմական ինքնաթիռ²⁷: Իրաքի զինված ուժերին միացվեցին նաև օտանկային միավորումներ, որոնք վճռական հակահարձակման անցան ապստամբների դեմ: Ավելի քան 50 բրգական բնակավայրեր, այդ թվում և վարչական կենտրոններ, հիմնահատակ ավերվեցին և այրվեցին: Բարդանցիների ներկայացուցիչները Բեյրութում հրապարակեցին բողոք, ուղղված Իրաքի կառավարութեան դեմ, որտեղ նշված էր. «Իրաքի բանակը օգտագործում է ծանր հրետանի և օդային ուժեր՝ բրգական գյուղերը ոչնչացնելու, անպաշտպան կանանց ու երեխաներին սպանելու համար²⁸: Մամուլի հաղորդումների համաձայն

²⁶ Նույն տեղում:

²⁷ ИГАОР СССР, ф. 1459, от. 1, с. 4178, а. 65.

²⁸ Նույն տեղում, թ. 66:

միայն 4 օրվա ընթացքում սպանվել էր ավելի քան 1000 մարդ:

Ուժերի բացահայտ անհավասարութեան պայմաններում ապստամբները ստիպված էին նահանջել լեռնային շրջանները: Ապստամբութեան ղեկավարները, ակտիվոր զինացրելու անհուսալիութիւնը, անցան Իրանի սահման և միացան ազատագրական այն պայքարին, որը ծավալվել էր Իրանի հյուսիսային շրջաններում²⁹: Ապստամբութիւնը փաստորեն պարտվեց, հետևյալ պատճառներով.

1. Ապստամբութեան հիմնական շարժիչ ուժը գյուղացիութիւնն էր, սակայն շտապագրվեցին գյուղացիութեանը խորապես հուզող պահանջներ: Այնպիսի հրատապ խնդիր, ինչպիսին էր ազրաբային հարցը, որը կարող էր գյուղացիութեան լայն զանգվածներին ոտքի հանել կառավարութեան և ֆեոդալների դեմ, փաստորեն մղված էր հետին պլան:

2. Չնայած ապստամբութեան ղեկավարների մի շարք փորձերին՝ թուրքիկների տարածում և այլն, բրգական ազգային-ազատագրական շարժման և արաբ աշխատավորների՝ Իրաքի կառավարութեան և անգլիական իմպերիալիզմի դեմ պայքարի կապը թույլ էր:

²⁹ ИГАОР СССР, ф. 1459, от. 3, с. 1453, а. 18.

3. Եթե բարդանցիները և նրանց միացած բեր-
զարնակ մի շարք շրջանների բնակիչները պայքար-
ում էին իրարջան կառավարության և անդլիական
իմպերիալիզմի դեմ, ապա քրդական ֆեոդալական
ավազանու որոշ մասը գտնվում էր անդլիական
գործիչների ազդեցության տակ և կաշառված էր
նրանց կողմից: Քուրդ ֆեոդալների այդ հատվածը
կամ չէր մասնակցում ասպատակությանը, կամ էլ
բացահայտորեն պայքարում էր նրա դեմ: «Բար-
զանու ասպատակության անհաջողության պատ-
ճառը,— գրում են Լոնգրիգը և Ստոուքսը,— այն
էր, որ կառավարությունը քաղաքական և ֆինան-
սական միջոցներով Բարդանու համազգիներին
զրավեց իր կողմը»³⁰:

4. Վերջապես ասպատակության պարտության
կարևոր պատճառներից էր անդլիական օգնության
չնորհիվ կառավարական զինված ուժերի անհամե-
մատ զերակշռությունը:

Բարդանու և նրա կողմնակիցների Իրանական
Քուրդիստան անցնելուց հետո, ցանկանալով ար-
զիլքներ հարուցել Իրաքի և Իրանի ազգային-ազա-
տագրական շարժման մասնակիցներին մերձեցման
դեմ, անդլիական գործակալները եռանդուն գոր-
ծունեություն ծավալեցին Իրանի քրդերի մեջ:
Նրանք լուրեր էին ատրածում այն մասին, որ իբր
Իրաքից եկած բուրդ ասպատակները անդլիական

լրտեսներ են, որոնք հանձնարարություն ունեն
ջլատելու Իրանի քրդերի ազգային-ազատագրական
շարժումը: Սակայն այդ պրովոկացիան հաջողու-
թյուն չունեցավ:

Ասպատակության ճնշումից հետո էլ Քուրդիս-
տանում տեղ-տեղ շարունակվում էին զինված ընդ-
հարումները կառավարական ուժերի և քրդա-
կան ջոկատների միջև: 1946 թ. ապրիլին, այդ
կարգի ընդհարում տեղի ունեցավ Բարդանում:
Կառավարությունը 2000 զինվոր ուղարկեց էրբիլ,
ինչպես նաև զինված ջոկատներ Մոսուլի, Կիրկուկի
և Սուլեյմանիեի շրջանները³¹:

Իրաքի կառավարությունը միջոցներ ձեռնարկեց
Քուրդիստանում նոր շարժումները կանխելու հա-
մար: Պրեմիեր-մինիստրը անձամբ շրջագայեց
քրդական զավառները և շանք գործողրեց նախկին
կարգ ու կանոնը վերահաստատելու ուղղությամբ:
Կառավարության խոստման համաձայն Քուրդիս-
տանում պետք է ավելացվեր զպրոցների և հիվան-
դանոցների թիվը³²:

Մյուս կողմից ձեռնարկվեցին պատժիչ միջոցա-
սումներ ասպատակության մասնակիցներին նկատ-
մամբ: Էրբիլում կազմվեց ուղղմական գաղտարան:
Ասպատակության հարյուր տասնմեկ մասնակից-
ների, այդ թվում և Մուլլա Մուստաֆային, նրա բա-

³⁰ St. Longrigg and Fr. Stoakes, Iraq, p. 210.

³¹ ИГАОП СССР, ф. 145), он. 3, ел. xp. 1633, а. 31.

³² Longrigg, էջամ աշխ., էջ 237:

ցակայութեամբ, գատապարտեցին մահվան, 76 մարդու՝ ցմահ բանտարկութեան: Քուրդիստանում արգելվեցին ատաշաղիմական բոլոր կազմակերպութիւնները: Ուսանողներին, բանվորներին, բժիշկներին նվագազույն կառավածների գեպարում հեռացնում էին բուհերից և աշխատանքից: Կառավարութիւնը հատուկ զաժանութիւն էր հանգես բերում այն բուրդ սպաների նկատմամբ, որոնք անցել էին ապստամբների կողմը: Նրանցից մի քանիսը մահվան գատապարտվեցին կախազանի միջոցով: Նրանք մինչև վերջ էլ ցուցաբերեցին անընկճելի կամք և անսահման նվիրվածութիւն իրենց ժողովրդի ազատագրական գործի նկատմամբ: Երբ ապստամբութեան ակտիվ մասնակից, բուրդ կապիտան Մուսաֆա իւնչանլին մտաեցրին կախազանին, նա ուստիկաններին դիմելով, հպարտորեն հայտարարեց. «Պահիճներ, ասացեք ձեր տերերին, որ իմ արյան վրեժը կլուծվի: Ես չեմ հաշտուում ձեր ուժին... Ես հպարտանում եմ այն մտքով, որ իմ անունը կհիշվի իմ հայրենակիցներին կողմից նրանց շարքում, ովքեր իրենց կյանքը զոհեցին Քուրդիստանի վեհութեան ու երջանկութեան համար»³³: Մայր Իզնիք Արդուլ Ազիզը մահապատժից առաջ ասել է. «Իմ և իմ ընկերների արյունով է ոռոգված ազատութեան ծառը: Ուզում եմ հուսալ, որ նա շուտով կծաղկի և ազատութիւն ու երջան-

33 197. حیدرات ۱۹ حیدرآباد

կութիւն կտա հայրենիքին: Մահ իմպերիալիստներին և նրանց ստոր ծառաներին»³⁴: Բացառիկ հերոսութեան օրինակներ ցույց տվեցին նաև մահապատժի գատապարտված կապիտան Խեյրուլլա Արդուլ Քերիմը և լեյտենանտ Մահմեդ Մահմուդ Քուդսին³⁵: Ահա բուրդ նահատակների պատմական վերջին նամակը՝ գրված մահապատժից առաջ.

«Մեր սիրելի բուրդ եղբայրներ:»

Այս նամակը գրում ենք մեր մահապատժի վճիր մեզ հայտնելուց մեկ ժամ հետո:

Եղբայրներ, երբ գրում ենք ձեզ այս նամակը, իմպերիալիզմի լծի տակ ճնշված մեր կյանքը կշարունակվի եւ 14 ժամ, որից հետո զահիճների պարտը սեզմելու է մեր կոկորդը: Մեր հոգիները միանալու են մեզանից առաջ հայրենիքի ու ազատութեան համար նահատակված ընկերների հոգիներին:

Եղբայրներ, մենք չափազանց ուրախ ենք և հպարտ այն համոզմունքի համար, որ շենք դրացել կատարելու մեր սրբազան պարտականութիւնները մեր պայքարող ժողովրդի նկատմամբ:

Կոչ ենք անում ձեզ՝ եղբք միասնական, ամրացրեք ձեր շարքերը և ամենայն համարձակութեամբ, անձնվեր կերպով պայքարեցեք ոչնչացնելու մեր երկիրը ճշնոյ իմպերիալիզմը: Քրանով իսկ

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

դուր կազատագրեք նրա ճիւղերն որովհետեւ հեծող բոլոր ժողովուրդներին ու ազգութիւններին:

Ներայրներ, սոցիալիստներ մեր սիրելի թշնամին է: Մարտիչներ նրա դեմ ձեր բոլոր ուժերով:

Մեր նահապետներ բուրգ ազգի ազատութեան համար մղած պայքարի լավագոյն ապացոյցն է:

Գուր պարտավոր եք պայքարել հանուն ձեր պատիւի և հայրենիքի: Մեր ժողովրդի ազատագրումը անխուսափելի է:

Ներայրներ, կախազանի մահաբեր սյուներն անգամ անկարող են սասանելու բոլորիս հողում բուն դրած վերջնական հաղթանակի վսեմ հազատքը:

Մենք ազատութեան մարտիկներս ոչ մի ջանք չենայնցիք մեր հարստացած ժողովրդի փրկութեան համար, դրա հազատի վկայութիւնը մեր այստեղ, կախազանի առաջ գտնվելն է:

Առաջ, դեպի միասնութիւն, դեպի ազատութիւն:

Կեցցե՛ք բուրգը, կեցցե՛ք Քուրդիստանը»³⁶:

Իրարի կառավարութիւնը Քուրդիստանում ծագած ապստամբութեան ճնշումը համարում էր մեծ հաղթանակ: Խնամակալ Արդու Իլահը հատուկ շնորհավորեց բանակին և պարզակարեց ապստամբութիւնը ճնշելու գործում արի ընկածներին³⁷: Քրդերի դեմ գործադրող սեպրեսիվ միջոցառում-

ները լրիվ հազանութիւն էին գտնում Անգլիական կառավարութեան կողմից: «Արեւմտյան տերութիւնները պաշտպանում են բոլոր այն միջոցառումները, որ ձեռնարկում են Անկարայի, Բաղդադի և Քեհրանի բռնակալները՝ քրդերի դեմ պայքարելու համար»³⁸. — դրում էր «Բալկան և Մուսլիմ Օրիան» հանգերը:

Քուրդիստանում, ապստամբութիւնը ճնշելուց հետո, փոքր ինչ խաղաղ շրջան սկսվեց, սակայն քրդական հարցը լուծում չստացավ: Քրդական ազգային-ազատագրական շարժման պատճառները շարունակում էին գոյութիւն ունենալ, որոնք, քականդար, հանգելու էին նոր պայքարի:



Ներկորդ համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր և Միջին արևելքում սկսվեց ազգային-ազատագրական հսկելու շարժում իմպերիալիզմի տիրապետութեան դեմ: Գնալով աճում էր դեմոկրատական ուժերի ազդեցութիւնը, ընդլայնվում նրա ոլորտը: Անգլիական զենեքալ Սպիտը դրում էր. «Ձաւրմանայի է, որ կոմունիզմի դժգոհունեւ տարածվում է մուսուլմանական երկրներում, որտեղ կրոնական բոլոր սամունքները և պատմական ամբողջ անցյալը հանդիսանում են նրա մեք-

³⁶ ۱۹۷۰ «تات» ۱۹ حوزیوان

³⁷ Longrigg, հղած աշխ., էջ 327.

³⁸ «Les Balkans et le Moyen-Orient», 1955, № 4-5, p. 10.

ծումը, աճում է ուստական ազգեցությունը, այն դեպքում, երբ մերը գնալով ավելի ու ավելի է թուլանում: Չի կարելի ժխտել, որ կոմունիզմը տեղումների նման գալիս է Միջին արևելքի վրա»³⁹,

1945 թ. հետո էլ Իրաքի քրդական շարժումները դարձյալ կազմում էին բազկացուցիչ մասը աշխատավորական շնորհվածների այն ընդհանուր պայքարի, որը մղվում էր տեղական սեակցիայի և անգլիական իմպերիալիզմի տիրապետության դեմ: Ահա թե ինչու անգլիական «Ուորլդ Ռեվյու» թերթը իմպերիալիզմի դեմ ըմբոստացող «վտանգավոր կետերից» մեկն էլ համարում էր Քուրդիստանը: Նշելով, որ «Արևմտյան արևելքում այժմ (1946 թ. —Շ. Մ.) տիրող դրություն կապակցությամբ ակտուալ է դառնում Քուրդիստանի հարցը», այդ թերթը գրում էր. «Քրդական շարժման ղեկավարները ձգտում են բոլոր քրդերի ազատագրմանը, իսկ դա կնշանակի նալթալիս բոլոր շրջանների ներգրավում Քուրդիստանի մեջ, ինչը ձեռնառն չէ (ընդգծումը մերն է) —Շ. Մ.) Անգլիային և նրա գաշնակիցներին»⁴⁰,

Քրդական ազգային-ազատագրական շարժումների դեմ իմպերիալիստական տերությունները կիրառեցին մի շարք գաղտնի պայմանագրային միջոցառումներ:

³⁹ „The Daily Telegraph and Morning Post“, 3 հունվարի 1947թ.

⁴⁰ „The World Review“, 14 ապրիլի 1946թ.

Իրաքի, Քուրդիստանի, Իրանի և արևմտյան տերությունների համառոտ միջոցառումները քրդական շարժումների դեմ արգարացվում էին նրանով, որ իրր գրանք «Հրահրվում են Մոսկվայի կողմից»: Քրդական շարժման գործիչներից մեկը «Լը պրոգրես էթիպսիկն» թերթում դիպուկ կերպով նշում էր. «Մոսկվայի ձեռքը տեսնել ամենուրեք, որտեղ կա զժգոհություն (ապստամբություն), դա, անաղնիվ խաղ է: Միջին Արևելքում քրդերի ապստամբությունները անպայմանորեն հանդիսանում են ինքնուրույն շարժումներ, որոնց էություն մեջ տեղ չունի սովետական և ոչ մի ինտրիգ: Ինչու՞ այս տագնապի պատճառները սրունել այդքան հետու: Եթե կա ապստամբություն, ուրեմն կա զժգոհություն, իսկ զժգոհ ու ճնշված ժողովուրդը կարիք չունի արտասահմանից հրահանգ ստանալու, որպեսզի պահանջի իր իրավունքները»⁴¹: «Ուորլդ Ռեվյու» թերթը արգարացնում էր 1946 թ. Քուրդ-իրաքյան պայմանագիրը, որը ուղղված էր քրդական հնարավոր շարժման դեմ: «Քրդական «Պիեմոնտի» ստեղծումից հետո (խոսքը վերաբերվում է 1946 թ. քրդական ավտոնոմ սեպարատիստային, Իրանական Քուրդիստանում, Շ. Մ.) հնարավոր կլինի քրդերի ընդհանուր ապստամբություն հայտարարել Քուրդիստանի և Իրաքի դեմ: Գրա համար էլ, — եղրակայրնում է հոգվածագիրը, — հեշտ է հասկանալ, թե

⁴¹ „Le Progrès Egyptien“, 20 մայիսի 1946թ.

ինչու այդ երկու երկրների կառավարությունները շտապեցին պայմանադիր կնքել, նպատակ ունենալով սակզմել ընդհանուր ճակատ ընդդեմ ուսահան հեարաժար հարձակման, որի մեջ բրդերը կարող էին խաղալ հրահրողի դեր»⁴²:

Հայանի է, որ 1946 թ. փետրվարի 28-ին Նուրի Սաիբը մեկնեց Անկարա թուրքական կառավարության հետ բրդական ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարի համատեղ միջոցառումների պլան մշակելու համար: Թամբուն այդ առթիվ գրում է. «Ժժվար էր գտնել ազգելի լավ դիվանագետ, որը կարողանար բանակցություն վարել այդ հարցի շուրջը... նա ծագումով քուրդ է, պատկանում է իրարյան ազգություն և բազմիցս եղել է արտաքին գործերի մինիստր. ի զեւոյ, զա շահերտաժար նշան է այն բանի, որ քուրդեր արժանի են իրենց հարեաններին: Վերջուպես նա անզիացի է բաղաբուկանության մեջ... Անկարայում կիտուի ոչ թե քուրդը, կամ իրարցին, այլ, ըստ երևույթին, անզիացին»⁴³:

Անկարայի բանակցությունները, որոնք պարուրված էին գողտնապահության քողով, ուղղված էին բրդական շարժումների դեմ: Անզիական «Դեյլի Մեյլ» թերթի նրուսազանի թղթակիցը 1946 թ. գրում էր, որ Թուրքիայի և Իրաքի միջև պայմանա-

դիր կնքելու անհրաժեշտությունը ծագում էր Սաադարադի քառակողմ պակտի «անհարողության մասնակցութե փաստից», ինչպես նաև բրդական հարցից, որը ամենակատանգավոր սպառնալիք է Միջին արևելքի խաղաղության համար»⁴⁴:

Քրդերի դեմ ուղղված միջոցառումները քողարկվում էին «Տիրքիս գետի քրերի օդապարծման» վերաբերյալ խոսակցություններով: Անկարա Պայաս հյուրանոցի 1946 թ. մարտի 29-ի պրես-կոնֆերանսում լրագրողներից մեկը Նուրի Սաիբին զիմեց այնպիսի հարցով՝ «Զեյթ քարեհամբ, պարտե մինիստր, մեկնարանել այն լուրերը, որոնց համաձայն մտա ծամանակներս օտորագրված պայմանագրի կից լրացուցել համաձայնագրերը վերտրերում են թուրքերի և իրարցիների հակաբրդական համատեղ միջոցառումներին, որոնք թույլտարում են երկու երկրների զինված ուժերին բրդերին հետապնդելիս անցնել իրենց պետության սահմանը»⁴⁵: Նուրի Սաիբը «գաժան հայացք» նետելով լրագրողի վրա, պատասխանել է. «Ամենին, համաձայնագրերը վերտրերում է այն միջոցառումնե-

⁴² „The World Review“, 16 հունիսի 1946թ.

⁴³ Ramhoul, նշված աշխ., էջ 125:

⁴⁴ նույն աղբյւր, էջ 127: (Ստեյնթ. — Սաադարադի պակտը կնքվեց 1927 թ. Թուրքիայի, Իրաքի, Իրանի և Աֆղանստանի միջև: Նրա հիմնական կետերից մեկը սահմանակից շրջաններում ցեղերի խլրտումների դեմ համատեղ պայքարելու մասին էր: Ստեյնթ. — Գ, Մ.):

⁴⁵ „Les Balkans et le Moyen-Orient“, 1955, № 25, 20.

րին, որոնք պետք է իրականացվեն Տիգրիսի ջրերի վրա հսկողություն սահմանելու համար»⁴⁶։

Իրաբա-Յուրբաական պայմանագիրը կոչվում էր «Պայմանագիր Յուրբ-իրաբյան բարեկամության և բարի դրացիական հարաբերությունների մասին»։ Աչտազրավ է, որ այն մասնակի, երբ մեկնեց Անկարա, նուրի Մաիզը կառավարության անդամ չէր և պրեմիեր Քելիֆիկ Սուվեյզին (որին համարում էին «լիբերալ») նրանից պահանջել էր Յուրբիայի հեռ շատրպի «բազարական հողամենք պարունակող ոչ մի պայմանագիր», այլ սահմանափակվել «տեխնիկական հարցերով»։ Մակայն պայմանագիրը կնքվեց, որով շահագրգռված էին Իրաբի ռեակցիոն շրջանները և Անգլիան։



1947 թ. սկզբներին Իրաբի կառավարությունը սահմանական գրույթուն մտցրեց Քուրդիստան-Իրան սահմանային շրջաններում։ Բուրբ բազաբացիական օրենքները զազարեցին գործնուց և կարգը պահպանելու պատասխանավորությունը գրվեց

⁴⁶ Նույն տեղում։ Մանք.— Լոգովագիրք նշում է նաև, որ ջրերի գեմ ուղղված միջոցառումների վերաբերվող հարցի բարձրացումը խիստ գայրացրեց նաև անգլիական «Փայմոս թերթի թղթակցին և նրանից ավելի «Միլլի էմերթին» (լրատուության և հակայրոտուության Յուրբական ծառայության աշխատակիցներին)։

հյուսիսային շրջանի գինվորական հրամանատարի վրա»⁴⁷։

Չնայած այդ միջոցառումներին, Սուլեյմանիեում տեղի ունեցած ժողովրդական լայն զանգվածների ցույցեր, որոնցում ակտիվ դեր էր խաղում առաջադեմ երիտասարդությունը։ Յուջարարները պահանջում էին՝ ներում շնորհել 1945 թ. ապրտավրոսյան մասնակիցներին։ Աստիկանությունը հայածեց ցուցարարներին, հաստիկ զաժանություն ցուցարեբեց ժողովրդական պայքարի ավանգարդի՝ կոմունիստների նկատմամբ⁴⁸։

1947 թ. սկզբներին Բազազում ոստիկանությունը ձերբակալեց շուրջ հարյուր արաբ և բուրգ կամունիստների, այդ թվում կոմպարտիայի գլխավոր բարաուզար Յուսեֆ Սալմանին⁴⁹։ Իսկ հետագայում ձերբակալություններ կատարվեցին նաև մյուս բազարներում... Բարայում ձերբակալվեց Արգուլ Էմիր Գերվիլը, նասիրիում՝ Ալի ալ Վասսիար, Քուլում՝ Քասիմ Ռասաֆը, Կիրկուկում՝ Աթա Արգուլ Կադիրը⁵⁰, Թեակցիայի կամբին հակառակ, Իրաբի կոմունիստական պարտիան շարունակում էր պայքարը աշխատավորության շահերի համար։ Կոմպարտիան կոչ էր անում բուրբ արաբ, բուրգ և

⁴⁷ «КОМУНИСТ», 16 մայիսի 1947 թ.

⁴⁸ ЦГАОР СССР, ф. 4459, 101. 3, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000.

⁴⁹ Նույն տեղում։

⁵⁰ Նույն տեղում։

մյուս ազգություններին՝ միավորել և միասնական պայքարով հասնել ազգային նպատակների իրագործմանը:

1947 թ. երկրում «կարգ ու անդորրություն հաստատելու համար» նորից իշխանություն գլուխ անցավ անգլիական իմպերիալիզմի փորձված ժառանգ՝ Նուրի Սաիդը: Տակտիկական նկատառումներով, նա սկսեց պարտիաների հետ բանակցել՝ իբր նրանց կառավարության գործերին մասնակից դարձնելու, ինչպես նաև պառլամենտական «ազատ» ընտրություններ անցկացնելու և երկրի քաղաքականությունը որոշելու հարցերի շուրջը: Սակայն իրականում Նուրի Սաիդը շարունակեց կառավարության նախկին քաղաքականությունը: Բացի կոմունիստներից ձերբակալվեցին նաև արհմիութենական շատ գործիչներ, որոնք մեղադրվում էին «հակապետական», այսինքն՝ ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու մեջ: Իսկ «ազատ» ընտրությունները հատկապես Քուրդիստանում տեղի ունեցան լարվածության և տետրի պայմաններում, ղեկուսատների նախօրոք կազմված և անգլիական խորհրդականների հավանությունը արժանացած ցուցակներով:

Կառավարությունը կոմպարտիայի ազդեցությունը թուլացնելու համար օգտագործում էր ոչ միայն հայաձայնը և ձերբակալումները, այլև սուսհող պրոպագանդան այն մասին, որ իբր այն համարվում էր «Սիոնիստական կազմակերպության ֆի-

լիալը»: 1947 թ. պրես-կոնֆերանսում Նուրի Սաիդը հայտարարեց, որ «Կոմպարտիան նշուխան օգնություն է ստանում սիոնիստներից»⁵¹: Նույնպիսի զրպարտանքով հանդես եկավ նաև «Ալ Վադի» սեակցիոն թերթը, որ իբր «Կոմպարտիան միջոցներ է ստացել Պաղեստինի սիոնիստական միութունից», «Կոմպարտիայի 80 սովետ հրեաներ են» և այլն⁵²: Դրանով կառավարությունը և նրա օրգանները արդարացնում էին ձախ կազմակերպությունների և տարբեր, առաջին հերթին կոմունիստների հետ հաշվհարդարը:



1947 թ. մեքչերին, Նուրի Սաիդի կամակատար պառլամենտը, որը «մեծ մասամբ կազմված էր հոնդաներից, շեյխերից և խոշոր առևտրականներից»⁵³, կոչված էր հավանություն ապառ Անգլիայի հետ նոր պայմանագիր կնքելու խնդրին:

Հանդես գալով Անգլիայի հետ պայմանագիր կնքելու գեծ, Իրաքի կոմունիստական պարտիան «Աշ-Շաար» և «Ալ-Իթթիհադ ալ-Վաթանի» պարտիաները միաժամանակ պահանջում էին՝ անգլիական զորքերը դուրս բերել Իրաքից և շեղյալ հայտարարել 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագիրը:

⁵¹ ИГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 2022, а. 3.

⁵² Նույն տեղում:

⁵³ «The Scottsmen», 5 մարտի 1952թ.

«Գործնականում պարզվեց, — գրում էր «Ալ Վաթան» թերթը, — որ Անգլիայի կողմից ՄԱԿ-ի կանոնադրության ճանաչումը ձեռնարկելու է, քանի որ նա հաշտվել չի առնում ուրիշ երկրների իրավունքները և շահերը: Ֆազիլ Զամալիի հետ դրույցի ընթացքում թվիներ նշել էր, որ բարեկամությունը ավելի լավ է, քան բանակները: Բայց ո՞ր է այդ բարեկամությունը, որն է կոչվում «Անգլիա»⁵⁴, Ահա այսպես, Իրաքում իմպերիալիստական տիրապետության դեմ դրույթուն ունեցող խորը զգոհությունն իրագրության պայմաններում նախագծվեց 1948 թ. անգլո-իրաքյան պայմանագիրը, որը հետո հայտնի դարձավ «Պորտամուտյան պայմանագիր» անունով:

Այս պայմանագիրը, փաստորեն, ոչնչով չէր տարբերվում 1930 թ. ստրկացույցի պայմանագրից: Ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեցող Հարթանիեի և Շայբեի օդանավային բազաները պետ էր գտնվեին Անգլիայի ձեռքում, անգլիական օդային ուժերը կարող էին ազատորեն օգտվել Իրաքի բոլոր օդանավակայաններից: Բացի այդ, նախատեսվում էր ստեղծել անգլո-իրաքյան «համատեղ պաշտպանության կոմիտե»՝ այդպիսով, Իրաքի ռազմական ուժերը կարող էին երկրում և երկրից դուրս օգտագործվել անգլիական իմպերիալիզմի շահերի համար: Իսկ ինչ վերաբերվում է անգլիական զինված ուժերի՝ Իրաքում ա-

զատորեն շարժվելու իրավունքին, այս դժվար չէ կուսհել, որ դա ուղղված էր ազգային-ազատագրական շարժումների դեմ: Պորտամուտյան պայմանագիրը դավաճանական նոր քայլ էր Իրաքի ազգային շահերի դեմ:

1948 թ. հունվարի 15-ին, Պորտամուտյան պայմանագրի նախագիծը հրատարակվեց մամուլում: Այդ նախագիծը այն աստիճան վառ ընդունվեց ժողովրդական զանգվածների կողմից, որ նույնիսկ ձախ ուժերից հետո կանգնած տարրերը հանգես կլան նրա բննադատությամբ: Կոմունիստական, Ազգային-դեմոկրատական և Անկախության պարտիաները կոչ արեցին պայքարի դուրս գալ այդ պայմանագրի դեմ: Ի նշան բողոքի, Բազդադի համալսարանի իրավաբանական և ինժեներական ֆակուլտետների ուսանողները կոռոյա զասադուլ հայտարարեցին: Նրանց զասադուլին ստիկանությունը պատասխանեց կրակոցներով: Այդ դեպքից հետո, միջնակարգ զպոցների աշակերտները փողոց դուրս եկան «Կուրլի պայմանագիրը», «Պահանջում ենք Իրաքի անկախությունը» լոզունգներով: Բազդադում բռնկվեց ապստամբություն:

Պորտամուտյան պայմանագրի դեմ բողոքի լայն ալիք տարածվեց նաև Իրաքյան Քուրդիստանում: Կոմունիստական պարտիայի և Քրդական դեմոկրատական պարտիայի ընդհատակյա կազմակերպությունները աշխատում էին կազմակերպված բնույթ առ ժողովրդական կույրքներին: Կոմպար-

⁵⁴ «الوطن» 12 مارس 1947

տիայի բրդական սեղցիայի «Աղաղի» թերթը ցույց էր առնում պայմանագրի հակաժողովրդական բնույթը⁵⁵։ Քուրդիստանի ժողովրդական լայն զանգվածները պայքարի էլան անգլո-իրաքյան այգ գործարքի դեմ։ Ցույցերի մասնակիցները, արտահայտելով իրենց համակրանքը Սովետական Միության նկատմամբ, պահանջում էին անգլիական իմպերիալիստների վտարում Իրաքից։ «Սուլեյմանիեում», — գրում է Լոնգրիգը, — ցուցարարները գտնում էին ուսաներին... և շարաշար վերաբերվում անգլիացիների հետ։ Նրանք անգլիական մի դասատուի վանդեցին քաղաքից և այրեցին անգլիական հիմնարկները⁵⁶։ Կառավարական ուժերը, բրդական պրոֆմպերիտական Ֆեոդալական վերնախավի մասնակցությամբ, զնդակոժեցին ցուցարարներին, սպանվեցին և վերավորվեցին բազմաթիվ քուրդ հայրենասերներ։ Հակա-իմպերիալիստական ցույցեր տեղի ունեցան նաև Կիրևուկում, Մոսուլում և էրբիլում⁵⁷։

Կոմունիստական պարտիայի և բրդական զեմուկրատական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ, Իրաքի քուրդ աշխատավորությունը արար աշխատավորության հետ համերաշխ պայքարի էլավ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Իրաքի ծա-

խու կառավարողների և անգլիական իմպերիալիզմի։

Կառավարությունը և խնամակալը շամարձակեցին բանակը արարքից հանել Ելույթները ճնշելու համար։ Նրանք վախենում էին, որ ինչպես սպայական կազմի, այնպես էլ զինվորների մեջ խժորվող հակաբրիտանական արամադրություններ կարող էին հասցնել բանակի և ցուցարարների միացմանը⁵⁸։ Ուստի որոշվեց ժողովրդական հուզումները ճնշել միայն ուստիկանությամբ միջոցով։ Սակայն մի բանի արարական և բրդական շրջաններում գործի գրվեցին նաև զինվորական ջոկատները։ «Զրահայտու կառքերը Ամարայի, էրբիլի, Սամավայի, Շամիևի և Պատրաի գյուղական շրջաններում մեջ գեղացրային կրակ բացին գյուղացիներու վրա»⁵⁹։ Բաղդադի ուստիկանությունը տեղավորվել էր քաղաքի խաչմերուկներում և տանիքներին, որպեսզի գեղացրով պատասխանի ժողովրդական զանգվածների Ելույթներին։ Այդպես էլ եղավ, ցուցարարները զնդակոժեցին։ Ողան բազմաթիվ զոհեր։ Բաղդադի կենտրոնում, Տիգրիսի կամուրջի վրա տեղի ունեցավ խնդկան ճակատամարտ ցուցարարների և ուստիկանության միջև։

Երկրում ստեղծված լարված գրություն հետևվանքով Սալեհ Զարրի կառավարությունը բնկավ։

⁵⁵ Longrigg, նշված աշխ. էջ 355.

⁵⁶ Նույն անգում.

⁵⁷ ИГАОП СССР, ф. 4459, об. 2, с. 1. хр. 2022, а. 19.

⁵⁸ „The Spectator“, 25 հունիսի 1948թ.

⁵⁹ Հովն. Աղաջյան, Արարական ազգային-ազատագրական գարթոները, Թեյրոթ, 1959, էջ 84.

Անգլիական իմպերիալիզմի հյուսիսային տարածումը, հրկրի դեմոկրատական շարժման մուլի թշնամի նույրի Սախրը ժողովրդի զայրույթից փրկվելու համար ապաստան գտավ Քուրբիալում: Երկրից փախավ նաև Զարբը: Անգրազանդալով 1948 թ. դեպրիբին և կառավարության հրաժարականին, անգլիական «նաչթինթ սենյորի էնդ աֆտեր» հանդեսը գրում էր. «Մալեհ Զարբի կառավարությունը, որը հունվարի 15-ին Անգլիայի հետ ստորագրեց Պորտսմութի պայմանագիրը, տապալվեց Բաղդադի կենտրոնում դանդաղ կամուրջի վրա տեղի ունեցած արշուևալի մարտից հետո, մարտ, որի ընթացքում սպանվեցին 32 ցուցարարներ և անհայտ թվով ոստիկաններ... Այդ գրությունը շահամանավակվեց մայրաքաղաքով: «Փողոցը» տիրապետում էր քրդական մայրաքաղաք Մուլդամանիեում, Հյուսիսային Իրաքում, էրբիլում, նավթային քաղաքներ Կիրկուկում և Մոսուլում»⁶⁰:

Պորտսմութի պայմանագրի դեմ ուղղված ելույթները իսկական համաժողովրդական բնույթ ունեին: Այդ ելույթներին մասնակցեցին ոչ միայն արաբ և քուրդ աշխատավորները, այլև աղջային փոքրամասնությունները, այդ թվում և հայերը: «Արաբ և քուրդ հայրենասերներու կողքին, գրում է Հովհ. Աղբաշյանը, խոշտանգվեցան և նուրի Սախրի բանակրուն մեջ երկար տարիներ արգելափակ-

վեցան նաև շարք մը հայ հեղափոխական աշխատավորներ»⁶¹:

Արաբ-քրդական ժողովրդական զանգվածների հուժկու շարժման առաջ կառավարությունը նահանջեց: Իրաքի պետամենտը հրաժարվեց պայմանագիրը հաստատելուց: Այսպիսով ձախողվեց «համատեղ պաշտպանություն» ստեղծման նոր փորձը:



1949 թ. վերջերին նուրի Սախրը իշխանության գլուխ անցավ, կազմեց նոր կառավարություն, որը միջոցներ ձեռք առավ Երկրում «հանդիստ վիճակ» հաստատելու համար: Սկսեց մոլեգնել սև սեակցիան: Բանտերը և համակենտրոնացման ճամբարները լցվեցին բանվորներով, ուսանողներով, գյուղացիներով: Երևացին կախաղաններ: Նուրի Սախրն այս անգամ էլ հիմնական ժանր հարվածը ուղղեց ժողովրդական պայքարի ավանգարդի՝ Իրաքի կոմունիստների դեմ: «Ներկա պահին,— գրում էր մեծերկյան «Կրիստեն սայենս մոնիտոր» թերթը,— Իրաքը ղեկավարում է կոմունիզմը արաբական երկրներում արմատախիլ անելու պայքարը: Պրեմիեր-մինիստր նուրի Սախրը արտակարգ միջոցառումներ էրկար ցուցակին վերջերս ավելացրեց

⁶¹ Հովհ. Աղբաշյան, Արաբական ազգային-ազատագրական պայքարը, էջ 108.

⁶⁰ «The Nineteenth Century and After», 1918, №4, p. 21.

ևս մի գեկրեա... որի համաձայն դատապարտված կոմունիստները կրկրվեն Իրաքի քաղաքացիութիւնից և կարտաքսվեն երկրից»⁶²։ Իրաքի իշխանութիւնները դիմեցին նաև հարևան երկրներին՝ Սիրիային և Լիբանանին, կոմունիստների դեմ համատեղ պայքարելու համար։

Իրաքի կոմունիստական պարտիան գործելով բնոյհատակյա ծանր պայմաններում ակտիվ գործունեութիւն էր ծախալում արքա և քուրդ բանվորների, գլուղացիների, ուսանողների շրջանում, մերկացնում կառավարութիւն հակաժողովրդական քաղաքականութիւնը, պաշտպանում քրդերի ազդային իրավունքների ճանաչման խնդիրը։ «Իրաքի կոմունիստական պարտիան ակտիվորեն պաշտպանում է նաև քրդական նացիոնալիզմը.— դրում էր լոնդոնյան «Ֆորեյն ռեպորտ» բլուզետները»⁶³։

Բանաւերում և համակենտրոնացման ճամբարներում տիրում էին անմտորդկային պայմաններ, որոնք քննարկման առարկա էին զանում ոչ միայն Իրաքում, այլև նրա սահմաններից դուրս։ «Հայտնի է, որ,— գրում էր Քեպլան է Մուսայն Օրիանը»,— ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովին պետք է հանձնվի քոզոք, Իրաքի բաւաւերում և համակենտրոնացման ճամբարներում տիրող անմարդկային պայմանների մասին։ Նուկրատ աւ-Սալմա-

նի բաւաւում հոյի կանայք և փոքրահասակ երեխաները ենթարկվում են սատիկանների դաժան վերաբերմունքին։ Վերափոխները և հրվանդները նետված են վատառողջ խցիկները, աւանց որնէ խնամք»⁶⁴։ Հարցաքննութիւնները ժամանակ բանտարկյալները ենթարկվում էին դաժան տանջանքների, «պոկում են նրանց մաղերը, նրանց ծնծում ավազով լցված պարկերով, անընդհատ մեկ տաք, մեկ սաղր ջուր են լցնում նրանց վրա»⁶⁵։

Նուրի Սաիդի հակակոմունիստական մուլտցքը ավեր էր գործում նաև բանակում։ Բանակի բոլոր ստորաբաժանումներում ստեղծվեց հատուկ ապարատ, որի խնդիրն էր՝ տեղեկագիր պատրաստել յուրաքանչյուր զինվորի, սպայի քաղաքական հայացքների, կապերի մասին։ Այդ ապարատի ցուցմունքների հիման վրա բանակից հեռացվում էին բոլոր նրանք, ովքեր հակաիմպերիալիստական, հակակառավարական տրամադրութիւններ ունեին⁶⁶։ «Լիվա էլ-իստիլլալ» թիւթը գրում էր. «Թանակից հեռացվում են բոլոր ազգային հայատարած տարերբը, հատկապես սպաները։ Սպայական կազմը համարվում է Իրաքի ժողովրդի դավաճաններից և կարիերիստներից, որոնք իրենց բախտը կապել են անգլիական իմպերիալիզմի հետ»⁶⁷։

⁶² The Christian Science Monitor, 30 սեպտեմբերի 1954թ.

⁶³ Foreign Report* 22 մարտի 1951թ.

⁶⁴ Les Balkans et le Moyen-orient*, 2 մարտի 1953թ.

⁶⁵ Նույն տեղում.

⁶⁶ Panorama, 1947, № 12, էջ. 76.

⁶⁷ لواء الاستقلال، ٢٠٤ كانون الثاني ١٩٤٧

Նուրի Սաիրի հակահոմոսեքսուալական տենդը հասցրեց այն բանին, որ դեռևս 1947 թ. ձերբակալված կոմունիստ ղեկավարները մահապատժի դատապարտվեցին: Դատավարության ժամանակ կոմպարտիայի ղլխավոր բարտուղար Տրուսֆ Սալմանը (Ֆասեղ), քաղբյուրոյի անդամներ Զարի Բասիմը, Հուսեյն աշ-Շարբրին և մյուսները խիզախորեն մերկացրին կառավարության սեակցիոն քաղաքականությունը: Չնայած, որ առաջադրված մեղադրանքներից ոչ մեկը հիմնավորված չէր, նրանց նկատմամբ մահապճիճ կայացվեց: Մահապճիճը միառժամանակ հետաձգվեց հասարակայնության մասսայական բողոքի հետևանքով: Սալիայն, 1949 թ. փետրվարի 14-ին Նուրի Սաիրի անձնական շահերնով այն ի կատար ածվեց: Կոմունիստ-հայրենասերները կախաղան բարձրացվեցին: «Ես մեռնում եմ իբրև կոմունիստ, իսկ կոմունիզմը մահվանից հոդ է».— զահիճներին ասաց Ֆասեղը: «Ինչո՞ւ եք լալխ մայրիկ,— ասաց Զարի Բասիմը գիմեյով մորը,— դուք պետք է հպարտանար, որ ձեր որդին մեռնում է իբրև կոմունիստ: Իմացեք, եթե ինձ վիճակվեք վերադառնալ նրկրի վրա, ես նորից կընտրեմ այն ուղին, որ անցա»⁶⁸:

Թեպետսահաների քաղաքականությունը սրում էր մոռովրդի զժգոհությունը Իրաքի կառավարության և անգլիական իմպերիալիզմի դեմ:

⁶⁸ Милованов, и Сейфул-Мулюков, «Ирак вчера и сегодня», стр. 45.



Հետպատերազմյան քրդական ազդաշին-ազատագրական շարժումները հակաիմպերիալիստական շարժումներ էին: Փատահական չէ, որ Մերձավոր և Միջին արևելքում ստեղծվող ռազմական սպրեսիվ բյուհներն ու պակտերը միառժամանակ ազդված էին այդ շարժումների դեմ:

1954 թ. սեպտեմբերին Իրաք ժամանեց ամերիկյան փոխգնդապետ Հենրի Վան-Սրմիքը. Իրաքի կառավարությունը նրան հանձնարարեց գլխավորել «գինվորական խորհրդականների վերահսկող» խումբը՝ ԱՄՆ-ից ներմուծվող զինքերը քնդունելու և զրանց օգտագործման ձևերը սովորեցնելու համար⁶⁹: Դրանից անմիջապես հետո Նուրի Սաիրը և Ֆեյսալը ուղևորվեցին Լոնդոն: Իրաքում հայտարարվեց, որ նրանց ուղևորության նպատակը անցլս-իրաքյան պայմանագրի (1930) վերանայման հարցն էր, որի ժամկետը լրանում էր 1957 թ.: Իրականությունը այն էր, որ Լոնդոնում քննարկվելու էր Իրաքի՝ թուրք-պակիստանյան ռազմական միությանը միանալու հարցը: 1954 թ. հոկտեմբերին Նուրի Սաիրը մեկնեց Քուրբեխ, իսկ 1955 թ. հունվարին Բաղդադ ժամանեց թուրքական կառավարության պատվիրակությունը Աղջան Մենդերեպի ղլխավորությամբ, և փետրվարի 24-ին կնքվեց Բաղդադի պակտը, որին միացան, Իրաքից ու Քուր-

⁶⁹ «Эко Ираку», 11 հոկտեմբեր 1955թ.

բիայից բացի նաև Անգլիան և Պակիստանը:

Պետք է հատկապես բնոգծել, որ Բաղդադի պակտը ուղղված էր սոցիալիստական երկրների և առաջին հերթին ՄԱՍԻՒ-ի դեմ: Մյուս կողմից այդ պակտը Իրաքի, Քուրդիստանի և Իրանի սեփական կառավարությունների ձեռքում մի զենք էր Մերձավոր արևելքի ժողովուրդների սպառնալից-ազատագրական շարժումների դեմ միասնաբար պայքարելու համար:

Պակտը ուղղված էր նաև քրդական ազգային-ազատագրական շարժումների դեմ: Պակտի առաջին հոդվածով նախատեսվում էր, որ բացի «ընդհանուր պարտականություններից, հնարավոր էր նրա առանձին մասնակիցների միջև երկկողմանի համաձայնությունների կնքումը»⁷⁰: Այս կետը մտցված էր հատկապես Քուրդական կառավարության պնդումով: Քուրդիան, սրբ դեռևս 1956 թ. Իրաքի հետ ուներ քրդական շարժումների դեմ պայքարելու երկկողմանի համաձայնագիր, այժմ ուղում էր համանման զործարք կնքել նաև Իրանի հետ: Բաղդադի պակտի վերահիշյալ հոդվածի հիման վրա, Քուրդական կառավարությունը բանակցություններ սկսեց Իրանի կառավարության հետ⁷¹:

Այդ մասնաձևի թերթերում հանդես եկան հազարու մեկեր այն մասին, որ Բաղդադի պակտն ուներ գաղտնի հոդվածներ, որոնց համաձայն, անհրա-

⁷⁰ նույն տեղում:

⁷¹ նույն տեղում:

մեշտություն զեպրում, երկու երկրների զորքերը կարող էին փոխադարձաբար օգտագործել միմյանց օդանավակայանները և տերիտորիան: Բնորոշ է, որ այդ գաղտնի հոդվածները մտցված էին առանց Իրաքի պառլամենտի հավանությունը⁷²: Իսկ «Էկո-Իրանը» ուղղակի նշում էր, որ այդ «գաղտնի հոդվածները» նախատեսում էին Իրանի, Քուրդիստանի և Իրաքի զինվորական «համատեղ զործողություններ» Ադրբեջանի շյուսիսային սահմանների, ինչպես նաև Քուրդիստանի պաշտպանության համար⁷³:

Ամերիկայի Միացյալ Նահանգները «հոգատար կերպով» ստանձնեցին Իրանի սահմանների պաշտպանությանը վերաբերող պարտավորություններ: 1956 թ. հունվարին, Բաղդադում հիշյալ պակտի ռազմական օրգանների խորհրդակցություններից մեկում, ամերիկյան զենեթալ Մակչուրը զեկուցեց զեպի Իրանական Ադրբեջան, Կասպիականի ափերը, Խորասան, Քուրդիստան և Լուրիստան կատարած ուղևորության մասին⁷⁴: Այդ տերիտորիաների մեծ մասը կազմում են Իրանի, Իրաքի և Քուրդիստանի քրդարնակ շրջանները՝ Քուրդիստանը: Միամասնակի նախնական բանակցություններ տեղի ունեցան պակտի առղամ երկրների

⁷² ИТАРП СССР, ф. 4459, он. 21, ел. 80, 1182, л. 170.

⁷³ «Эко Иран», 11 հոկտեմբերի 1956 թ.

⁷⁴ Նշված աղբյուրը, 1 փետրվարի 1956 թ., N 5 (50):

զինված ուժերի՝ Իրանական տերիտորիա մտնելու պայմանների մասին⁷⁵։

ԱՄՆ-ը ակտիվորեն մասնակցում և ջեկավարում էին Բազդադի պակտի գործունեությունը։ 1956 թ. ապրիլին Քեհնդանում կայացած Բազդադի պակտի երկրների պրեմիեր-մինիստրների խորհրդի 2-րդ նիստում, ԱՄՆ-ը «այդ խորհրդի հրավերով, պակտի անձանակիան և հակառակադի կոմիտեի անդամ դարձան, առանց պակտի իսկական անդամ դասնալու»⁷⁶։ Իսկ 1957 թ. հունիսին ԱՄՆ-ը արդեն մասնակցում էր Բազդադի պակտի ռազմական կոմիտեի աշխատանքներին։ ԱՄՆ-ի մասնակցությունը այդ կոմիտեի գործունեությանը արդարացիում էր «կոմունիստական ագրեսիայի վտանգի դեմ» պակտի անդամ երկրների «տերիտորիալ ամբողջականությունը» պաշտպանելու անհրաժեշտությունը⁷⁷։ Կոնկրետ գեպրում «կոմունիստական ագրեսիայի» և «տերիտորիալ ամբողջականության» մասին բարբառելը նշանակում էր պաշտքը բուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների դեմ։

Վերջուպես, խոսելով Բազդադի պակտի նաև օրդական ազգային-ազատագրական շարժման դեմ ուղղված լինելու հարցի մասին, ավելորդ չէր լինի ճիշատակել Իրաքի արտաքին գործերի մինիստր

⁷⁵ Նույն տեղում։

⁷⁶ Department of State Publication, 6572, 1958, p. 15.

⁷⁷ Նույն տեղում։

Ֆադիլ Ջամալիի՝ պառլամենտում արած հայտարարությունը։ Արդարացնելով Բազդադի պակտի կնքումը նա ստում էր, որ արաբական երկրների զինված ուժերը «չէին կարող օգնության զայ Իրաքի հյուսիս-արևելյան (ընդգծումը մերն է—Ե. Մ.) սահմանը պաշտպանելու համար»։ Թաղմական այն պարտավորությունները, որ Իրաքի կառավարության ղեկավարների կարծիքով չէին կարող արաբական երկրները ստանձնել, իրենց վրա էին վերցնում Քուրդիան, Իրանը և Անդլիան, որոնք և միջոցներ ունեին, և շահագրգռվածություն⁷⁸։

1956 թ. հրապարակվեց Իրաքի կոմունիստական պարտիայի կենտկոմի հայտարարությունը, որտեղ ցույց էին տրված Բազդադի պակտի ծանր հետևանքները Իրաքի ժողովրդի համար։ Հայտարարության մեջ ընդգծված էր, որ «Իրաքը կախյալ դրության մեջ է ընկել անդու-ամերիկյան իմպերիալիստական շրջաններից»։ Կոմպարտիայի կենտկոմը մերկացնելով Նուրի Սաիդի կառավարության թաղաբալականությունը, նրա զավաճախությունը Իրաքի ժողովրդի շահերին, նշում էր ղեմակրտատական այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեին Իրաքի ժողովրդի պայքարի առաջին էտապում⁷⁹։

⁷⁸ الدكتور محمد قاسم الجبالي، من وقعة السياسة العراقية، بيروت، 1957، ج 4، ص 40.

⁷⁹ ЦГАОР ССР, открытое досье Восточной иностранной информации ТАСС, л. 71 (17. I. 1955).

Կոմպարտիան քուրդ հասարակայնության մեջ գործում էր կենսակոմի բրդական սեկցիայի միջոցով: Քրդական սեկցիան ղեկավարում էր հետևյալ սկզբունքներով. «փոխըմբռնում և նդրայրական կապերի ամրապնդում բրդերի և արարների միջև՝ երկու ժողովուրդների ազգային ազատագրության հիմքի վրա: Համադրծակցություն բոլոր ազատ արարների, նրանց կազմակերպությունների և պարտիաների հետ, հանուն ազգային-ազատագրական պայքարի, ժողովուրդների երջանկության և նրանց իրձների իրականացման»:



Ի պատասխան Քաղզազի պակտի նկատմամբ բրդական հասարակայնության բացասական վերաբերմունքի, տակտի անդամ երկրները սկսեցին «նրա զեմ նոր հարձակում պատրաստել ինչպես Ֆուրք-իրարյան, այնպես էլ իրաքո-իրանական և իրանա-ֆուրքական սահմանամերձ շրջաններում⁸⁰: Իրարի սաստիկանական և զինվորական գործիչներ ուզարկվեցին Անկարա, քրդերի դեմ պատժիչ միջոցառման միասնական պլան մշակելու Իրաքի կառավարության այդ նախապատրաստությունները իրադրծվում էին քրդերի նկատմամբ կուլտուրական հոգատարության քրդի տակ, մինչև անգամ ստեղծվեց թրդերեն լեզվի ուսումնասիր-

րության կենտրոն», որը կոչվում էր «Քրդերի առաջադիմության ակումբ»:

Քաղզազի և Անկարայի սեակցիոն կառավարությունների այդ «հոգատարությունը» հնչեց որպես ծաղր: «Քաղզազը,— գրում է Քալիկան է Մուայեն Օրիանը»,— եթե անկեղծօրեն ուզում է բրդական մշակույթը զարգացնել, ապա պետք է զարգանցնի պաշարը քրդական դպրոցների դեմ Իրաքյան Քուրդիստանում: Մակայն մշակույթի ճակատագիրը ավելի լավ է շահնձենից իրարյան վայրերի ստեղծանքներին, որոնց օբյեկտը (այսինքն հետապնդումների հիմնական առարկան— ծանոթ. Ե. Մ.) կլինեն առաջին հերթին կոմունիստները, քուրդ կոմունիստները (սա խնքնի հասկանալի է), սակայն նմանապես և քուրդ նացիոնալիստները և պարզապես քրդերը, որոնց միակ մեղքը նրանց քուրդ կոչվելն է»⁸¹:

Հրամայական պահանջ էր դարձել անդլիական իմպերիալիզմի և ներքին սեակցիայի դեմ ազգային օգոլիցիոն, հայրենասիրական ուժերը միավորելու խնդիրը: «Մեր ամենահրատապ խնդիրը,— ասում էր Յուսեֆ Մալմանը,— բոլոր աշխատավորների շահերը միավորելն է ազգային ճակատում, Այս երազանքի իրականացման անհրաժեշտությունը մինչև վերջ հասկացել են ոչ միայն զիտակից հայրենասերները, այն սկսել է հասնել ժողովրդա-

⁸⁰ Les Balkans et le Moyen-Orient, 1955, № 24, p. 20

⁸¹ Նույն տեղում:

կան լայն մասսաների դիտակցությանը: Տարբեր կրկրների փորձը ցույց տվեց, որ ազգային ճակատը միակ ուղին է, միակ գործուն ղեկը, որով հնարավոր է սեակցիան ոչնչացնել և ժողովուրդներին ազատագրել իմպերիալիզմի շղթաներից⁵²:

Իրարում ստեղծվեց Ազգային ճակատ, որը միավորում էր Ազգային-զեմեկրատական, Իստիկլայ, Արարական վերածնություն սոցիալիստական (Բասս) և ընդհատակում գործող կոմունիստական պարտիաները: Ազգային ճակատի ստեղծումը լուրջ հաջողություն էր Իրաքի ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ: Ազգային հայրենասիրական ուժերի միավորումը գրավական էր հաջող պայքարի այն պահի դեմ, որով իմպերիալիստական տերությունները փաստորեն իրենց էին ենթարկել երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը: 1956 թ. վերջերից Բաղդադում, Կիրկուկում, Սուլեյմանիեում տեղի ունեցան ժողովրդական միտինգներ, պահանջելով նուրի Սաիդի կառավարության հրաժարականը և Իրաքի դուրս գալը Բաղդադի պալատից⁵³: Բաղդադի պալատի դեմ ելույթ ունենալու մեղադրանքով բազմաթիվ արար և բուրջ գերծիչներ նետվեցին բանտերը: «Իրաքի՝ Միջին արևելյան բազմական ըլոկի մեջ մասնելու պահից ի վեր,—գրում էր «Ֆալկան է Մուսլան

⁵² Милованов и Сейфуль Мулкков, *Նըշ-ված այն*, էջ 48:

⁵³ „Труд“, 24 հունվարի 1958 թ.

Օրիանը»,—այդ երկրի ժողովուրդը կրում է ոստիկանական աևուրի աննախադեպ հետեանքները⁵⁴:

Գործելով Բաղդադի պալատի պահանջների համաձայն նուրի Սաիդի կառավարությունը իրաքյան զորքեր ուղարկեց Բահճեյնի կղզիները, նավթային ձևեարկություններում սկսված հակաբրիտանական էլույթները ճնշելու համար⁵⁵: Եգիպտոսի դեմ անզլո-Ֆրանս-իորայելյան ազրեսիայի ժամանակ անզլիական ինքնաթիռները Իրաքի օդանավակայաններից բարձրանալով ուժրակոծում էին եգիպտական խաղաղ քաղաքները⁵⁶:

Բաղդադի պալատի դեմ մղվող պայքարին ակտիվորեն մասնակցում էին Իրաքյան Քուրդիստանի աշխատավորները: Ամբողջ մեկուկես տարի նրանք գործադրեցին պայքարի ամենաբազմազան ձևեր՝ ցույցեր, միտինգներ, հավանություն հայտնելով ազգային խարտիային, որն ուղղված էր Բաղդադի պալատի և նուրի Սաիդի կառավարության դեմ: Միջին Եփրատում, էրբիում և Սուլեյմանիեում բռնկվեցին զուլաջիական ապստամբություններ: Գլուղայիները Բաղդադ ուղարկեցին պատգամավորություններ, որոնք, իրենց հետ ունենալով 10000 ստորագրություն կրող խնդրագիր, պահանջում էին հող և ազատություն, նուրի Սաիդի հրա-

⁵⁴ „Les Balkans et le Moyen Orient“, 1955, № 24, p. 21.

⁵⁵ „Труд“, 24 հունվարի 1958 թ.

⁵⁶ նույն տեղում:

Ճարականք և Իրաքի դուրս գալը Բաղդադի պակ-տից⁸⁷։ Կիրկուկի բանվորները պայթեցրին անգլիա-կան նավթամուղը և հյուսիսատոսուլթյան շենքը։ Մոսուլի ուսանողները ցույցերով բողոքեցին անգլո-ֆրանս-իսրայելյան ազդեհության դեմ⁸⁸։ Քրդական ազատագրական շարժման հայտնի գործիչ Եեյի Մահմուդի հուղարկավորությունը վերածվեց հա-կախմայեհրախոսական մեծ ցույցի, որի ավելի քան 20000 մասնակիցները գոչում էին՝ «Կորչի Նուրի Մախդը», «Կորչի Բաղդադի պակտը»։

1957 թ. հունիսին Նուրի Մախդը հրաժարական տվեց, սակայն նրա հարորդ Ալի Զավաթտ Ալուրին էլ երկար շմնաց իշխանություն զլուխ և տեղը զի-ջեց Արզուլ Զահար Միրջանիի կառավարությանը։ Հակամոզովրդական կյիկը ակնառու կերպով երկի-րը կառավարելու անկարողություն էր ցուցաբե-րում։ Այդ պայմաններում որոշվեց պառլամենտա-կան ընտրություններ անցկացնել Իրաքում։

Ի նախապարաստություն պառլամենտական ընտրությունների սեակցիան փորձեց թուլացնել Ազգային ճակատը, 1958 թ. սկզբներին կատարվե-ցին մասսայական ձերբակալություններ, հալած-վեցին Մասկվայում կայացած երիտասարդության և ուսանողների Գ-րդ ֆեստիվալի մասնակիցները։ Այդ դելեգացիայի 20 արաբ և քուրդ անդամներ

բանտ նետվեցին⁸⁹։ Բաղդադի պակտի խորհրդի սե-սիայի բացման նախօրյակին, ոստիկանությունը ձերբակալեց այդ պայքարի 30 առավել ակտիվ դեմոկրատ գործիչներ⁹⁰։ Ասուշիեյաեզ պրեսի-թղթակցի հաղորդման համաձայն Իրաքի սան-վտանգությունը օրգանները՝ ձերբակալել էին նաև Իրաքի կոմպարտիայի կենտկոմի երեք անդամ-ներին⁹¹։



1958 թ. ապրիլին Իրաքում լարված պայմաննե-րում սեղի ունեցան պառլամենտական ընտրու-թյուններ։ Կառավարությունը կոպիտ կերպով մի-ջամեսց ընտրական գործերին, հալածելով օպո-զիցիոն կազմակերպություններին, կեղծելով քվեա-տուփերի արգելանքը։ Այդ ընտրություններով անգ-լիական իմպերիալիզմի և ներքին սեակցիայի առավել նշանավոր ներկայացուցիչները բազմեցին պառլամենտում... Նուրի Մախդը նորից իշխանու-թյան զլուխ անցավ, սակայն նրան չհաջողվեց ան-զորություն հաստատել երկրում։

1958 թ. ապրիլին Իրաքում պետական հե-ղաշրջման փորձ կատարվեց։ Ձերբակալվեցին բա-նակի 192 սպաներ, որոնք մեղադրվում էին հակա-կառավարական դավադրության մեջ։ Համաձայն

⁸⁷ Милованов и Сейфуль-Мулюков, *Угроз-а* 1958, էջ 141.

⁸⁸ Նույն տեղում։

⁸⁸ ТАСС, ДИСТ 195-0, 4 փետրվարի 1958 թ.

⁹⁰ Նույն տեղում։

⁹¹ ТАСС, 1 հունվարի 1958 թ.

հեղաշրջման պլանի, Իրաքի բանակի այն զորամասերը, որոնք գտնվում էին Հարբանդեհում և Մոսուլում պետք է ապաստանեին և շարժվեին դեպի Բաղդադը։ Մակայն, այդ փորձը ձախողվեց, Աբդուլ Իլահը դաժանորեն ճնշեց այն։ Այդ բանից հետո Իրաքի իշխանությունները նոր հարձակում սկսեցին առաջադն ուժերի դեմ, կատարեցին մասսայական նոր ձերբակալումներ⁹²։

Մակայն հնարավոր չէր հալածանքով կանգնեցնել ժողովրդական շարժումները։ Մայիսի 4-ին, Իրաքում հայտարարվեց ընդհանուր զործադուլ որպես բողոք պառլամենտական ընտրությունների կեղծիքի դեմ։ Ազգային ճակատի պարտիաների, առաջին հերթին կոմունիստական պարտիայի ջանքերի շնորհիվ, զործադուլը լայն թափ ստացավ։ Ժողովրդի պահանջն էր՝ ցրել պառլամենտը, ստեղծել նոր, շեղոք կառավարություն և Իրաքը դուրս բերել Բաղդադի պակտից։ Կառավարության հրահանգով ոստիկանները կիրառեցին ամենախիստ միջոցներ, նրանք տեղորի և ահաբեկման միջոցով փորձում էին բանվորներին և ծառայողներին վերադարձնել աշխատանքի։ «Աշ-Շարիք» թերթի տվյալներով, Բաղդադում ձերբակալվել էին 637, իսկ երբի մյուս շրջաններում, այդ թվում քրդական շրջալիվաներում՝ ավելի քան 2400 մարդ⁹³։

⁹² ТАСС, ЗИСТ 141-0, 15 ապրիլի, 1958 թ.

⁹³ Նույն տեղում։

Այսպիսի դրությունը երկար չէր կարող տևել։ Տեղին է այստեղ հիշատակել քրդական ազգային-ազատագրական շարժման գործիչներից մեկի խոսքերը. «Ուլթեր ուզում են լինեն՝ քրդեր կամ ոչ քրդեր, կոմունիստներ կամ ոչ կոմունիստներ, ենթարկված են աներևակայելի տեղորի։ Մակայն, երեսայություն կլինեք կարծի, թե այսպես կարող է շարունակվել միշտ...»⁹⁴։



Երկրորդ համաշխարհային պատերազմում զեմոկրատական ուժերի հաղթանակը բարերար ազդեցություն ունեցավ քրդական ազգային-ազատագրական շարժումների վրա։ Արևելքի ճնշված ժողովուրդների ընդհանուր ազատագրական պայքարում զգալի ավանդ ներդրեց նաև Իրաքի բուրդ աշխատավորությունը։ Ծիշտ է, 1943 և 1945 թվականների ապստամբությունները ճնշվեցին, բայց դրանք նպաստեցին բուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության հետագա զարգացմանը, ցույց տալով՝

ա) արաբ և բուրդ աշխատավորության համատեղ պայքարի անհրաժեշտությունը՝ ընդհանուր թշնամու դեմ.

բ) որ արևմտյան իմպերիալիստական պետությունները ոտնահարում են ճնշված ժողովուրդներ-

⁹⁴ «Les Balkans et le Moyen-Orient», 1955, № 25, p. 30.

րի, այդ թվում և քուրդ ժողովրդի ազգային շահերը:

Իրաքյան Քուրդիստանի ապստամբական շարժումները դրական ազդեցություն ունեցան նաև Քուրբեյաջի և Իրանի քուրդ աշխատավորության ազգային-ազատագրական պայքարի վրա:

1942—1945 թթ. ապստամբություններից հետո, քուրդ աշխատավորության պայքարը արտահայտվում էր Իրաքի ամբողջ աշխատավորության հակահիմպերիալիստական պայքարի մեջ: 1946 թ. թուրք-իրաքյան գաղտնի ռազմական համաձայնագրերի, 1948 թ. Պարսամուտյան պայմանագրի և Բազդադի պակտի դեմ մղվող պայքարում ավելի ու ավելի ամրապնդվեցին արաբ և քուրդ աշխատավորության փոխազդած կապերը:

Իրաքի արաբ և քուրդ աշխատավորության բազմամյա պայքարի արդյունքը եղավ 1958 թ. սեպտեմբերին, որը վերացնելով միապետական ռեակցիոն ռեժիմը, հնարավորություն ստեղծեց երկիրը դեմոկրատական ուղիով տանելու, լուծելու սոցիալ-տնտեսական և քաղաքական հրատապ այն հարցերը, որոնք ժողովրդական մասսաներին մղում էին ազատագրական պայքարի, ընդհուպ դինված ապստամբության:

■ 1958 ՔՎԱԿԱՆԻ ՌԵՎՈՒՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՔՐՊԱԿԱՆ ՀԱՐՅԷ

Իրաքի 1958 թ. հուլիսի 14-ի սեպտեմբերյան հանդիսացավ արաբ և քուրդ աշխատավորության համատեղ պայքարի տրամաբանական հետևանքը: Հակաժողովրդական կլիկը չէր կարող այլևս մնալ իշխանության դուրս, քանի որ հաշվի շահնելով ժողովրդի շահերը, իր բախտը կապել էր իմպերիալիզմի հետ: Երկրում ստեղծվել էր սեպտեմբերյան իրավիճակ, որը, ինչպես և պետք էր սպասել, հասցրեց սև ռեժիմի տապալմանը:

1958 թ. հուլիսին, Բազդադի պակտին համապատասխան, Իրաքի կառավարությունը պատրաստվում էր միջամտել Հորդանանի և Լիբանանի ներքին գործերին, ձնշել այնտեղի ժողովրդական հուզմունքները: Սակայն Ֆեյսալ թագավորին և նուրի Սաիդին միճակված չէր տեսնելու ոչ զորքերի մեկնումը դեպի Հորդանան և Լիբանան, ոչ էլ մասնակցելու Բազդադի պակտի հուլիսի 14-ի խորհրդակցությանը՝ ստամբուլում: Իրաքի բա-

նակը տապալելն Եւրոյի Սախի-Ֆեսայի Հակածո-
ղովորական անժմբ. Իրարը Հայտարարվեց ռես-
պուբլիկա:

Իրաքի ռեուլյուցիոյի Հաղթանակով նոր էտապ
րացվեց բրդական ազգային-ազատագրական շար-
ժումների պատմութան մէջ:

Գններալ Արզել Քերիմ Կասրմի զլխավորած
ռեսպուբլիկական նոր կառավարութիւնը, շեղյալ
Հայտարարելով նախկին միապետական կոնստի-
տուցիան, ընդունեց ժամանակավոր կոնստիտու-
ցիա, որի 3-րդ հոդվածում ասված էր. «Այս երկ-
րում արարները և բրդերը իրավահավասար են և
նրանց ազգային իրավունքները ճանաչվում են
կոնստիտուցիայով»: Կառավարութիւնը մշակեց
բրդական շրջաններում գյուղատնտեսութիւնը և
արդյունաբերութիւնը զարգացնելու, երկաթուղի-
ներ՝ անցկացնելու, կուլտուր-լուսավորչական հիմ-
նարկների ցանցը ընդլայնելու, հիվանդանոցների
թիւը ավելացնելու ծրագիր: Քուրդիստանում
սկսեցին հրատարակվել բազմաթիւ ամսագրեր և
թերթեր:

Իրաքի բրդերի իրավունքների ճանաչման ան-
հրաժեշտութիւնը ընդգծված էր նաև Ազգային
միասնութեան ճակատի ծրագրում, որը հրապար-
ակվեց 1958 թ. նոյեմբերի 25-ին, Բաղդադի ժո-
ղովորական միտինգում: Այդ ծրագրի 2-րդ հոդվա-
ծում ասված էր. «Ազգային միասնութեան ճակատը
գտնում է, որ Իրաքի գրութիւնը հիմնված է բո-

լոր բաղաբացիների միջև Համագործակցութեան,
նրանց իրավունքները հարգելու և ազատութիւնը
պահպանելու վրա: Արարները և բրդերը իրավա-
հավասար են. Ազգային ճակատը ճանաչում է
նրանց ազգային իրավունքները Միասնական Հայ-
րենիքում և կաշակցի այդ իրավունքների կենսա-
գործմանը»¹:

Ազգային ճակատի ծրագրում արտացոլում էին
գտել Իրաքի բոլոր ազգութիւնների մշակութային
զարգացման խնդիրները: Այդ փաստաթղթի 13-րդ
հոդվածի 4-րդ պարագրաֆում ասված էր. «Շու-
տափույթ ստեղծել բրդական լուսավորութեան
ղեկարատմենտ, որը կազմակերպի և ուղղութիւն
տա ուսումնա-դաստիարակչական միջոցառումնե-
րին Քուրդիստանում: Այն մարզերում, որտեղ ապ-
րում են բրդերը, տարրական ուսուցումը կատարել
բրդերեն լեզվով: Իրաքի Համալսարանում, միջնա-
կարգ դպրոցներում և մյուս բոլոր դպրոցներում
դասավանդել բրդական գրականութիւնը և պատ-
մութիւնը, ինչպես նաև խրախուսել բրդերեն լեզվի
ուսուցումը»²:

1958 թ. սեպտեմբերին Բաղդադում տեղի ունե-
ցավ Իրաքյան Քուրդիստանի և Սիրիայի բուրգ
ուսանողութեան պատվիրակութիւնների հանդիպու-
մը պրեմիեր-մինիստր Արզել Քերիմ Կասրմի հետ:

¹ „The Iraq Times“ 27 նոյեմբերի 1958 թ.

² «البلاد» 30 سبتمبر 1958

«Այս օրը, — հայտարարեց Կաթըմը, — համարում եմ իմ ամենագեղեցիկ օրերից, որովհետև հանդիպում եմ քուրդ եղբայրների հետ, որոնք կազմում են Իրաքի ժողովրդի անբաժանելի մասը: բարեկամության և եղբայրության այս հավաքություն մեր բոլորի սրտերը հորդում են փոխադարձ հավատքով և բարի ցանկություններով»:

Ռեսպուբլիկական կառավարության ուշադրով միջոցառումներից էր այն, որ Իրաքի ժողովրդի լավագույն զավակներ՝ կոմպարտիայի ղեկավարներ Յուսեֆ Սալմանը, Զաքի Բասիմը, Հուսեյն աշ-Շարիրին և ուրիշներ հետամհու արգարացվեցին:

Անդրադառնալով քուրդ տարադիր հայրենասերներին, Արզնի Քերիմ Կասրմը նշում էր. «... Ինձ համար զժվար է այս հայրենիքի սրգիներից սրի՛ մեկին, ինչպես օրինակ, եղբայր, բաղաբացի Մոլլա Մուստաֆային տեսնել փախստականի վիճակում... Բայց այսօր, փառք ասածո, մեզ բաժանող գործոնները վերացած են, մեզ մնում է երջանիկ ապրել ինչպես հարստացած քնտանիքում, այս մեծ երկրում, մեր երիտասարդ ռեսպուբլիկայում: Լիահույս ենք, որ մեր բոլոր տարադիր եղբայրները Մոլլա Մուստաֆայի հետ կվերագառնան հայրենիք, կապրեն հանդիսա ու խաղաղ, շնչելով հայրենի երկրի ազատության զեփշուրը»¹: 1958 թ. սեպ-

տեմբերի 10-ին, Բաղդադի մամուլը հաղորդագրություններ հրատարակեց Բարզանի ապստամբության բոլոր մասնակիցներին ներում շնորհելու մասին:

Իրաքի ժողովուրդը չերմորեն ուղունեց քրդական ազգային-ազատագրական շարժման մասնակիցների վերադարձը: Բաղդադի օդանավակայանը տանող ճանապարհները հաճախ էին լցվում մարդկանց հոծ խմբերով հայրենիք վերադարձող հայրենասերներին ընդունելու համար: Մուստաֆա Բարզանին զիմափորող պատվիրակություններին հայտարարեց. «Բարեկամներ, թույլ տվեք ինձ հաղորդել ձեզ ողջուն ձեր եղբայր քրդերի կողմից, որոնք երկար տարիներ հետո էին զանվում հայրենիքից: Ողջունում եմ ձեր փառավոր հաղթանակը: Մենք վերադարձանք, որպեսզի աշխատենք մեր եղբայրների հետ և պաշտպանենք մեր հայրենիքը»²: Սեմիրամիս չլուրանոցի մոտ, որտեղ իջեցանել էր Բարզանին, մի քանի օր շարունակ տեղի տնեցան միտինգներ: Նույն ամենցող հետադարձը նշում էին քրդերի և արաբների հակամարտության արտադրական համատեղ պայքարի նշանակությունը Իրաքի ռեսպուբլիկական կարգը պաշտպանելու գործում³:

1959 թ. ապրիլի 17-ին, սովետական «Փրուդիա»

¹ «عبد التكرم قاسم» «سندخت الشوابة» بغداد 1958, ج 1, ص 13.

² Նույն տեղում:

³ Г. Кузблицкий, Мечи и Колос, 1959, стр. 19.

⁴ Նույն տեղում:

չերմանավը Բասրայում ափ հանեց Սովետական Միությունում քաղաքական ապաստան գտած քուրդ հայրենասերներին: Հարավային Իրաքի բնակիչները հանդիսավոր կերպով ընդունեցին քրդական ազգային-ազատագրական շարժման մասնակիցներին:

Սովետական Միությունում նրանք հնարավորություն ունեցան աարբեր մասնագիտություններ ձեռք բերելու: Սովետական ժողովուրդը հյուրընկալեց, եզրայտարար ընդունեց քուրդ տարագիրներին, նրանց ցույց տվեց նյութական օգնություն, շքեղատեղի հոգատարություն⁷: Բավական է նշել, որ հայրենիք վերադարձող քրդերի 60 տոկոսը ստացել էր միջնակարգ և բարձրագույն կրթություն. խսկ երկուսը գիտություն բեկնածուներ էին:

Հերքելով իմպերիալիստական երկրների սեփական մամուլի ստահոգ հերյուրանքները այն մասին, թե իբր Սովետական Միությունը Իրաք է փոխադրում «կամավորներ և զենք», հայրենադարձ քրդերից Ղասրմ Մասդին ՏԱՄՄ-ի թղթակցին հայտարարեց. «Հաղորդեցեք սովետական և արտասահմանյան մամուլին, որ իրտր են մեզ զըրպարտում իմպերիալիստները և նրանց զործակալները: Մենք Սովետական Միությունից վերադարձել ենք մեր կանանց և երեխաների հետ: Քուրդ քու-

րերն իմանան⁸ միակ գեները, որ մենք բերում ենք, դա բարեկամությունն է, եղբայրությունն ու խաղաղությունը քուրդ ժողովուրդների միջև»:

Քուրդ աշխատավորությունը վճարահարեցիկ կանգնեց սեփականի պաշտպանի դիրքերում, աշակցելով նրա դեմոկրատական միջոցառումների կենսագործմանը: Հուլիսի 14-ի սևուցիցային Եվրոպայի միջին վերջ պաշտպանելու գաղափարը արտահայտված էր Քրդական Միասնական Գեմոկրատական պարտիայի և մյուս դեմոկրատական կազմակերպությունների ծրագրերում:

Քրդական Միասնական Գեմոկրատական պարտիան վերակազմավորվեց այն դեմոկրատական կազմակերպությունների հիմքի վրա, որոնք միասնական սեփական արհեստներին հետապնդում էին և գործում անվեղալ պայմաններում:

Նրա ծրագրում լայն տեղ էին զբաղում դեմոկրատական բուլլիթի պահանջներ, ախտիվ պայքարը խաղաղության համար, պայքարը իմպերիալիզմի դեմ: Այդ պարտիան պահանջում էր նաև բարեկամական հարաբերություններ հաստատել սոցիալիստական երկրների և Իրաքի միջև, ամբարայնելի արար և քուրդ ժողովուրդների եղբայրական կապերը, ճանաչել քրդական ավտոնոմիան միասնական Իրաքի սահմաններում, փոփոխել ազրարային սեփականի վերաբերյալ օրենքը Քուր-

⁷ „Ipirana“ 19 ապրիլի 1959 թ.

⁸ Նույն տեղում:

դիտանի գյուղացիների օգտին, որպեսզի նրանք քստանան մինիմում շափի հող և արմատախիլ արվեն ֆեոդալական հարաբերությունները», ինչպես նաև վերանայել նավթային մոնոպոլիաների հետ կնքված համաձայնագրերը, օահմանափակել նրանց գործունեության ոլորտը և ավելացնել Իրաքի կառավարության շահաբաժինը, պատրաստել ազգային կազրեր այդ ձեռնարկությունները հետագայում ազգայնացնելու համար⁹: Այդ ծրագրային դրույթները հիմնականում համապատասխանում էին քնդհանուր դեմոկրատական այն պայքարին, որը մղվում էր իմպերիալիզմի և ներքին սեակցիայի դեմ:

Քրդական Գեմոկրատական պարտիան այն ուժերից էր, որոնց աշակցութիւամբ Կասրմի կառավարությունը կենսապործեց ներքին և արտաքին մի շարք միջոցառումներ:

1959 թ. մարտի 24-ին Իրաքը պաշտոնապես դուրս եկավ Բաղդադի պակտից: Այդ առթիվ, արտաքին գործերի մինիստրությունը նշում էր, որ «Իրաքի Բաղդադի պակտի մեջ մնալը հակասում է շեզոքության այն քաղաքականությունը, որը հրաշակվեց անցյալ տարվա հուլիսի 14-ին Այն Հալասում է նաև Իրաքի ժողովրդի կամքին»¹⁰: Այդ որոշումը լիովին համապատասխանում էր սեո-

լյուցիայից հեռու քրդերի նկատմամբ տարվող քաղաքականությունը:

Ռեսպուբլիկական կառավարության առաջին զեկրեաններից մեկը վերաբերվում էր հողային սեֆորմին: Հայտնի է, որ խոշոր հողատերերը, որոնք կազմում էին գյուղական բնակչության մեկ տեղսից քիչ ավելին, տիրում էին մշակվող հողի 75, իսկ գյուղացիները՝ 25 տոկոսին¹¹: Հողային սեֆորմը մի կողմից հանձինս հող սասցող գյուղացիական զանգվածների՝ սեսպուբլիկայի համար կայուն հենարան էր ստեղծում գյուղում, մյուս կողմից հարված էր հասցնում սեակցիայի և իմպերիալիզմի հենարան խոշոր ֆեոդալ-հողատերերին, լայն հանապարհ բանալով կյանքի տարրեր բնապակտների հետագա դեմոկրատացման համար:

Հողային սեֆորմի օրենքով հողատերերին իրավունք էր տրվում ստավելագույնը մինչև 500 հեկտար հող ունենալ, եթե զրանք չէին ստեղծում, իսկ արհեստական սոսգման միջոցների առկայության զեպքում, նրանց հողային սեկրականությունը չէր կարող 250 հեկտարից ավելի լինել¹²: Կառավարությունը իրավունք էր տրվում նշանակված շափր գերազանցող բոլոր հողամասերը զենյ և գյուղացիներին բաժանել, հեակայլ կարող՝ գյուղացիական ամեն սեակսություն կա-

⁹ Бюллетень ТАСС, № 166, 23 սեպտեմբերի 1959 թ. սրբ. 40-46.

¹⁰ „Новое время“, 1959, № 14. սրբ. 2.

¹¹ „Проблемы мира и социализма“, 1961, № 3, սրբ. 65.

¹² Նույն սեկրում, 1959, № 4, էջ 57.

րոզ էր գնել 7,5 մինչև 15 հեկտար արհեստական սոսոզման ենթակա և 15-ից մինչև 30 հեկտար շոտոզվող հողատարածություն¹⁵։ Հողային սեփորմբ այսպիսով չէր վերացնում, այլ սահմանափակում էր հողային խոշոր սեփականությունը։

Բացի այդ, հողային սեփորմբ ուներ նաև ուրիշ թերի կողմեր։ Եթե հողային սեփորմբ համաձայն Ամարայի գավառում գյուղացիները բավականին մեծ հնարավորություն ունեին հող ստանալու, ապա Քուրդիստանում շատ հողատերեր չէին ընկնում այդ օրենքի տակ, բանի որ նրանց հողատարածությունները 500 և 250 հեկտարից ավել չէին։ Այսպիսով, նույնիսկ սեփորմբ լրիվ իրականացման դեպքում, Քուրդիստանում հսկայական թվով սահմանափակ հողատերերի գյուղացիները զատապարտված էին առանց հողի մնալու։ Երկրի տարբեր շրջանների առանձնահատկությունների անտեսումը սկզբից հետո հարցականի տակ էր դնում հողային սեփորմբի հանդուրժելիությունը։ Ըստ սեփորմբի, որոշ շրջաններում գյուղացիները այնքան հող էին ստանալու (15—30 հեկտար), որ առանց վարձու աշխատանքի և մեքենաների (իսկ դա գյուղացու հնարավորությունից դուրս էր) չէին կարող այն մշակել։ Զարի հայրին գրում էր. «Գյուղացիներին մի մասին մեծ հողակտորներ տալը և խոշոր հողատիրության պահպանումը կհասցնի այն բանին,

որ մի շարք նահանգներում, օրինակ Սուլեյմանիեում, հող կստանան շատ քիչ գյուղացիներ»¹⁶։

Կոմունիստական պարտիան, հաշվի առնելով սեփորմբից հետո երկրում ստեղծված իրազրույթունը, ուժերի փոխհարաբերությունը, իշխանության դասակարգային կազմը, միանգամից առաջ չբաշեց արմատական աղբարային սեփորմբի հարցը, այլ հավանություն տվեց հողային սեփորմբի անցկացմանը այնպես, ինչպես հաստատել էր սեպտեմբերի կառավարությունը։ Սակայն կուպարտիան պահանջում էր՝ սեփորմբ իրագործելու սահմանված օրգաններում ընդգրկել նաև գյուղացիական միությունների ներկայացուցիչներին, որոնք, որպես առավել շահագրգռված կողմ, թույլ չէին տա անօրինականություններու Սակայն սեփորմբի անցկացման բոլոր օրգանները հանդիսանում էին պետական օրգաններ։



Իրաքի նոր կառավարության օտջիալական և ազգային-դեմոկրատական միջոցառումները, նրա դրական շեղբությունն քաղաքականությունը անհանդատացնում էին իմպերիալիստներին և նրանց Մերձավոր և Միջին արևելքի զաշնակիցներին։ 1958 թ. հուլիսի վերջերին ամերիկյան «Նյու-Յորք հերալդ տրիբյուն» թերթը, անդրադառնալով իրա-

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ „Проблемы мира и социализма“, 1959, №4 стр. 58.

քի նկատմամբ կիրառվելիք միջոցառումներին, գրում էր. «Իրաքը ամեն ինչ էլ կիրանանը ոչինչ, Բեյրութում ամերիկյան զորքերի օփհանումը անօգուտ միջոցառում կլինի, եթե միաժամանակ չլուծվի Իրաքի մեծ պրոբլեմը: Վերջին դժվար օրերին ոչ թե կիրանանը, այլ Իրաքն էր հանդիսանում անգլիական և ամերիկյան կառավարությունների բոլոր տանջալից խորհրդակցությունների օրակարգը»¹⁵:

Իրաքի ռեսպուբլիկայի զեմ նախադատրաստվող ազրեսիան լրջորեն անհանգստացնում էր քուրդ զեմտիրատական հասարակայնությանը: Արտահայտելով նվրոպայում սովորող բուրդ ուսանողների բողոքը Իրանի կառավարությանը, Պարնզ վանլին գրում էր. «Մենք երջանիկ ենք, որ պատմության առաջընթացը չի կարելի կանգնեցնել: մենք երջանիկ ենք, որ Բաղդադից մեզ հասնող արարների ձայնը եղբայրարար միացած է բրգերի ձայնին: Մենք պիտենք, որ այս Բաղդադը մեզ վախեցնում է, սարսափելիսրեն վախեցնում, ինչպես նաև՝ մեր սերը և պաշտպանը հանդիսացող իմպերիալիստների՝ մեր հովիտեմական թշնամիներին...: Գուց զոգում եք, որովհետև հուլիսի 14-ի ռևոլյուցիայով պաշտոնապես ձանաչվել է բրդական ազգությունը Իրաքում...»¹⁶:

Իրաքի նորաստեղծ արաբ-բրդական ռեսպուբլիկայի զեմ նախադատրաստվող ազրեսիան կանխելու գործում խոշոր դեր կատարեցին ՍՍԻՄ-ը և սոցիալիստական մյուս երկրները: 1958 թ. հուլիսի 24-ին, սովետական կառավարությունը Թուրքիայի կառավարությանը հղած հուշագրում նշում էր. «Թուրքական կառավարությունը պատրաստվում է ռազմական գործողություններ սկսել Իրաքի դեմ... Սովետական կառավարությունը իր պարան է համարում Թուրքիայի կառավարությանը նախազգուշացնել այդ շրջանում ռազմական կոնֆլիկտի ծանր հետևանքների պատասխանատվության մասին»¹⁷: Սովետական Միության վճռական դիրքը մեծապես նպաստեց Իրաքի ռեսպուբլիկայի գրության ամբույնումանը: Բացահայտ զինված ազրեսիա շկատարվեց, սակայն, դրա փոխարեն, իմպերիալիստական տերությունները ձեռնամուխ եղան ներքին քայքայիչ աշխատանքի, օգտագործելով հիմնականում խոշոր ֆեոդալներին: 1959 թ. մայիսին Իրաքի կոմպարտիսի օրգան «ԻՔՔԻհագ աշ-Շաար» թերթը հաղորդում էր, որ Քուրդիստանում «ֆեոդալական կարգի կոզմոսկիցները միջոցներ են ձեռնարկել գյուղացիների զեմ, նրանք զինված են Միացյալ Նահանգներից բերված ժամանակակից զինացիներով և ձեռնառումբերով, բրդական ազգային-քաղաքացիական տարազ հա-

¹⁵ „Правда“, 26 հուլիսի 1958 թ.

¹⁶ Parez Vanlu „Aspects de la Question Nationale kurde en Iran“, Paris, 1959, p. 23.

¹⁷ „Правда“, 26 հուլիսի 1958 թ.

գած թուրք սոցաներ աշխատանք են տանում քուրդ ցեղերի մեջ»¹⁵:

Իրաքի սեսպուրիիկայի դեմ առավել կազմակերպված ներքին դավադրություն էր Մասուլի խոռվությունը: 1959 թ. մարտի 6-ին, խաղաղության կողմնակիցների ժողովրդական միտինգը խոռվարարների կողմից վերածվեց անկարգության սեսպուրիիկայի կառավարության դեմ: Քահալի 5-րդ բրիգադայի հրամանատար զնցապետ Աբդել Վահաբ Շավվաֆը զորքը օգտագործեց ոչ թե կարգը վերահաստատելու, այլ հակահառափարհան բմբուսություն բարձրացնելու: Մարտի 8-ի գիշերը Մասուլը փաստորեն զանվում էր խոռվարարների ձեռքում: Օգտվելով այդ հանգամանքից նրանք դաժան հաշվեհարդար տեսան արբար և քուրդ դեմոկրատ գործիչների հետ: Շավվաֆը կոշտ արևը տապալել Կասրմի կառավարությունը, Մասուլի խոռվությանը ակտիվորեն մասնակցում էր բեդուինների Շամմար ցեղը, որը մշտապես գտնվել է Անդլիտայի, ինչպես նաև ԱՄՆ-ի գործակալների ազդեցության տակ»¹⁶:

¹⁵ TACC, 4 մայիսի 1959 թ.

¹⁶ Շամմար ցեղի շեյխը մշտապես ծառայել է անգլիական ինտելիգենցիայի շահերին, պահպանելով Գերմանիայի գեպի Միչերիթական ձով ձգված անգլիական հավաքագրության հետևանքով: Քե անգլիական կառավարությունը ինչպիսի կարևորություն է տալիս շամմար ցեղին, բավական է նշել, որ նրա շեյխը հրավիրված էր ներկա գտնվելու անգլիական թագուհու թագադրության հանդեսին (սերեան, Սոֆիա, 20 հունվարի 1961):

Քուրդ ժողովուրդը ակտիվորեն մասնակցեց Մասուլի հակահեսպուրիիկական դավադրության ճնշմանը: «Ամբողջ քուրդ ժողովուրդը ակտիվորեն պաշտպանեց Իրաքի սեսպուրիիկական կառավարությունը», — գրում էր «Դեմոկրատիկ նուսր» հանդեսը¹⁷:

Շատ քիչ զննարկներով և հետո, որի ժամանակ բմբուսության պարագային Շավվաֆը ծանր վերափոխվեց, «բրդերը ներխուժեցին բաղադրի կենտրոնը և գրավեցին գլխավոր ստրիկանատան թաղամասը: Այդ պահից 5-րդ բրիգադայի մի շարք միավորումներ անձնատուր եղան»: Գնդապետ Շավվաֆին հիվանդանոց փոխադրելիս ավտոմատով նրա կյանքին վերջ տվեց մի սերմանալ¹⁸:



Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը թուրքական գործակալների ակտիվ մասնակցությամբ շարունակում էր ներքին բայրայիլ գործունեությունը Իրաքյան սեսպուրիիկայում: Այդ գործակալները հակահեսպուրիիկական գործունեություն էին ծավալել Քուրդիստանի այն շրջաններում, որոնք սահմանակից էին թուրքական Քուրդիստանին: «Եթթիհայ աշ Շատր» թեր-

¹⁷ „Démocratie Nouvelle“, Paris, 1961, № 11, p. 20.

¹⁸ „Новое время“, 1959, № 12 стр. 30.

թի հաղորդման համաձայն «Իրաքում գտնվող ամերիկյան սպաները խստն էին եղել բրդական ցեղասպանների սպասամբույությունների... Փայթայի զործունեությունն էր ծավալվել Զախույի, Աբրա-յի, Ամեղիայի շրջաններում (թուրքական սահմա-նի մտատակայրում), որտեղ նսկայական շափով զումար և մեծ թվով գնդացիներ ու նոնալիներ էին բաժանվել նշանավոր կալվածատերերին, ինչպիսիք են Քիշար աղան և Շամզին աղան»²²։ Քուրդիստանի սահմանամերձ շրջաններում բազմիցս տեղի ունեցան արյունալի ընդհարումներ։ 1959 թ. մայիսի սկզբներին թուրքական «Ենի գյուն» թերթը գրում էր, որ «Իրաքի հյուսիսում տեղի են ունե-նում արյունալի մարտեր պրոկոմունիստական բարոզանի և հակահոմունիստական շեյխ Ռաշիդի ցեղերի միջև»։ Նույն թերթի փոխյուրումը շեյխ Ռաշիդի ուժերը, որոնք անցել էին թուրքական սահմանը, թղթակիցներին հայտարարել էին, թե «Շուտով մենք կբարդենք Բարզանու կողմնակից-ներին։ Մեր հույսը թուրքիայի կառավարության վրա է»²³։ Իրաքի ներքին իրադրությունը խիստ շահագրգռված ԱՄՆ-ի կառավարությունը ուշադիր հետևում էր զեպրեբի ընթացքին և սպասում էր հարմար առիթի՝ իրազարժությունների ընթացքը իր օգտին շուտ տալու համար։ Իրաքում ԱՄՆ-ի

²² TACC, 4 մայիսի 1959 թ.

²³ TACC, 6 մայիսի 1959 թ.

զեսույան Ջոն Ջերնինգերը հատուկ միտախոյով մեկ-նեց Վաշինգտոն, որպեսզի պետական բարտուղար Հերտերի հետ քննարկի Իրաքում տիրող դրությունը հարցը²⁴։ Ռեսպուբլիկանն նոր կառավարության նկատմամբ ԱՄՆ-ի բռնած թշնամական դիրքը մա-սամբ բացատրվում էր նրանով, որ Իրաքը շեղյալ հայտարարեց ԱՄՆ-ի հետ կնքած պայմանագրե-րը։ Դրանք էին. 1) Համաձայնագիր՝ ուղղմական օգնության մասին, որը ԱՄՆ-ի կողմից Իրաքին պարտադրվել էր 1954 թ. ապրիլին։ Այս համա-ձայնագրով Իրաքը պարտավորվել էր մասնակցել Միացյալ Նահանգների կողմից տվյալ շրջանում կազմակերպված սաղմական միություններին. 2) Համաձայնագիր՝ կնքված 1955 թ. հուլիսին Իրաքի կողմից ամերիկյան սարքերի օգտագործ-ման մասին։ Սա կազմում էր ստաշին համաձայ-նագրի լրացումը։ 3) Համաձայնագիր՝ Իրաքին «տնտեսական օգնություն» ցույց տալու մասին, որը կնքված էր «էլյենհատուերի զոկտրինայի» հի-ման վրա։

1960 թ. փետրվարին Բեյրութի «Ադ-Դունյա ալ Զադիզա» թերթի թղթակիցը Բազդադից հաղորդում էր. «Թուրքիան և Իրանը բաժանել են միմյանց միջև Իրաքի ռեսպուբլիկայի տերիտորիայում քայ-քայիչ աշխատանք կատարելու ոլորտները։ Այդ աշխատանքի նպատակն է տալուլել Իրաքի ներ-

²⁴ Նույն տեղում.

կա սեփմբ»²⁵։ Նույն ինքնակցի հաղորդման համա-
ձայն Անկարայում տեղի էր ունեցել թուրքական
և իրանական հետախուզությունների ղեկավար-
ների շորսորչա խորհրդակցություն, որը բննարկել
էր «Իրաքի բնակչության վրա քաղաքականապես
ներգործելու մասին» հարցը։ Այդ միջոցառումը
ձեռնարկված է ևզել ՄԵԾՏՕ-ին կից գործող ալա-
պես կոչված «Քայքայիչ գործունեության ղեմ
պաշարելու կոմիտեի» նախաձեռնություններ։ Թուր-
քիայի և Իրանի միջև պայմանավորվածություն էր
ձեռք բերվել այն մասին, թե նրանցից յուրաքան-
չյուրը Իրաքի որ մասում է գործունեություն ծա-
վալելու սեսպուրիիկայի ղեմ։ Հատկանշական է,
որ նկատի էին առնվում հիմնականում բրդարնակ
շրջանները։ Այսպես, համաձայն կայացրած որոշ-
ման, թուրքական հետախուզության ոլորտը մասնե-
լու էին Իրաքի հյուսիսային շրջանները (Մոսուլի,
էրբիլի, Կիրկուկի շրջանները)։ Կիրկուկից հարավ
ընկած շրջանները, ինչպես նաև հյուսիսային մի
քանի ալլ շրջաններ, մտցված էին իրանական հե-
տախուզության գործունեության ոլորտը։ Հիշյալ
երկրների կառավարությունները միաժամանակ
իրենց իշխանությունների միջոցով կապ էին պահ-
պանում հյուսիսային Իրաքի ֆեոդալական զեզոհ
տարրերի հետ և նրանց հրահրում սեսպուրիիկայի
ղեմոկրատական ուժերի ղեմ։ Օտարերկրյա սեակ-

ցիոն շրջանների կողմից քաղաքավոզ ֆեոդալա-
կան սեակցիոն տարրերը աեոտրի էին ենթարկում
հայրենասերներին, զիմադրում ղեմոկրատական
միջոցառումների իրականացմանը։ Հողային սե-
ֆորմի օրենքի հիման վրա հողային ավելցուկները
բրդական մի շարք ֆեոդալներից վերցնելու հետե-
վանքով, վերջիններս Իրանին և Թուրքիային հա-
րող շրջաններում բացահայտ էլույթներ էին ունե-
նում կառավարության ղեմ։ Շատ սեղերում այն
վերածվում էր քեհհարման նրանց և սեսպուրիի-
կական ուժերի միջև Իրաքի մամուլի հաղորդում-
ների համաձայն կառավարության և ղեմոկրատա-
կան ուժերի ղեմ պայքարում էին այնպիսի սեակ-
ցիոն խոշոր ֆեոդալներ, ինչպիսիք էին Ռաշիդ Ա-
լանը, Մահմուդ Խալիֆա Մամանզըր, Բաշո Սահիդ
Տահան, Բեշա աղան, Արդուլա աղան և ուրիշները։
Նրանք ուղղակի աշակցություն և օգնություն էին
ստանում Իրանից և Թուրքիայից²⁶։

Մոսուլի խոսվությունը ցույց տվեց, որ սես-
պուրիիկական կարգերը պաշտպանելու համար
կենսական նշանակություն ունի ղեմոկրատական
ուժերի անհաշտ պայքարը պրոիմպրիալիստա-
կան ֆեոդալների ղեմ, իսկ ղեմոկրատական ուժերը
ամբապնդելու և նրանց վրա հենվելու համար,
անհրաժեշտ էր, որ կառավարությունը շարունա-

²⁵ «Սովետական Հայաստան», 10 փետրվարի 1960 թ.

²⁶ ТАСС, 6 մայիսի 1960 թ.

կեր կյանքի բոլոր բնագավառները դեմոկրատաց-
նելու ծրագրի կենսագործումը: Մակայն, Կասըմը
այդ ուղիով շղնաց. նա մինչև անգամ ետ կանդ-
նեց քրդերին ինքնավարություն տալու իր խոստու-
մից:

Իրաքի կոմունիստական պարտիան բազմիցս
կոչ արեց կառավարությանը հարգելու քրդական
հարցի վերաբերյալ տված խոստումները: 1959 թ.
մայիսին «Իսթիհլադ աշ-Շամար» թերթը նորից պա-
հանջում էր «Իրաքի քրդերին տալ ավտոնոմ կա-
ռավարման լրիվ իրավունք»²⁵: Մակայն գրա փո-
խարեն կառավարությունը խրախուսում էր այն
տարրերին, որոնք դեռ երեկ պայքարում էին սե-
պուրիկական կարգերի դեմ: Իսկ հունիսին,
Կասըմը ներում շնորհեց պրոգրամագատությունից
փախչելով Իրան և Քուրդիստանի Գեո-
դալական դավադիրներին:

Այդ պայմաններում զնալով ավելի աշխուժա-
ցան սեակցիոն ուժերը: Քուրդական գործակալնե-
րը դրանց օգտագործում էին սեպուրիկայի դեմ
կուլիթների կազմակերպելու, ինչպես նաև ազգա-
միջյան կոնֆլիկտներ հրաժրելու համար:

Կիրկուկում այդ կարգի արշավանքի մի քանի ընդ-
հարումներ տեղի ունեցան քրդերի և թուրքմենների
միջև:



Իմպերիալիզմը և նրա գործակալները նախա-
պատրաստում էին թշնամական լայն գործողու-
թյուններ: Կիրկուկում սեակցիոն տարրերը բացա-
հայտորեն զուգս բարձրացրին, հակասեպուրի-
կական կուլիթներ տեղի ունեցան նաև երկրի մյուս
բրդական շրջաններում²⁶: Բելլութի «Ան-Նիդա»
թերթը գրում էր, որ դրանք կազմակերպված էին
ամերիկյան իմպերիալիստների և նրանց թուրքա-
կան գործակալների կողմից և դրանց անմիջական
նպատակն էր՝ Իրաքի սեպուրիկայից անջատել
Կիրկուկի և Մոսուլի նավթային հարուստ շրջան-
ները²⁷:

Ուշագրավ երևույթ էր այն, որ արևմտյան որոշ
թերթեր ուղղակի «կանխատեսում» էին, թե որտեղ
ինչպիսի կուլիթներ են տեղի ունենալու... «Յու-
նայտեղ պրես ինտերնեյշնլ» գործակալությունը,
օրինակ, հուլիսի 12-ի հաղորդագրության մեջ
«կանխատեսեց» Կասըմի կառավարության տա-
պալումը: 1961 թ. հուլիսին Կիրկուկում նորից ար-
յունալի ընդհարումներ տեղի ունեցան քրդերի և
թուրքմենների միջև: Ըստ ֆրանսիական «Օրոտ»
թերթի սպանվել էին 7 և վիրավորվել 100 մարդ²⁸:
Նախահարձակ եղել էին թուրքմենները, կրակելով

²⁵ ТАСС, 11 մայիսի 1959 թ.

²⁶ „Новое время.. 1959, № 31, стр. 2.

²⁷ նույն տեղում:

²⁸ „Autore“, 14 մարտի 1961 թ.

սեպուրիկայի տարեգարծի անահայաստուիջանը մասնակցող շարասյունների վրա³¹։

Այդ զավազրությունները արամարտորեն պետք է հասցնենին սեակցիայի դեմ պայքարի ուժեղացմանը։ Սակայն, բնդհակառակը, կառավարութիւնը մի կողմից ազատ դործելու հնարավորութիւն էր տալիս ֆեոզալական-պրոխմպերիայիստական ասարերին, մյուս կողմից սահմանափակում գեմոկրատական ազատութիւնները, խոչընդոտում դեմոկրատական կազմակերպութիւնների գործունեութիւնը։

Հաշվի առնելով երկրում ստեղծված լուրջ դրութիւնը և սեակցիային հակահարված տալու անհրաժեշտութիւնը, Իրարի կոմունիստական պարտիան պրեմիեր-մինիստր Կաւրմին դիմեց «Միացյալ ազգային ճակատ» ստեղծելու առաջարկութիւնմը։ Ազգային նոր ճակատը, որի ստեղծումը օրվա հրամայական պահանջ էր, պետք է կազմվեր կոմունիստական, Քրդական դեմոկրատական և Ազգային-դեմոկրատական պարտիաներից։ Կաւրմը մերմեքեց այդ առաջարկը Ավելին, նա ակներևութեան աշակցում էր սեակցիային, արտոնելով հետադիմական այն թերթերի վերաբացումը, որոնք փակված էին Մոսուլի գեպերից հետո³²։

Իմպերիալիստական շրջանները և թուրքական կառավարութիւնը ողջունեցին Կաւրմի կառավարութիւն քաղաքական շրջադարձը։ Ֆրանս-պրեսզործակալութիւն Անկարայի թղթակիրը այդ առթիվ նշում էր. «Քուրդական իշխանութիւնները ուշադիր հետեում են Կաւրմի՝ իր թշնամիներին պարտութիւն մասնելու փորձերին»։ Հայտարարութիւն մեջ սայում էր, որ Քուրդիան անվերապահորեն վստահում է Իրարի պրեմիերին³³։ Ամերիկյան «Լայֆ» հանդեսի խմբագիր Կեյս Ուիլերը, Կաւրմի հետ ունեցած գրուլլից հետո հրճվանքով գրում էր. «...Մեկ տարվա տատանումներից հետո վերջնական Իրարի փափակխոս և խորհրդավոր պարազուլիք ճանաչեց իր իսկական թշնամուն։ Չնայած նրան սպասում են ուրիշ փառնգներ էլ, նա որոշել է ճակատամարտ տալ կոմունիստներին»³⁴։

Դեմոկրատական կազմակերպութիւնների և գործիչների դեմ միջոցառումները փաստորեն ջուր էին լցնում արարական և քրդական ազգային-ազատագրական շարժման թշնամիներէ ջրադաջին։ Քուրդական կառավարութիւնը, որը սկզբում սուր էր ճոճում նորաստեղծ սեպուրիկայի դեմ, արդեն «համերաշխութիւն» էր հայտնուի նրա կառավարութիւն նոր քաղաքականութիւնը։ Այդ տե-

³¹ Նույն տեղում։

³² «The Sunday Times», 18 մարտի 1958 թ.

³³ TACC, 4 հուլիսի 1959 թ.

³⁴ «Life», 27 հուլիսի 1959 թ.

սակետից հատկանշական են Թուրքական ազդեցիկ «Ջումհուրիեա» թերթի հետևյալ տողերը. «Թրաքի լիդերը պայքար սկսեց կոմունիստների դեմ, վայելելով մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Իստանբուլում» (ընդգծումը մերն է—Շ. Մ.)³⁵:

Երկրում ստեղծված ներքաղաքական բարդ իրադրությունը պահանջում էր ճկուն տակտիկա դեմոկրատական ուժերին միավորելու համար: Սակայն Թրաքի կոմունիստական պարտիան, որ հսկայական երախտիք ունեցավ ռեսպուբլիկական կարգերի ստեղծման և ամրապնդման գործում, ռևոլյուցիայից հետո ծագած քաղաքական բուռն, ռատ հաճախ հակասական և շտապ լուծում պահանջող հարցերի առկայության պայմաններում, ղերծ շմեաց որոշ սխաներից: Այդ ամենից առաջ վերաբերվում է երկրի ազգային բուրժուազիայի նկատմամբ զրաված դիրքին: Կոմպարտիան թույլ տվեց ազգային բուրժուազիայի ղերի թերազնահատում ռեսպուբլիկայի պաշտպանության և ամրապնդման գործում, իսկ դա բացառաբար անդրազարծավ ազգային միասնության և իմպերիալիստական վտանգի դեմ պայքարի հաջողության վրա³⁶: Երկրում դեմոկրատական միջոցառումների անցկացման գործին նպաստելու համար, կոմ-

պարտիան առաջ բաշեց կոմունիստներին կառավարության մասնակցելու իրավունք տալու մասին լողունգր: Սակայն, դրա իրականացման համար պայքարի ձևերը որոշ դեպքերում սխալ հունով ընթացան: Օգտագործելով այդ հանդամանքը, ռեակցիան «կոմունիստական վտանգի» մասին վայնասուն բարձրացրեց և կոմպարտիայի դեմ պայքարի մղեց կառավարությանը և ազգային մյուս ուժերին:

1960 թ. հունվարին կառավարության որոշման համաձայն պետք է իրավական ճանաչում գտնեն թաղաքական պարտիաները: Այդ հիման վրա քաղաքական ազատ գործունեության իրավունք պահանջեցին Կոմունիստական, Ազգային-դեմոկրատական և Քրդական Միասնական Դեմոկրատական պարտիաները³⁷: Ներքին գործերի մինիստրությանը լեզու գոյության իրավունք շտկեց Թրաքի կոմունիստական պարտիային, և իբրև «կոմունիստական պարտիա» ճանաչվեց բուրժուային ալլ նպատակների հետապնդող մի խմբակցություն ռենդատ Ասիայի գլխավորությանը:

Կոմպարտիային լեզու գործելու իրավունքից ղրկելուց հետո, ռեակցիան հարձակում կազմակերպեց ՚նրա օրգանի՝ «Թիթիհաջ աշ-Շասարի» վրա: 1960 թ. սեպտեմբերի վերջին Թրաքի երկրորդ արտահարգ գատարանի առջև կանգնեց «Թիթի-

³⁵ «Cumhuriyet», 30 հունիսի 1959 թ.

³⁶ «Проблемы мира и социализма», 1961, № 3, стр. 45.

³⁷ «Յովետական Հայաստան», 17 հունվարի 1960 թ.

հաղ աշ-Շաարի» խմբագիր Արդիկ Կադեր Իսմայիլը: Հատկանշական էր, որ նրա «մեղքերը» հիմնավորված էին մամուլի այն օրենքով, որն ընդունվել էր Նուրի Սահրի ռեժիմի ժամանակ՝ 1954 թ.: Դատարանը տասը ամսով փակեց «Իթթիհադ աշ-Շաար»-ը, իսկ նրա խմբագիրը դատապարտվեց երեք ամսվա բանտարկության: Նույնպիսի մեղադրանք ներկայացվեց նաև Բասրայի բանվորական «Սաուվ ալ-Քալիա» թերթի դեմ: Վերջինիս գլխավոր խմբագիրը նույնպես պետք է կանգնե՞ր դատարանի առջև³⁸: Մեկ տարի անց Բազդազի զինվորական դատարանի առաջ կանգնեց Քրդական Միասնական Դեմոկրատական պարտիայի օրգան «Խաբատ» թերթի խմբագիր Իբրահիմ Ահմեդը: Դատարանը նրան ամբաստանեց իբր «ազգային միասնություն» թշնամու...

Ավելի խոշոր գայթակղություն էր Մոսուլի գործի կապակցությունը հայրենասերների նկատմամբ ոչնչով չհիմնավորված դատավճիռը: Զինվորական դատարանը, որքան էլ տարօրինակ է, պատիժներ սահմանեց արար և բուրդ այն հայրենասերների դեմ, որոնք անձնփրարար պայքարել էին դավադրության դեմ: Ավելի քան 60 զեմոկրատներ դատապարտվեցին մահվան, շատերը՝ ցմահ տաժանակիր աշխատանքի և ազատազրկման տարբեր ժամկետներով: Իրաքի արարական և

քրդական շրջաններում ավելի քան 150 հազար մարդ ստորագրեց այն դիմումը, որով կառավարությունից պահանջվում էր բեկանեղ Իրաքի հայրենասերների նկատմամբ կայացված մահավճիռները³⁹:

Իրաքի հայրենասերների դեմ հաշվեհարդարը խոր անհանգստություն առաջացրեց համաշխարհային զեմոկրատական հասարակության մեջ: Պրեմիեր Կասեմին այդ առթիվ դիմեցին նաև սովետական հասարակական կազմակերպությունները: «Սովետական միլիտանտներ մարդկանց անունից Ասիայի և Աֆրիկայի համերաշխության սովետական կոմիտեն կոչ է անում Զեզ, պարոն պրեմիեր մինիստր, բեկանեղ այն դատավճիռները, որոնք կայացվել են Իրաքի հայրենասերների նկատմամբ և բանտերից ազատել ազգային-ազատագրական շարժման մարտիկներին: Քուլլ շտալ, որպեսզի իրաքյան ռեուլյուցիայի պայծառ իդեալները արաստավորվեն նրա ամենամիլիտանտ և առկուն պաշտպանների արյունում»⁴⁰: Իսկ ո՞րն էր Մոսուլի հայրենասերների «մեղքը»: 1959 թ. մոսուլի խոռվության լիկվիդացումից հետո ինքը պրեմիեր Կասեմը շնորհակալություն հայտնեց Մոսուլի հայրենասերներին՝ դավադիրներին չափախախտ հատար: Եվ ահա այդ հայրենասերներից շատերը որոշ

³⁸ „Правда“, 4 հոկտեմբերի 1960 թ.

³⁹ „Коммунист“, 2 սեպտեմբերի 1961 թ.

⁴⁰ „Правда“, 10 փետրվարի 1961 թ.

ժամանակ անց դասապարտվեցին: մահվան: Իրարի և այլ երկրների հասարակայնության դիմումների արդյունքը եզրով այն, որ 58 մահավճիռներից 13-ը մնացին ուժի մեջ: Մահապարտների թվումն էր կոմունիստ կապիտան Մահդի Համիրը, որը մեծ երախտիք էր ունեցել Մոսուլի խոտովոթյունը ճնշելու գործում:

Չեխոսլովակյան «Ռուդե պրավո» թերթը, անգրագասնալով Մոսուլի դեմոկրատների հաշվհարգարին, գրում էր. «Ինչի՞ համար է այս ծանր պատիժը: Ի՞նչ են արել նրանք: Այդ հայրենասերների Վճռական դիրքը 1959 թ. մարտին նպաստեց սեպտաբրիկայի փրկությունը: Մեկուկես տարի հետո, Մոսուլի կոնսերվատիվներն խոտովոթյան զեմ մղվող պայքարի մտնակիցները բանտ նետվեցին: Այդ բանից օգուտ կարող են բազմի միայն Իրաքի սեպտաբրիկայի թշնամիները»⁴¹: Իրաքի հայրենասերների զեմ գործադրվող սպանելով միջոցառումների զազարեցման պահանջով Բաղդադ էին դիմում աշխարհի տարբեր երկրների դեմոկրատները: Այսպիսի բողոքներով Իրաքի կառավարությունը դիմեցին ժապոնիայի, Նորվեգիայի, Կորեական ժողովրդ-դեմոկրատական ռեսպուբլիկայի, Լիբանանի, Հունգարիայի և այլ երկրների դեմոկրատական հասարակայնությունը⁴²: ՍՄԽԻՐ՝ — դիմելով Կառմին, գրում էին Շվե-

դիայի կոմպարտիայի XIX համագումարի մասնակիցները, — ինչպես նաև Շվեդիայի բոլոր պրոգրեսիվ մարդիկ, համակրանքով և եռանդով ողջունեցին բնույցիցան Իրաքում... Մենք ավելի բան ցնցված ենք հաղորդումներից այն մասին, որ Իրաքի կոմունիստները և ուրիշ պրոգրեսիվ մարդիկ դասարանների կողմից դասապարտված են մահապատժի և ցմահ բանտարկության: Ոչ մի հորինված մեղադրանք չի կարող ստանալ մեր հավատը այն բանում, որ իրաքյան կոմունիստները գտնվում էին և առաջվա պես գտնվում են ժողովրդի պայքարի առաջին շարքերում հանուն անկախության, ընդդեմ իմպերիալիզմի և նրա գործակալների, հանուն դեմոկրատիայի և հասարակական պրոգրեսի»⁴³:

Կառավարության թողալուսյան և ռեակցիայի սանձարձակության պայմաններում հարյուրավոր դեմոկրատներ դառնում էին զանազան բանդիտների և նրանց նմանների զոհերը: Իրաքի գրեթե բոլոր շրջաններում, բազաքներում և գյուղերում տեղի էին ունենում սպանություններ: Կառավարությունը ոչ միայն գրունց զեմ միջոցներ չէր ձեռնարկում, այլև շատ հաճախ, ընդհակառակը, սձերբակալում էր սպանվածների բարեկամներին և հարագատներին միայն նրա համար, որ նրանք

⁴¹ „Новое время“, 1961, № 14, стр. 20.

⁴² Նույն տեղում, էջ 21:

⁴³ Նույն տեղում:

զնում են անօրինակաճուճյան զոհերի թաղմանը»⁴⁴;

1958 թ. սեպտեմբերի 2-ին Միջին Արևելքի և Իրաքի Քուրդիստանի բուրդ ուսանողների պատվիրակությունների հետ ունեցած հանդիպման ժամանակ պրեմիեր մինիստր Կասրմը ասում էր. «Եզրայրներս, այստեղ ձեզնից խնդրում եմ՝ աշխատել վերացնելու նախկին բաժանվածությունն ու ատելությունները, որոնք կարող էին առաջացած լինել Նյուտիսի ցեղախմբերի միջև. բոլորի պարտականությունն է աշխատել որպես կըրայրներ, պահելով աստծու օրհնությունն ու ողորմությունը. այդ զեզրում անխուսափելիորեն կվերանան ատելությունն ու թշնամանքը բոլորի միջից, ինչպես վերացավ օտարը այս երկրից, ինչպես մենք վերացրինք նրա հենարանը և գործակալներին, որի շնորհիվ մեր միջև ստեղծվեց սեր և միություն»⁴⁵։ Մինչդեռ իրականում 1959 թ. կեսերից սկսած իշխանությունները սկսեցին հրահրել ցեղամիջյան ընդհարումներ, որը սեպտեմբերի 1-ին ստեղծումից հետո փաստորեն համարվում էր պայքար սեպտեմբերի 1-ին կողմնակիցների և նրա սկսական կողմների միջև։ 1961 թ. հուլիսի 25-ին Ռեյսի գործակալության

թղթակիցը Սամարայից հաղորդում էր, «այն և կոմունիստական բրդերի ընդհարումների մասին (Իրաքի հյուսիսում), որոնց ժամանակ սպանվել է 48 մարդ։ Քրդական փախստականները, — շարունակում է թղթակիցը, — որոնք Իրաքից Քուրդիստան են անցել անցյալ շաբաթ, հայտարարել են, որ նրանք կովում են Բարզանի ցեղի հետ...»⁴⁶։ Համանման հաղորդում էր արել նաև Ֆրանս պրես գործակալության թղթակիցը⁴⁷։ Նրա պնդման համաձայն Իրաքից Քուրդիստան էին անցել 750 բրդեր, որոնք ընդհարվել էին բարդացիների հետ։ 1961 թ. օգոստոսի 24-ի համարում թուրքական «Ակշամ» թերթը հաղորդում էր, որ «Իրաքում կոմունիստական Բարզանի ցեղի հետ կռիվն ու պարտվելուց հետո թուրքական ծագում ունեցող (?) զինքար ցեղի պետ Մահմուդ աղան ապաստանել է Քուրդիստանում»⁴⁸։ Քրդական սեպագիտի ֆեոդալների՝ Քուրդիստանի և արևմտյան իմպերիալիստական գործակալների կողմից աշակցություն գտնող կոմիսներ, այսպիսով, ըստ կուրդական ուղևորվ լինել կանխարգելվում։ Փառսի և անօրինակաճուճյան պայմաններում տեղի ունեցող սպանությունները և տեղորոշողները հաճախ օգտագործվում էին որպես առիթ դեմոկրատական գործիչներին հալածելու համար։

⁴⁴ «Проблемы мира и социализма», 1961, № 6, стр. 93-94.

⁴⁵ «... ص. «اعداف الثورة»...»

⁴⁶ TACC, 26 հուլիսի 1961 թ., լսել 870:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ «Aksam» 24 օգոստոսի 1961 թ.

1961 թ. մարտին Քրդական Միասնական Դեմոկրատական պարտիան պահանջեց ստեղծել հատուկ հանձնաժողով պառլամենտի նախկին անդամ Միդիկ Միրանի սպանության գործի բնույթի վերաբերյալ «Խիստ սպանվեց էրբիլի գավառում ֆեոդալների և գյուղացիների միջև տեղի ունեցած բնորոշ բաժանակ»⁴⁹։ Պարտիայի հայտարարության մեջ այնուհետև ասված էր. «... այդ հատուկ հանձնաժողովը պետք է միաժամանակ հետաքննի սպանությունների և կոռուպտիաների դեպքերը, ինչպես նաև զենքի գործածության դեպքերը, որոնք վերջին տարվա ընթացքում ուժեղացել են Քուրդիստանում: Այդ հանձնաժողովը պետք է գանի և մերկացնի ֆեոդալների ու իմպերիալիստների, ինչպես նաև արատասահմանյան շրջանների միջև գոյություն ունեցող կապը»⁵⁰։ Իրարում փաստորեն ստեղծվել էր «ազատ գործունեության հնարավորություն», սակայն ոչ թե երկրի պրոգրեսիվ ուժերի, այլ սեահիջայի համար: Երկրում ստեղծված նման պայմանների առկայությամբ չէին պահպանվում քաղաքական վտարանդիներին ապաստան և սպահովություն տալու մասին այն երաշխավորությունները, որոնք արձանագրվել էին կոնստիտուցիայի մեջ: Իրարի

⁴⁹ ТАСС. Ирак, 13 марта 1961 թ.

⁵⁰ Նույն տեղում:

իշխանությունները շատ վտարանդիների հանձնում էին շահագրգռված այն երկրներին, որոնք ուզում էին նրանց հեռահաշիվ տեսնել: Այսպես, օրինակ, Հորդանանի կառավարությանը հանձնվեցին հորդանանյան տասը հայրենասերներ: Նույն ձևով սիրիական իշխանություններին հանձնվեց սիրիական բուրդ գեմեկրատական գործիչ Ռաշիդ Քուրդը. «հետևանքները սարսափելի էին. նա սպանվեց գաղանի ոստիկանության գործակալների կողմից»⁵¹:

Աշտարություն և դրավում այն փաստը, որ իմպերիալիստական և սեահիջիստ-ֆեոդալական ուժերը հակասպուրիկական և ազգային թշնամանքը հրահրելու համար որպես իրենց գործողությունների վայր սկզբում ընտրեցին Մուսուլը, իսկ այնուհետև՝ Կիրկուկը: Նավթարդյունաբերական այս կենտրոնները պատահական սեղ չէին զբաղվում նրանց պլաններում: Օտարերկրյա նավթային կոմպանիաները, ինչպես միշտ շարունակում էին իրենց «քաղաքական գործունեությունը»: Ամենին պատահական չէին Կիրկուկում անընդհատ կրկնվող ազգամիջյան բնորոշումները քրդերի և թուրքմենների միջև, որոնք ոչ միայն գառնում են մեծ թվով գոհերի պատճառ, այլև առիթ են տալիս իշխանություններին՝ գեմեկրատական տարրերին հետապնդելու համար:

⁵¹ „Проблемы мира и социализма“, 1961, № 6 стр. 94.

1961 թ. Իրաքի ղեմավարտական իրավունքներին և ազատություններին պաշտպանության կոմիտեի ավյալներով 1959 թ. կեսերից մինչև 1961 թ. մայիսը ռուզմա-դաշտային դատարանները կայացրել էին 112 մահավճիռներ, 770 մարդու ազատազրկել էին տարբեր ժամկետներով, որի ընդհանուր տևողությունը կազմում էր 4164 տարի⁵²։ 1960 թ. բաղաբախական պատճառներով ձերբակալվածներին ընդհանուր թիվը հասել էր 22 հազարի, արձանագրվել էին բանդիտների և ոստիկանական զործակալների հարձակման 7510 դեպքեր՝ արհամիտիենական և ղեմավարտական այլ կազմակերպությունների շնչերի վրա 3424 ընտանիքներ ստիպված են եղել հեռանալ իրենց տներից, Բանդիտական հարձակումների ժամանակ սպանվել էր 270, վիրավորվել՝ 1572 մարդ։ Ակտիվ հասարակական զործուներության համար աշխատանքից ազատվել էին արհամիտիան 7000 անդամներ, որոնցից շատերը բանտարկվել էին։ Գյուղատնտեսության միջնաարտությունը արհամիտիենական զործուներության համար աշխատանքից ազատել էր 900 գյուղատնտեսական բանվորների և գյուղացիական 3260 միությունների զրկել լիցենզիաներից՝ տարբեր պատրվակներով⁵³։

Իրավացիորեն «Ան-Նիզա» թերթի մեկնարան Մոհամեդ Գալուրը գրում էր, որ «Իրաքի բանտե-

րը լեփ-լիցուն են բաղաբախական բանտարկյալներով, սեակցիոն ա չրերը տեղորի են ենթարկում բնակչությանը, հեռապնդում և սպանում են հայրենասերներին»⁵⁴։

1958—1963 թթ. Իրաքի սեպուրիկան անցել է պատմական երկու հիմնական կտավներ։ Առաջին կտավը, որը սկսվեց հուլիսի 14-ի սուլայիցիայով և տևեց մինչև 1959 թ. հուլիսը, բնութագրվում է հետևյալ հանգամանքներով.

1) Սեպուրիկական կտավարտությունը կանգնեց հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական դիրքերում։ Ստեղծվեց իրաքյան սեպուրիկական, որը ղեմավարտական այլ միջոցառումների թվում պատրաստակամություն հայտնեց ճանաչելու բրդերի ինքնորոշման իրավունքը Իրաքի սեպուրիկայի սահմաններում։

2) Հաշվի առնելով արտաքին իմպերիալիստական և ներքին ֆեոդալական սեակցիայի սպառնալիքը սեպուրիկական կարգերի նկատմամբ, կազմի կտավարտությունը հանդես եկավ ձախուժելի հետ միասնաբար, հնարավոր դարձնելով հետևյալ միջոցառումների իրագործումը. ա) ընդունվեց օրենք ազգային սեպուրի մասին և սկսվեց նրա իրագործումը. բ) բանվոր դատակարգը և հատկապես օտարերկրյա մոնոպոլիաների բանվորները հնարավորություն ստացան պաշտ-

⁵² «Проблема мира и социализма», 1961, №10 стр. 40.

⁵³ Նույն տեղում, 1961, № 11, էջ 95:

⁵⁴ «Новое время», 1961, № 14, стр. 20.

պանելու իրենց իրավունքները. օրենքով արտոնվեցին արճմիրությունները, բարձրացվեց բանվորների աշխատավարձը. զ) հաստատվեցին ղեմակրատական ազատություններ, միտինգների, ցույցերի անցկացման ազատություն և այլն. զ) սկսվեց պետական ապարատի մաքրումը նախկին սեակցիոն ուժերի կողմնակիցներից. ե) սեպտեմբերի կիսամյակից սկսվեցին հարաբերություններ և բարեկամական կապեր հաստատեց սոցիալիստական երկրների հետ:

Երկրորդ էտապը, որը սկսվեց 1959 թ. հուլիսից և տևեց մինչև 1963 թ. սեակցիոն Հեղաշրջումը, բնութագրվում է հետևյալ հանգամանքներով՝

1) Իշխանության գլուխ անցնելուց հետո բուրժուազիան աստիճանաբար երևա թեքեց ձախ ուժերից և հետին պլան մղելով ներքին և արտաքին սեակցիայի հետ ունեցած հակասությունները, հալածանք ծավալեց ղեմակրատական ուժերի դեմ:

2) Վախենալով ղեմակրատական ուժերից իշխանության գլուխ կանգնած բուրժուազիան սկսեց հենարան փնտրել ներքին սեակցիոն ֆեոդալական տարրերի մոտ: Իսկ զա հասցրեց այն նվաճումների լիվիլիզացմանը, որոնք ձեռք էին բերվել սեպտեմբերի շնորհիվ:

3) Կառավարությունը փաստորեն մերժեց ճանաչել Իրաքի ջուրղ մոզովրդի ինքնորոշման իրավունքը:

ՔՐԴԱԿԱՆ ՊՐՈՔԼԵՄԸ 1963 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ Տ—Ի
ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Կասրմի կառավարության հակամոզովրդական բազաբականությունը շուտով լրիվ փակուղու առջև կանգնեց: Սոցիալ-տնտեսական միջոցառումների կիսատ-պոտտությունը, կամ լրիվ ձախուղումը, բազաբական ազատությունների ոչնչացումը, երկրի հայրենասիրական, ղեմակրատական ուժերի հետապնդումը պարբառ հազ սեակցիոն սեակցիայի աշխուժացման համար: Իրաքի կոմունիստական պարտիայի և երկրի մյուս ղեմակրատական ուժերի շանքերը սեակցիայի դեմ միասնական ճակատ ստեղծելու ուղղությունը, սպասվող արդյունքի չհասցրին: Գեմակրատական ուժերի միասնությունը մեծ շափով խանգարում էր նաև Կասրմի կառավարության երկրի մի բազաբականությունը, որը արհեստական բուրժուազիայից երկրպագություն էր սերմանում նրանց մեջ:

Մեակայի Իրաքի ներքաղաքական խիստ լարված դրությունը սրվեց հատկապես 1961 թ. սեպտեմբերի կեսերից, Քուրդիստանում սանձաղերժված պատերազմի պատճառով: Արաբների և բրդերի միջև եղբայրասպան պատերազմի սկսվելը, որի ամբողջ մեղքը բացառապես ընկնում էր Կասրմի

կառավարության վրա, ճակատագրական նշանակություն ունեցավ վերջինիս համար: Իրաքյան Քուրդիստանում պատերազմը սկսվելուց ի վեր Իրաքի բոլոր պրոպրետիվ ուժերը, այդ թվում բուրժուական որոշ պարտիաներ և գործիչներ, հանդես էին գալիս քրդերի իրավունքները ոտնահարելու գեմ և քրդական պրոբլեմը խաղաղ, արդարացի հիմունքներով կարգավորելու օգտին: Բայց արտաքին քաղաքականության քնազավառում ընդհանուր սումամբ պրոպրետիվ, հակաիմպերիալիստական քաղաքականություն վարող Արզել Քերիմ Կասրմբ, հաշվի չէր առնում երկրի ղեմնկրատական հասարակայնության կարծիքը ներքին մի շարք պրոբլեմների, այդ թվում և քրդական պրոբլեմի կարգավորման օւղղությունը: Եվ ահա, 1959 թ. Մոսուլի և Հևտազա հակառեսպուրիկական լուրջ վտանգ ներկայացնող զավազրույթունները ղեմնկրատական ուժերի օգնությամբ լիկվիդացրած կառավարությունը, այժմ իրեն զրկեց այդ ուժերի աջակցությունից: Արզունքը կազմ այն, որ 1963 թ. փետրվարի 8-ին Կասրմբի ղեկնառուության տապալվեց: Պետական հեղաշրջումը Իրաքում իրագործվեց «Բասս» պարտիայի կողմից, որն իր շուրջն էր համախմբել ունակցիոն քաղաքական խմբավորումներին: Մանրբուրժուական ղեմազդգիկ ծրագիր ունեցող այդ պարտիան կարողացավ իշխանության գլուխ անցնել ոչ այն պատճառով, որ վաշելում էր ժողովրդական լայն զանգվածների

աջակցությունը: Գրա իսկական պատճառն ամենից առաջ այն էր, որ Կասրմբ իր անհեռառես հակաժողովրդական քաղաքականության հետևանքով իրեն զրկեց ժողովրդի աջակցությունից և հարավորություն սակզծեց այդ ունակցիոն հեղաշրջման համար:

Երկերեսանի կերպով հայտարարություններ անելով 1958 թ. սեպտեմբրյալի խնդիրները իրականացնելու պատրաստակամության մասին, Իրաքի նոր կառավարությունը զրա հևա մեկտեղ սկսեց ուժեղ հարածանք Իրաքի ժողովրդի լավագույն զավակների գեմ: «Հակակոմունիզմը» դարձավ նոր կառավարողների քաղաքականության անկյունաքարը: Երկրի ղեմնկրատական ուժերի գեմ սկսված ուսպրեսիաները հեղաշրջման առաջին իսկ օրվանից կրեցին մասսայական բնույթ և իրենց վայրագությունը գերազանցեցին նուրի Սաիդ—Ֆեյսալի օսև ուժիմի» տարիները:

Որքան էլ տարօրինակ թվա, հակաղեմնկրատական հիստերիայի այսպիսի պայմաններում, բասսականները հայտարարեցին «քրդական պրոբլեմը խաղաղ կարգով լուծելու» իրենց մտադրության մասին: Համաձայն փոխադարձ պայմանավորվածության, 1963 թ. փետրվարի 9-ին Իրաքյան Քուրդիստանում պատերազմական գործողությունները զաղարեցվեցին: Հարց է առաջ գալիս, մի՞թե քրդական ապստամբության ղեկավարները հևարավոր էին համարում ծայրահեղ շովինիստական

բասասական կառավարության հետ բանակցությունների միջոցով հասնել քրդերի ազգային ավտոնոմիայի իրավունքների ձևաւաճման: Արդյո՞ք բասասականների կողմից սանձազերծվող տեւորը երկրի բոլոր զեմոկրատական ուժերի զեմ, հիմք չէր տալիս կարգակցնելու, որ առաջարկվող բանակցությունները արդյունքի չէին կարող հասցնել: Այն մի հիմք չկա ենթադրելու, որ հիշյալ հարցի բոլոր ծայրերը հայանի չէին քրդական ապստամբության զեկկաւարներին: Իհարկե, նրանք այդ բոլորը դիտեին: Բավական է նշել, որ Կասրմի իշխանության առաջին էտապում, երբ նա հենվում էր երկրի զեմոկրատական ուժերի աշակցությունների հակառակորդների առաջին շարքերում էին բասասականները. նրանք մշտապես հանդես էին գալիս քրդերին ազգային ավտոնոմիայի իրավունքներ արամաղբելու զեմ:

Քրդական զեմոկրատական պարտիայի և նրա նախագահ Մ. Բարզանու համաձայնությունը Երաքի նոր կառավարության հետ «քրդական ավտոնոմիայի» հարցի շուրջը բանակցություններ վարելու մասին, ճիշտ էր և սկզբից նեթ հանդիսացավ ՔԳՊ-ի քաղաքական գծի հաղթանակը հետևյալ պատճառներով.

1. Եթե ընդունենք, որ բասասականները քրդերի հետ բանակցությունների վարելով ժամանակ էին շահում իրենց սեծիմբ ամբապնդելու և վճռական

հակահարձակման անցնելու համար, ապա չի կարելի շրջդունել, որ նման գաղաքի կարքի, եթե ոչ ավելի, ուներ նաև Քարդիստանի ազատագրական բանակը, որը անհամեմատ ավելի ծանր պայմաններում էր կոլում կառավարական զորքերի զեմ: Այսպես, ուրեմն, անվիճելի է, որ Մ. Բարզանին նույնպես օգտագործեց պատերազմական զործոկությունների գաղաքի իր ուժերը համարելու և հնարավոր դիմում կանխիկատի զեպրում դիմազրելու համար:

2. Բասասական կառավարության կողմից բանակցությունների սկսելը ցույց ավեց Կասրմի կառավարման ժամանակակից համատրեկն պրոպագանդվող այն լուրերի սնանկությունը, թե Մ. Բարզանին «սպանված է» և քրդական ուժերը հիմնականում շարխարված են: Երաքի, ինչպես նաև մյուս երկրների հասարակայնությունը պարզօրոշ կերպով տեսավ, որ բուրդ ապստամբները ներկայացնում են այնպիսի ուժ, որի հետ Երաքի կառավարությունը չի կարող հաշվի չետեղ:

3. Բասասականների վատ քողարկված տակտիկական բանակցությունները ձգձգելու հարցում, նրանց ուխտագրծությունը և ի վերջո քրդերի զեմ պատերազմ սանձազերծելու քաղաքականությունը բարոյական հաղթանակ էին քուրդ ապստամբների համար և վարկարեկիչ մեծ հարված հասցրեցին արդեն առաջին իսկ ամիսներին առանց այն էլ իրենց մեկուսացրած բասասականներին:

Եվ այսպես, 1963 թ. փետրվարի 18-ին Իրաք-
յան Քուրդիստանի Կիրկուկ բազարից հատուկ ինք-
նաթիռով Բաղդադ ժամանեց բուրգ ապստամբնե-
րի պատվիրակությունը ՔԴՊ-ի բաղրբուրոյի
անդամ, փոխընդամաստ Զայլալ Բալարանիի զը-
խավորությունը: 1963 թ. մարտի 18-ին Փոյ Սան-
ջակում սեղի ունեցավ բուրգ բազարական առա-
ջագնմ գործիչների, ՔԴՊ-ի և Քուրդիստանի աղա-
տաղրական բանակի ներկայացուցիչների համա-
ժողով, որը պետք է մշակեր Իրաքի կառավարու-
թյանը ներկայացվելիք պահանջները: Շուտով
բրդական պատվիրակությունը կառավարությանը
ներկայացրեց բրդերի պահանջները պարունակող
հուշագիր, որի հիմնական հարցերը հետևյալներն
էին. դեմոկրատական հիմունքներով բուրգ աղ-
գարնաչլությունը վերաբերող հարցերի լուծում,
ժամանակավոր կոնստիտուցիայի հիման վրա
արարների և բրդերի իրավահավասարության
ապահովում, Քուրդիստանում ավտոնոմ գործադիր
մարմնի և օրենսդիր խորհրդի ստեղծում, որը
կներկայացնեն նաև Իրաքի հյուսիսում բնակվող
բուրգ աղգուսություններին, բրդական ներկայացու-
ցիչների նշանակում իշխանության կենտրոնական
օրգաններում: Այնուհետև պահանջվում էր դպրոց-
ներում դասավանդումը անցկացնել բրդերեն լեզ-
վով, բրդերեն լեզվով մերթերի և այլ հրատարա-
կությունների լույս ընծայման համար պայմաննե-
րի սակզծում և այլն:

Կառավարությունը խիստ զժկամությամբ ընդու-
նեց բրդերի վերահիշյալ պահանջները: Դրա հետ
մեկտեղ իրաքյան բաասիստների և ուսակցին
մյուս ուժերի պարագլուխ՝ պրեմիեր-մինիստրի
տեղակալ Սաադին հայտարարեց, թե Քիրաքյան
ոնոլյուցիան ճանաչում է բրդերի իրավունքը տն-
օրինելու իրենց ապագան: Սակայն բաասիստնե-
րը ամենէին մտադիր չէին կարգավորելու բրդա-
կան պրոբլեմը: Ինչպես և պետք էր սպասել բա-
նակցությունները ձգձգվեցին և ի վերջո մտան փա-
կուղու մեջ:

1963 թ. հունիսի 10-ին Բաղդադի կառավարու-
թյունը վերջնագիր ներկայացրեց Բարդանուն և
նրա կողմնակիցներին անվերապահ կերպով, 24
ժամվա ընթացքում զենքերը ցած դնելու և հան-
ձրեվելու մասին: Միաժամանակ կառավարական
զորքերի նոր ստորաբաժանումներ սկսեցին շարժ-
վել դեպի Քուրդիստան: Իսկ հունիսի 11-ին, բա-
սական կառավարողները զրժելով իրենց նախկին
խոստումները, սկսեցին արյունալի պատերազմ
Քուրդիստանում: Ամեն օր ումբակոծման էին են-
թարկվում ոչ միայն բրդական ապստամբ ուժերի
ձեռքում գտնվող շրջանները, այլև Քուրդիստանի
մնացած խաղաղ գյուղերն ու քաղաքները: Հար-
յուրավոր բրդական գյուղեր հիմնահատակ ավեր-
վեցին, ցանքատարածություններն այրվեցին նա-

¹ Н. Демченко, — Иракский Курдистан в огне,
М., 1963, стр. 45.

պլամային ոււմբերով: նավթային հարստություններին կենարժեք Կիրիւսիի դավառից արտաբովեց 25 հազար բուրգ աղզարնակչության, որի փոխարեն վերարձակեցրին արարական ցեղերին²: Բուն Կիրիւսի բաղարում ամբողջապես ավերվեց քրդական մի թաղումս. այն աները, որտեղ ապրում էին ավելի քան 20 հազար բուրգ աշխատավորներ, բուրգոգներնբով հոյին հավասարեցվեցին: Քասական կառավարությունը ձգտում էր իրականացնել քրդերին ընդհանրապես բնաջինջ անելու քաղաքականությունը. մասնավորապես հրահանգ էր արված ոչնչացնել 18-ից մինչև 40 տարեկան բուրգ տղամարդկանց³:

Իրաքյան նոր կառավարության կողմից թեւավորված այսպես կոչված «ազգային զվարդիանաները» աննախադեպ արհավիրքներ բերեցին Իրաքի ժողովրդի դիտին: Այդ վայրագություններին զոհ գնացին Իրաքի կոմպարտիզյի կենտրոնի առաջին բարտուղար Սալլամ Աղիլը, ԿԿ-ի բարտուղար Զամալ Հալիպարին, Արզել Կադեր Իսմայիլ Բուտտանին և ուրիշներ: Իրաքի ղեմնկրատական գործիչների հետ հաշվեհարգար էին տեսնում առանց որևէ մեղադրանքի հիմնավորման և զատի: Այսպես, օրինակ, երկար ասանջանքների ենթարկելուց հետո քասական պատժիչ ջոկատները սվիններով հանել էին Սալլամ Աղիլի աչքերը, կտրա-

ակ մարմնի մտերը և հետո գցել ճանապարհ հարթեցնող մեքենայի տակ: Չքանս պրես զործակալությունը հաղորդում էր, որ «տանկերը զնում էին կանանց, ևրիխաների և ծերերի դիակների վրալով»⁴: Խաղաղության համաշխարհային խորհրդի անդամ, Իրաքի հայտնի ղեմնկրատական գործիչ Թեվֆիկ Մունիրի տունը հիմնահատակ ավերվեց, նրան զնդակահարեցին և դիակը քնտանիքի անդամների ներկայությամբ տանիքից գցեցին ցած: Իրաքի ղեմնկրատական շարժման մեկ այլ հայտնի գործիչ Մուհամեդ Հուսեյն Աբու Ալ Իսին տանջամահ արեցին, նրա կնոջ՝ մահվան դատապարտված նշանավոր հասարակական գործիչ Սաֆիրա Ժամիլ Հաֆեզի ներկայությամբ: Սպանությունից հետո նրա դիակը երեք օր մնացել էր բանտային այն խցիկում, որտեղ գտնվում էր Սաֆիրա Հաֆեզը⁵: Նման և ավելի ահավոր ոճիրները կրեցին գրեթե մասսայական բնույթի:

Իրաքի ամբողջ ժողովուրդը ծանր պլամաններում սկսեց զժպարին պայքար մղել քասական սեծիմի գեմ: Այդ պայքարի հարվածային ճակատը հանդիսանում էր Իրաքյան Քուրդիստանը, որտեղ Քրդական ղեմնկրատական պարտիայի կողմից ղեկավարվող ղեմնկրատական ուժերը կատաղի մարտեր էին մղում կառավարական զորքերի գեմ:

² «Проблемы мира и социализма», 1965, № 2, стр. 82.

³ Նույն տեղում:

⁴ «Известия», 27 հունիսի 1963 թ.

⁵ Նույն տեղում:

Քուրդիստանում սանձազերծված գեներցիոյի քաղաքականութիւնը և Իրաքի ղեմնկրատական ուժերի դեմ կիրառուող վայրագ տեսող բողոքի լայն ալիք առաջացրեց համաշխարհային հասարակայնութեան մեջ: 1963 թ. հունիսին ՏԱՍՍ-ը հրատարակեց հայտարարութիւն, որով սովետական պաշտօնական շրջանները վճռականապէս դատաւարտում էին քառասունների սպիտակաշոր զործողութիւնները Քուրդիստանում և պահանջում ճանաչելու բողոքի ազգային իրավունքները: «Յուրաքանչյուր ազնիվ մարդ աշխարհում և ամեն մի պետութիւն, որը հարգում է ՄԱԿ-ի սկզբունքները, չի կարող բողոքի վճռական ձայն չբարձրացնել բուրգ ժողովրդի նկատմամբ իրաքյան իշխանութիւնների սքրագործութիւնների դեմ»: 1963 թ. հունիսի 22-ին, սովետական միլիտնավոր մարդկանց անուիւց Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխութեան սովետական կոմիտեն վճռական բողոք էր հայտնում Քուրդիստանում քառասունների վայրագութիւնների չնձ: ՄԱԿ-ի զբաղման քարտուղարին ուղղված հատուկ հեռագրում խնդրվում էր շտապ կարգով միջոցներ ձեռնարկել Իրաքում արշուձահելութիւնը դադարեցնելու համար:

Իրաքի արար և բուրգ հայրենասերների նկատմամբ քառասունների վարած քաղաքականութիւն-

⁶ „Правда“, 16 հունիսի 1963 թ.

⁷ „Правда“, 22 հունիսի 1963 թ.

նր խորը վայրույթ էր առաջացրել Արևելքի երկրներում: Քրդական ազատագրական շարժման հետ համերաշխութեան շարժումը ընդգրկեց Հնդկաստանը, Ճապոնիան, Բիրման, Բնդոնեզիան, Ցեյլոնը և այլուր: «Բոլոր արարները պետք է վճռականորեն դատաւարեն իրաքյան կառավարողների գործողութիւնները քրդական հարցի լուծման դեմ», հայտարարեց կիբանանի խոշոր հասարակական գործիչ, Խաղաղութեան համաշխարհային խորհրդի անդամ Անտուան Քարեթը: Ալժիրի հայտնի գրող Քաթիր Յասինը հրատարակեց բաց նամակ, որտեղ ասված էր. «Ես դիմում եմ Ալժիրի իմ եղբայրներին, արարական ժողովուրդներին, ամբողջ աշխարհին՝ թող ազատանք բուրգ մարդիկ ամենուրեք իրենց ձայնը բարձրացնեն Իրաքում ֆաշիստական զիկտատորայի դեմ, թող զաղարեցվեն մասսայական սպանութիւնները, թող Քուրդիստանը ստանա արժանութիւն»¹⁰:

Միջազգային ամբողջ ղեմնկրատական հասարակայնութիւնը ստանալով ընդունեց Իրաքյան Քուրդիստանում մղվող պատերազմի մեջ սրող շահագործված պետութիւնների մասնակցութեան լուրը: Դեռևս ՔԳՊ-ի պատվիրակութեան և Բաղդադի կառավարութեան միջև քանակցութիւնների ըն-

⁹ „За рубежом“, 1963, № 29, стр. 18.

¹⁰ П. Демченко, Иранский Курдистан в огне, стр. 58.

¹¹ նույն տեղում:

Քանալու պահին օտարերկրյա մամուլում հազար-
դամներ երևացին այն մասին, որ ՍՍՆՏՈ ազգեսփյ
ազմական խմբավորման Կարաչիում տեղի ունե-
ցած սեպիայում քննարկվել էր քրդական պրոբլե-
մը: Սեպիայի մասնակիցները քննարկել էին այն
հարցը, թե ինչպես օգնեն Բաղդադի կառավարու-
ներին քրդական ազգային ազատագրական շար-
ժումը ճնշելու գործում¹¹:

Իրաքի պաշտպանության մինիստր գեներալ
Ամմաշի պարծենկոտ հայտարարությունը՝ քրդա-
կան խռովարարներին կայծակնային արագու-
թյամբ ջախջախելու մասին՝ հօգու ցնդեց: Բա-
սականները ստիպված եղան դիմել արտաքին ուժե-
րին քրդական ազատագրական շարժման դեմ պայ-
քարելու համար: Իրաքյան Քուրդիստանում ուղ-
մական անփառունակ ավանյուրայի մեջ ներ-
գրավվեցին սիրիական 10 հազարանոց բանակը և
ավիացիան: Ոչ առանց հիմքի համառօրեն լուրեր
էին տարածվում շահազրդոված մյուս պետություն-
ների միջամտության մասին:

Իրաքի ժողովրդի՝ արաբների և քրդերի համար
այդ կրիտիկական պահին խոշոր նշանակություն
ունեցավ խաղաղասեր պետությունների՝ մասնա-
փորպան Սովետական Միության վճռական դիրքը:
1963 թ. հուլիսի 10-ին, սովետական կառավարու-
թյունը հատուկ հայտարարությամբ դիմեց Իրաքի,

Իրանի, Քուրդիստանի և Սիրիայի կառավարության-
ներին Իրաքյան Քուրդիստանի ղեկավարի կապակ-
ցությամբ: «ՍՍՄՄ կառավարության ունեցած
տվյալների համաձայն, — ասված էր հայտարարու-
թյան մեջ, — Իրաքի ժողովրդի կողմից մերժված
ՍՍՆՏՈ ազմա-պաղտության խմբավորման անգամ
պետությունները կանգնել են Իրաքի հյուսիսում
անդի ունեցող իրազարծություններին միջամտելու
ճանապարհին, ընդհուպ մինչև ուղղակի ընդ-
թիվ միջոցառումների իրագործումը... Անկախ այն
բանից, թե որքանով է ճիշտ Իրաքի հյուսիսում
անդի ունեցող իրազարծությունների մասին հա-
զարդումների այս կամ այն մասը, օտարերկրյա
պետությունների մասնակցությունը այդ իրազար-
ծություններին կասկած չի հարուցում¹²: Սովետա-
կան կառավարության հայտարարության մեջ
վճռականորեն ընդգծված էր Իրաքյան Քուրդիս-
տանի իրազարծություններին օտարերկրյա միջա-
մտության վտանգավորությունը: Խաղաղասեր
մյուս պետությունների ջանքերի հետ միասին Սո-
վետական Միության դիրքը հանդիսացավ վճռա-
կան զործոններից մեկը Իրաքյան Քուրդիստանի
իրազարծություններին օտարերկրյա հետագա մի-
ջամտությունը կանխելու գործում:

Մանդրական ժողովրդական ռեսպուբլիկայի կա-
ռավարությունը պաշտոնապես դիմեց ՄԱԿ-ի

¹¹ „39 рублем“, 1963, № 12, стр. 22.

¹² „Правда“, 10 июля 1963 г.

Գլխավոր ասամբլեայի 18-րդ սեզիայում քննարկելու քրդերի նկատմամբ Իրաքի կառավարության վարած զենոցիդի բաղադրականության մասին հարցը¹³։ Համանման բնույթի նամակ սովետական կառավարությունը ուղղեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին։ «Հրաժարվել քրդերին ապրական իրավունքներ տալուց, — ասված էր նամակում, — նշանակում է՝ հարցականի տակ զենկ ստենք, աֆրիկացիների իրավունքները Հարավաֆրիկյան անապուրիկայում, բնդունել ասասլական ու ազգային դիսկրիմինացիան, նշանակում է չուր լցնել իմպերիալիստական դադուֆարարների ջրաղացին»¹⁴։ Սովետական կառավարությունը հետևողականորեն շարունակեց քուրդ ժողովրդի պայքարը պաշտպանելու իր մարդասիրական քաղաքականությունը։

1963 թ. հուլիսին Ժնևում, ՄԱԿ-ի անտեսական ու սոցիալական խորհրդի սեսիայի բարտուղարությունը տարածեց Իրաքում քուրդ ժողովրդի ֆիզիկական բնաշնչման վերաբերյալ ՄԱԿ-ի պատվիրակության հուշագիրը և բանաձևի նախագիծը։ Հուշագրում նշված էր, որ Իրաքի կառավարությունը կոպիտ կերպով խախտելով ՄԱԿ-ի կանոնադրությունը և բարոյականության ու մարդասիրության հանրաճանաչ սկզբունքները, վարում է

քրդերին բնաշնչ անելու քաղաքականություն։ Այնուհետև սովետական բանաձևի նախագծում վճռականորեն դատապարտում էին Իրաքի կառավարության զործողությունները և կոչ արվում անհասպաղ դադարեցնել քուրդ ռազմական զործողությունները քուրդ բնակչության դեմ։ Տնտեսական և սոցիալական խորհրդի սեսիայի նախագահը բավարարեց ՄԱԿ-ի պատվիրակության պահանջը՝ Իրաքի Բեռլինի կառավարության կողմից քուրդ ժողովրդի դեմ վարվող զենոցիդի բաղադրականության մասին» հարցը սեսիայի օրակարգի մեջ մտցնելու վերաբերյալ, որպես կարևոր և շտապ լրացուցիչ հարց¹⁵։

1963 թ. աշնանը Իրաքի բանաստեղծական կառավարությունը մտել էր լրիվ փակուղու մեջ։ Պատճառն այն էր, որ շնայած իրենց հայտարարություններին 1958 թ. սեպտեմբերի 1-ին խորհրդարանի կազմած մասին, նրանք բնա կուրման կրկրի կյանքի քուրդ բնագավառներում ոչնչի հավասարեցրին նույնիսկ այն նվաճումները, որոնք կային Կասրմի սեփիմի ժամանակ։ Բանաստեղծները ի վիճակի չեղան իրազործելու սոցիալ-տնտեսական սրել առաջադիմական միջոցառում, բնդհակառակը, նրանց զործունեությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծում Իրաքը իմպերիալիստական ուժերի ազդեցության ոլորտը ցցի-

¹³ „Правда“, 11 հուլիսի 1963 թ.

¹⁴ նույն տեղում։

¹⁵ „Известия“, 11 հուլիսի 1963 թ.

լու համար Կրախի մատնվեց նաև «արարական միասնություն» վերաբերյալ բասասկան ծրագիրը: Առաջին անգամ զատնախոյ վառավարոյ պարտիա Իրաքում և Միրիայում, բասասկանները հնարավորություն ունեցան ցուցադրելու իրենց ծրագրի լրիվ սնանկությունը, սրբ ոչ թե նպաստում, այլ վնասում էր «արարական միասնությունը»: Եվ վերջապես Քուրդիստանում մզվող պատերազմում շնայած ուժերի գերազույն լարմանը և արաբին օգնությունը, բասասկաններն ընկան Կասրեի կառավարության վիճակի մեջ: Քրդական ապստամբ ուժերը, Իրաքի մյուս ազգությունների ղեմնորատական ուժերի—արաբների, ասորիների, հայերի և մյուսների օգնությամբ կարողացան զիմաղրել կառավարական մեծաթիվ և լավ զինված ուժերին և հերոսաբար պաշտպանել իրենց զիբրերը: Միջադպին ստպարեզում, այդ թվում և արաբական երկրներում, բասասկանների նկատմամբ առաջացավ մեծ հակակրանը:

Ահա այսպիսի պայմաններում 1963 թ. նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ «պետական Նեղաշրջում», սրբ ավելի շուտ «դրությունը փրկելու միջոց» էր: Իրաքի պրեզիդենտ Արեֆը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ երկրում սանձազերծված տեղորի համար մեղադրում էր բասասկաններին և «ազգային զվարդիականներին»: Կառավարությունը միջոցառումներ ձեռնարկեց ժողովրդի մեջ խիստ առելություն առաջացրած ազգային-

զվարդիականներին զինաթափելու համար: Նոյեմբերի 18-ի Նեղաշրջումից հետո Իրաքի կառավարության ղեկավար Քահիթ Յահյան և պրեզիդենտ Արեֆը հանդես եկան մի բանի ծրագրային հայտարարություններով, որտեղ մեջ պատրաստակամություն էր հայտնվում լուծելու երկրի առև ծառայած հրատապ խնդիրները: Նոր կառավարության և Մուստաֆա Բարզանու ներկայացուցիչների միջև անկի ունեցած նախնական բանակցություններից հետո 1964 թ. փետրվարի 10-ին Իրաքյան Քուրդիստանում սազմական գործադրությունները դադարեցին: Կառավարության հայտարարությունը բրդական պրոբլեմի խազազ կարգավորման և Քուրդիստանին ավտոնոմիա տալու մասին, արժանացավ համաշխարհային հատարակչություն հավանությունը:

1964 թ. փետրվարյան զինադադարը հանդիսացավ բրդական ազատագրական և Իրաքի ամբողջ ղեմնորատական շարժման խոշոր հաղթանակը: Զինադադարը մեկ անգամ ևս ցույց տվեց բուժի ուժով բրդական ազատագրական շարժումը վերացնելու անհնարելությունը: Բրդական շարժման ղեկավարները, ինչպես միշտ, ուղղունեցին զինադադարը և պատրաստակամություն հայտնեցին կառավարության հետ բանակցություններ սկսել բրդական ավտոնոմիայի հարցի շուրջ: Թառականների հետացումը իշխանությունից և բազաբական նոր խմբավորումների երևան դալը կառավարու-

Յյան կազմում բրդական շարժման մասնակիցներին մեջ հույսեր առաջացրեց ընդունելի պայմաններով՝ բրդական պրոբլեմը կարգավորելու համար, իր հերթին կառավարությունը խոստանում էր առանց ձգձգման պայմաններ ստեղծել բրդական ինքնավարության իրականացման համար:

Սակայն, զինադադարի վերաբերյալ հաշտության կնքումից հետո անցած մեկ տարին իր արդյունքներով հուսադրող որևէ բան չավելց: Ավելին նույնիսկ պինդագործի պայմանները մնացին անկատար: Կառավարությունը Քուրդիստանից իր կորբերը շճանեց: Իրաքի ռեսպուբլիկայի ժամանակավոր կոնստիտուցիայից հանված են այն կետերը, որոնք վերաբերում էին բրդերի՝ որպես առանձին ազգության իրավունքներին: Կառավարության խոստումը պատերազմի հետեանքով ավելյալ շրջանների վերականգնման համար միջոցներ բաց թողնելու մասին, գյուղացիների ցանքատարածությունների ունչացման, նրանց ավերված տների զիմաց փոխհատուցում տալու մասին փաստորեն մնաց անկատար: Եներթին և արտաքին ռեալիտան ուժերի հետ կապված բրդական ֆեոդալների կողմից կազմակերպված «Սայահ էլ գինի հեծնազորայինները», որոնք կազմում էին ապրտամբների դեմ, ոչ միայն շղթվեցին, այլև ավելացվեց նրանց բանակը: Ապարդյուն անցան Մուստաֆա Բարզանու բաղձաթիվ հուշադրերը բրդական պրոբլեմի լուծման համար պայմաններ ստեղծելու

մասին: Ընդհակառակը, կառավարությունը առանց բրդական ինքնավարության հետ կապված որևէ միջոցառում իրականացնելու, պահանջում էր բրդական շարժման ղեկավարներին ցրել բրդական ազգային-պարտիզանական միավորումները:

Բանակցությունների անարդյունավետությունը և կառավարության խոստումնազրմությունը ՔԳՊ-ի ղեկավարությանը հարկադրեցին ապստամբների հսկողության տակ գտնվող բրդական շրջաններում իրականացնել նախնական կարգի մի շարք միջոցառումներ: Անդրիական «Սանդի տելեգրաֆ» թերթը մասնավորապես հազարում էր սերդական պառլամենտի» ստեղծման մասին: 1964 թ. հուլիսի 1-ին սկզբներին տեղի ունեցավ բրդական նոր պառլամենտի առաջին սեսիան, որը հայտնի է «Մեռյուցիոն խորհրդի հրտանատարություն» անունով: Պառլամենտի տեղերը բաժանված էին հետևյալ կարգով. 18-ը ժողովրդական ներկայացուցիչներ են, որոնցից 12-ը բնակիչներն սեպտեմբերի 29-ին Կալա Գիդալում տեղի ունեցած ժողովրդական կոնֆերանսում: Մնացած 6-ը, այդ թվում խալցեդական եպիսկոպոսը և մուսուլմանական բարձրատիճան շինովները նշանակվել են Բարզանու կողմից: ՔԳՊ-ի 16 ներկայացուցիչները բնակվել էին 1964 թ. Ռանիայում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ:

Բացի այդ, ստեղծվել էին նաև հինգ այլ ժամանակավոր կոմիտեներ, որոնք պետք է նա-

խազծեր պատրաստեին կոնստիտուցիայի, ֆինանսական, զինվորական և ուրիշ զորքերի մասին: Գործադիր օրգանը բաղկացած էր 11 մարդուց: Նրան հանձնարարված էին միևիտարների կարիներ ֆունկցիաներ¹⁶: Քրդական այն շրջաններում, որոնք գտնվում էին ապստամբների ձեռքում հարկերի հավաքման և այլ բնույթի հարցեր լուծվում էին բացառապես քրդական տեղական օրգանների կողմից:

Քրդական զեմոկրատական-ոնոլյուցիոն շարժման ղեկավարները շարունակում էին համառ շանքեր գործադրել կառավարության հետ համաձայնության գալու և քրդական պրոբլեմը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար: Այդ կարգի բայերից մեկը հանդիսանում էր 1965 թ. սեղբենիին մեծ տերություններին և ՄԱՌ-ին ուղղված ՔԴՊ և ապստամբության ղեկավարների դիմումը, որտեղ նրանց ուշադրություն էին հրավիրում «ստեղծված լարված դրություն և քրդական պրոբլեմը ինքնավարության միջոցով լուծելու անհրաժեշտության վրա»¹⁷: Համանման բովանդակությամբ հուշագիր քրդական շարժման ղեկավարների կողմից ուղարկվեց նաև Միավորված Ազգերի կազմակերպությանը:

Իրաքյան իշխանությունների կողմից հրահրված մի շարք միջադեպեր ավելի սրեցին դրությունը:

¹⁶ За рубежом, 1 64, № 45, стр. 14.

¹⁷ „L' Humanité“, 5 մարտի 1965 թ.

1964 թ. նոյեմբերի վերջերին բռնի կերպով կիրկուկի մտակալում գտնվող քրդական մի գյուղի բնակիչներ թշվեցին իրենց հողերից: Գեկուեմբերին Գարբանդի խանի շրամբարի մոտ 1500 քուրդ բնտանիքներ հետապնդումների պատճառով հարկադրվեցին ապաստան գտնել Իրանական Բարդիստանում: Հիշյալ զեպերին միջամտեցին իրաքյան ավիացիան և հրետանին: Սուլեյմանիեի մոտ գտնվող Չեմչեմայի շրջանում 1964 թ. զեկուեմբերին իրաքյան կառավարական զորքերը փորձեցին բռնի ուժով զբաղել քրդական բանակի կողմից պահպանվող ճանապարհը: Դրանից հետո Իրաքի պաշտոնական շրջանները հաղորդումներ արեցին այն մասին, որ իբր սքրդական բանակը հարձակվել է արձակուրդից վերադարձող իրաքյան բանակի զինվորների վրա»¹⁸: Բազադի աադիոն և Թերթեբը սկսեցին պարբերաբար նյութեր հազարդել և տպագրել, որոնք Թշնամանը էին սերմանում քրդական ազատագրական ուժերի նկատմամբ, մի անսակ նախադատարաստում քրդերի դեմ կիրառվելիք միջոցառումները:

1964 թ. նոյեմբերին քրդական զեմոկրատական պարտիայի ղեկավարությունը և Մուստաֆա Բարդանին Բազադի կառավարությանը ներկայացրին նոր հուշագիր, որտեղ շարադրված էին քրդական

¹⁸ Նույն տեղում:

պրորքները խաղաղ ճանապարհով կարգավորելու ուղիները և ցույց էր տրվում զինված կոնֆլիկտի առաջացման վտանգավորությունը Իրաքի արաբ և քուրդ ժողովուրդների համար: Սակայն հիշյալ հուշագիրը անպատասխան թողնվեց: 1965 թ. սկզբներին հանախակի դարձան կառավարական զորքերի կողմից քուրդ ապստամբների հսկողության տակ գտնվող շրջանների սահմանների վրա միջադեպերի կազմակերպումը: Արեֆ-Ցահյայի կառավարությունը սկսեց տեղապահ միջոցներ գործադրել քրդական բնակչի ն ֆեոդալներին, շեխներից ու գանազան քրեական թափփուկներից կազմակերպված այսպես կոչված «Սալահհեդինի հեծելազորայիններին» թիվը ավելացնելու համար, չնայած այն բանին, որ 1964 թ. փետրվարի 10-ի զինադադարի պայմաններից մեկը հանդիսանում էր հիշյալ վարձկան խմբերի ցրումը: Կառավարությունը ոչինչ չարեց տասնյակ հազարավոր այն քուրդ գյուղացիներին իրենց նախկին տները և հողամասերը վերադարձնելու համար, որոնք բաասական ռեժիմի ժամանակ ըզվեցին հարազատ վարերից: Այսուեզ բնակեցվել են արաբական ցեղեր, որոնց ցեղապետները սերտորեն կապված են «Իրաք պետրոլում կոմպանիի» հետ: «Բազմաթիվ ապացույցներ կան այն մասին, որ կառավարությունը նավթային ընկերության հանդեպ պարտավորություն է ստանձնել շարունակելու

քրդերի մասնայական արտաքուսումը Կիրկուկի նավթով հարուստ շրջանից»¹⁹:

Քնալով ակնհայտ դարձավ, որ Բազդադի կառավարությունը նորից նախապատրաստվում է զինված ուժով լիվիզացնել քրդական պրորքները:

1965 թ. ապրիլի 3-ին Իրաքի բանակի տանկերը և զրահապատ մեքենաները զրավեցին Սուլեյմանիի փողոցները ու սկսեցին կրակ տեղալ: Այսպիսով Բազդադը արդեն բացահայտ կերպով ստեղծարեց մոտ մեկ տարի առաջ կնքված զինադադարը և զրեց Քուրդիստանում նոր արյունահեղություն սկիզբը: Ապրիլի 5-ին Իրաքյան բանակի հինգ զիվիզիաներ սկսեցին գրոհել քրդական լեռնային այն շրջանների վրա, որոնք գտնվում էին քրդական ազատագրական բանակի հսկողության տակ²⁰:

Բնորոշ է, որ Արեֆ-Ցահյայի կառավարությունը հարկ չհամարեց որևէ պաշտոնական հազորագրություն անել Քուրդիստանում սկսված իրադարձությունների մասին: Անհրաժեշտ է նշել, որ դեռևս 1964 թ. կեսերից զնալով ավելի ու ավելի էր զրսետրվում կառավարության մտադրությունը վիժեցնելու զինազորային: Ընդ որում քրդական հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցում կառավարությունը բաժանվում էր երկու թևի:

¹⁹ «Проблема мира и социализма», 1955, № 5, стр. 85

²⁰ «Le Monde», 7 ապրիլ 1965 թ.

Արեֆի և Յահյայի զլիսավորած խումբը հանդես էր գալիս վճռական գործողությունների օգտին. այլ կերպ ասած, անտեսելով իրենց նախորդների անփառունակ ավանդատրամն, նրանք զտեսում էին, որ հնարավոր է ուղղմական ուժով ճնշել քրդական շարժումը և գրանով իսկ վերացնել «Նյուսիսի խրոնիկական պրոբլեմը»։ Կառավարության մյուս թևը, որի մեջ մտնում էին Միացյալ Արաբական Ռեպուբլիկայի հետ սերտ համագործակցություն հաստատելու կողմնակիցները և որոնց զլիսավորում էր Ֆուադ Ռիքարին, հանդես էր գալիս Բարզանու և ՔԳՊ-ի մյուս զեկավարների հետ անհապաղ բանակցություններ սկսելու օգտին։ Հարավային Քուրդիստանի ճգնաժամային դրությունը զարձակ էր Իրաք—ՄԱՌ ոչ պաշտոնական բանակցությունների առարկա։ 1965 թ. փետրվարի 22-ին ՄԱՌ-ի պրեզիդենտ Նասերը Արեֆին անձնական նամակ ուղարկեց, որտեղ նրան կոչ էր անում զտեսել քրդական պրոբլեմի խաղաղ կարգավորման ուղիները։ Այդ նամակի մեջ, որը որոշ ժամանակ անց հրատարակվեց մամուլում, Նասերը Իրաքի պրեզիդենտին գրում էր. «Ավելի քան մեկուկես տարի առաջ ևս ձեզ խորհուրդ տվեցի Քուրդիստանի համար ավտոնոմիայի այնպիսի ձև գտնել, որը լիախառը Իրաքի մաքուրզականությունը և միասնությունը։ Ես կուզենայի որպեսզի այդպիսի միջոցառումը բնզունվեր որպես արաբ-

ների մեծահոգության արտահայտություն իրենց բուրդ եզրայրների նկատմամբ»²¹։

Արեֆը, ըստ երևույթին, ոչ այնքան բարյացակամ վերաբերվեց Նասերի այս միջնորդությանը։ Սակայն իշխանության զուլս գալուց ի վեր նա ամեն կերպ աշխատում է ցույց տալ իր «համերաշխությունը» ՄԱՌ-ի զեկավարության հետ, որը ինչպես ցույց է տալիս զեպերի մանրակրկիտ ուսումնասիրությունը, ոչ այնքան անկեղծ ևնվիրվածությունն արտահայտությունն է, որքան սեփական զիրքերը բուն Իրաքում ամրապնդելու, և հակառակորդ ուժերի զեմ մղած իր պայքարում Նասերի աջակցությունը վախելու տակտիկայի արտահայտություն։ Ահա թե ինչու Արեֆը արդեն ընդունած լինելով Քուրդիստանում եղբայրասպան պատերազմ սանձազերծելու որոշումը, այնուամենայնիվ հարկ համարեց «հանուն բարեկամական կազերի պահպանման» ուղղմական գործողությունները սկսելուց առաջիործն էրելու օր առաջ պրեմիեր մինիստր Յահյային ուղարկել Կահիրե։ Մամուլի հաղորդումների համաձայն Նասերը կտրականապես զեմ էր արտահայտվել քրդերի զեմ պատերազմը վերսկսելու զազափարին։

Այսպիսով, Արեֆ Յահյայի կառավարությունը զրծելով քրդական պրոբլեմը խաղաղ ճանապարհով կարգավորելու իր խոստումը սկսեց պաս-

²¹ Նույն տեղում։

րազմ Քուրդիստանում, որը, ինչպես և նախկինում, խիստ կերպով դատապարտվում է ինչպես արաբական երկրների զեմոնիրատական հասարակայնության և շրջահայաց քաղաքական գործիչների, այնպես էլ Իրաքի զեմոնիրատական հասարակայնության կողմից: Քուրդիստանում մղվող պատերազմը խորը դժգոհություն է առաջացրել Իրաքի բանակի մեջ: Համախառն են դարձել բուրգ, ինչպես նաև արաբ և այլ ազգությունների պատկանող զինվորականների ամբողջ խմբերի անցումը թրքական ազատագրական բանակի կազմը: Այդ փաստը նույնիսկ անուղղակի կերպով հարկադրված են ընդունել Բաղդադում:

Օգտագործելով թվական գերաշուկայությունը, ռազմական տեխնիկայի առավելությունը և զլխավորապես ավիացիան, իրաքյան բանակը 1965 թ. ապրիլին գրավեց Ռանխան, ինչպես նաև Հալաբջան ու թրգական ցածրադիր այլ բնակավայրեր: Սակայն դրանք էական նշանակություն չէին կարող ունենալ պատենազմի ելքի համար: Թրգական ազատագրական բանակը զրանից հետո լուրջ հարվածներ հասցրեց կառավարական զորքերին, պարտության մատնելով նրանց Կալա Գիզլում, Շվարաում, Մավաթում, Փենջվինում և ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այլ կետերում: Շարունակելով բատ էություն բասսականների վայրագ քաղաքականությունը, Իրաքի կառավարությունը իր ռազմական անհաջողություն-

ների համար սկսեց պատժել արշավներ կազմակերպել թրգական քաղաքներ Կիրկուկում, Սուլեմանիեում, էրբիլում և Զախոյում²⁰:

Բաղդադի կառավարողների պլանները արագորեն թրգական ազատագրական ուժերի դիմադրությունները կտարելու ուղղությամբ, փաստորեն ձախողվեցին: Թրգական ազատագրական բանակը սպրիլի սկզբներին ևս բաշվելով լեռնային շրջանները, այնուհետև ինքը սկսեց նեղել կառավարական զինված ուժերին: Բնորոշ է այս տեսակետից Իրաքի բանակի բարձրատեսիճան սպաներից մեկի հայտարարությունը, որը ծանր վիրավորվելուց հետո մեկնել էր Լոնդոն բուժվելու: Նա հաստատեց, որ թրգերի զեմ Բաղդադի կառավարությունը հանել էր անվագն 50 հազարանոց զորք, որին օգնում էր ինքնաթիռների երեք էսկադրիլիա: Լրիվ ձախողվեց կառավարության այն պլանը, բատ որի 4—5 շաբաթվա ընթացքում Իրաքի զորքերը պետք է իրենց ձեռքը գցեին ասզմա-սարատեղիական կարևոր նշանակություն ունեցող Կուլիի կիրճը, անցնել Ջաբ գետը, նորից գրավել Ռանխան, Փոյ Սանչալը և էրբիլ տանող զլխավոր ճանապարհը, որը գահվում էր սպստամբների ձեռքում: «Կենտրոնական կառավարությունը,— այնուհետև հայտարարել էր իրաքյան սպան,— կարողացել է գրավել միայն մի բանի ավերված և լքյալ գյուղեր

²⁰ „The Sunday Times“, 16 մայիսի 1965 թ.

և սպանել մի բանի գյուղացիներին, սակայն նա չի կարողացել իր ձեռքը գցել ոչ մի վիրավորի, բանի որ այստամրենքը երբեք վիրավորներին մարտի գաշտում չեն թողնում: Պատերազմի առաջին մի բանի շարահավաքն անցրում մենք կրեցինք կենդանի ուժի և ավերիկայի մեծ կորստաներ»²³:

Չնայած ուժերի խիստ անհավասարությանը քրդական ազատագրական բանակի մարտիկներին և պարտիզանների պայքարի արդարացի բնույթը, նպատակի պարզությունը հանդիսանում է նրանց հաջողության հիմնական գրավականը:

Ինչպես և նախկինում քրդական ազատագրական շարժման ներկայացուցիչները քուրդ ժողովրդի իրավունքների ճանաչումը իրավացիորեն կապում են Իրաքում ղեմնորատական կարգերի ստեղծման հետ: Այդ առթիվ «Յումանիտե» թերթին տված իր ինտերվյուի մեջ ՔԴՊ-ի քաղցրությունի անգամ Զալյալ Քալարանին հաստատարեց. «Պայքարը հատուկ սահմանափակ խունտայի տապալման և այնպիսի իշխանության ստեղծման, որը հաստատի ղեմնորատական իրավունքներ և պառլամենտական ազատություններ, ներառյալ Իրաքի ղեմնորատական սեպարատիկայի սահմաններում քուրդ ժողովրդի ավտոնոմիայի ճանաչումը, հանդիսանում է մեր ծրագրի առաջին խնդիրը»²⁴:

Իրաքում որոշակի նախադրյալներ են ստեղծվում ազգային ճակատ ստեղծելու համար, որի խնդիրն է լինելու պայքարը երկրի ղեմնորատացման, Քուրդիստանում պատերազմը զարգարեցնելու և քրդերին ավտոնոմիա տրամադրելու համար: Անհատազ կերպով ազգային ճակատ ստեղծելու պահանջով հանդես են գալիս Իրաքի կոմունիստական պարտիան և Քրդական ղեմնորատական պարտիան: Հիշյալ առաջարկը հավանություն է գտնում Ազգային-ղեմնորատական, Ազգային առաջադիմական և այլ պարտիաների ու կազմակերպությունների կողմից: Առաջարկ փոփոխություններ են անդի ունեցել Բասս պարտիայի կազմում: 1963 թ. իշխանությունից հեռացված Բասս պարտիան ընդհատականում լուրջ փոփոխությունների ենթարկեց իր կազմը: Նախկին ղեկավարները հեռացվեցին պարտիայից, որոնք «չոր լցրեցին իմպերիալիզմի ջրաղացին»²⁵: Ձախ բասս-ը, որը վերականգնվողից նոր ծրագրի հիման վրա, 1964 թ. վերջերին հրապարակեց մի ծավալուն փաստաթուղթ, որտեղ վճախանորեն գատապարտում էր Իրաքի ղեմնորատների ղեմ զործադրված սեպարատիստները, Քուրդիստանում մղվող կրթա-

²³ „Foreign Report“, 28 մայիսի 1965 թ.

²⁴ „L'Humanité“, 12 հունիսի 1963 թ.

²⁵ „Le Monde“ 5 ապրիլի 1965 թ. (Այսպիսի որակում է արված քառասուն կառավարության զործանեությունը այն որոշման մեջ, որն ընդունվեց մաի քառասունների 7-րդ համագումարում):

րասպան պատերազմը: Գատապարաելով «Արևիկի կառավարության շովինիզմը», ձախ բասսը հանդես է դալիս քրդերին լայն ավտոնոմ իրավունքներ տալու օպտին, ամբողջ երկրում ղեմակրատական, պառլամենտական ուժեղ հաստատելու օպտին: Ահա թե ինչ է ասվում 1964 թ. դեկտեմբերին հրատարակված «Ձախ բասս» պարտիայի ազգային 7-րդ համագումարի «Քաղաքական մանիֆեստում».

«Կրոնասերական ուժերի ավանգարդը, բասս-ը, Կոմպարտիան, Քրդական ղեմակրատական պարտիան և առաջադիմական այլ տարրերը միավորող միությունը հանդիսանում է միակ ուղին, որն ընդունակ է Իրաքը դուրս բերելու փակուղուց և վճռական հարված հասցնելու իմպերիալիզմին և սեպեղիային»²⁶:

Իրաքյան Քուրդիստանում սանձադեղծված պատերազմը, որի ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Բաղդադի կառավարության վրա, գատապարտվում է արաբական աշխարհի բոլոր ղեմակրատական ուժերի կողմից: Պատերազմի հրդեհի բորբոքումը այնպիսի մի ժամանակ, երբ արաբական երկրները բոլոր միջոցներով դիմադրում են իմպերիալիստական և սեպեղիոն ուժերի ճնշմանը, պայքարում իրենց տնտեսական և քաղաքական անկախության ամրապնդման համար, նպաստավոր պայմաններ է ստեղծում այդ երկրը-

ների ներքին զործերին իմպերիալիստական միջամտության համար, որը մեծ վտանգ է ներկայացնում արաբ և քուրդ ժողովուրդների ազգային շահերին: «Ներկայումս ստեղծված լարված դրության պայմաններում,—գրում է Իրաքի ղեմակրատական շարժման ակնավոր զործիչ Սալեհ Ահմեդը,—անհրաժեշտ է հասնել Քուրդիստանի և ամբողջ Իրաքի ռեյտուցիոն հայրենասիրական հակա-իմպերիալիստական բոլոր ուժերի միասնությանը և համազորմակցությանը, արյունահեղություն թույլ չտալու համար, խափանելու իմպերիալիզմի և սեպեղիայի դավադրությունները, հասնելու քուրդ ժողովրդի ազգային իրավունքների ճանաչմանը և իրաքյան սեպեղիայի առաջադիմությանը»²⁷:

Չնայած Իրաքի ներքաղաքական կյանքի մի շարք իրադարձությունների որոշակիությունը, առայժմ հապճեպ կլինեն կանխագուշակել ղեկավարի հետագա ընթացքը, որովհետև զրանք կապված են մի շարք ներքին և արտաքին պայմանների հետ և այդ իմաստով բացառված չեն նաև սպասմանական անակնկալները: Մի բան, սակայն, պարզ է անվիճելի է. Իրաքում և Մերձավոր և Միջին արևելքում ներքաղաքական կայուն դրության ստեղծումը մեծապես կախված է նաև քուրդ ժողովրդի ազգային իրավունքների ճանաչումից, մի ժողովրդի, որը բոլոր իրավունքները և նախադրյալն-

²⁶ «Le Monde», 5 մայիսի 1965 թ.

²⁷ «Проблемы мира и социализма», 1965, № 5, стр. 85.

ըր ունենալով հանդերձ ազգային ինքնությունս-
թյան և ազատ զարգացման համար, ներկայումս
ենթարկվում է ճնշման, հալածանքների ու սեպրե-
սիանների:

Ներկայումս Հարավային Քուրդիստանի ազգա-
յին ազատագրական շարժման հաղթանակը պայ-
մանավորված է ոչ միայն քուրդ ժողովրդի լավա-
զույն զավակների անձնազոհ հերոսական պայքա-
րով, այլև արաբական դեմոկրատական ուժերի
ցուցաբերած եղբայրական օգնությամբ, որին
քուրդ հայրենասերները այժմ արժանանում են
ափելի, քան երբեք:



Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո
Իրաքյան Քուրդիստանում ծավալված ազգային-
ազատագրական շարժումները զգալի աճանդ են
այն պայքարում, որ Արևելքի ճնշված ժողովուրդ-
ները մղում են խմբերիակից մի և ներքին հարստա-
հարիչների դեմ:

Պատմա-քաղաքական մի շարք աննպատտ պայ-
մանների հետևանքով քուրդ ժողովուրդը երկար
ժամանակ զուրկ է մնացել ազգային միասնական
պետականությունից և այդ հանգամանքը, բնա-
կանաբար, բացասաբար է անդրադարձել նրա ազ-
գային կոնսոլիդացիայի վրա: Չնայած քաղաքա-
կան մասնատվածությանը, Քուրդիստանում ազ-

գային զարթոնքը վերելք է ապրում: Այդ պայքարը
վկայում է, որ պատմական ներկա էտապում տեղի
է ունենում քուրդ ժողովրդի ազգային բուռն կոն-
սոլիդացիա:

Քուրդիստանի մասնատվածությունը և օտար-
երկրյա տիրապետությունը մեծապես խոչընդո-
տում են երկրի ազգային միասնական տնտեսու-
թյան ստեղծմանը, որն իր հերթին բացասաբար է
անդրադառնում քրդերի ազգային զարգացման
վրա: Քուրդիստանը բաժանած երկրների կառա-
վարությունները ոչ միայն չեն նպաստում ցեղային
վերապրուկների և ֆեոդալական հարաբերությու-
նների վերացմանը, այլև հասկանալի պատճառնե-
րով, հաճախ իրենք են շահադրողվածություն հան-
դես բերում Սալայն, ժամանակակից Քուրդիստա-
նում ցեղային-ֆեոդալական հարաբերությունները
մղված են ետին պլան. նրանց հետ կողք-կողքի
զարգանում են կապիտալիստական արտադրահա-
րաբերությունները: Հասարակական-տնտեսական
զոնի բուրք բնազավտոներում երեան են գալիս
Քուրդիստանի առավել լայն խավերի շահերը և
արամադրությունները արտահայտող խնդիրներ:
Չնայած ազգային-ազատագրական շարժման մաս-
նակիցների սոցիալական խայտաբղետ կազմին,
ներկա էտապում զբեկն առաջին պլանի վրա են
համազգային այնպիսի բնույթի խնդիրներ, որոնց
լուծմամբ շահադրողված է ամբողջ ժողովուրդը:

Անա քն ինչու քրդական ազգային-ազատագրական շարժումները հանդիսանում են ոչ քն առանձին սցենարի» կամ ֆեոդալների, այլ ամբողջ բուրգ ժողովրդի շահերը արտահայտող համադեմոկրատական բնույթի շարժումներ:

Իրարում տեղի ունեցած քրդական ազգային-ազատագրական շարժումները, լինելով քրդերի՝ որպես ազգ կազմավորվելու պրոցեսի արտահայտություններից, իրենց հերթին բարերար ազդեցություն են թողնում ամբողջ բուրգ ժողովրդի ազգային ինքնադիտակցության զարգացման և, հետևաբար, նրա ազգային-կոնսոլիդացիայի վրա: Այդ շարժումների պատմությունը ցույց է տալիս, որ օրքան խորանում է ազգային և սոցիալական ճնշումը, այնքան ավելի ուժեղ է արտահայտվում բուրգ ժողովրդի՝ ազգային ինքնուրույնության հասնելու ձգտումը:

Հետպատերազմյան ժամանակաշրջանի քրդական ազգային-ազատագրական շարժումների ուշադրավ կողմնորոշ է նաև այն տեղաշարժը, որ տեղի ունեցավ նրա ուժերի կազմում: Չնայած իր փոքրամիլիոնյանը, այդ շարժման մեջ ավելի ու ավելի ակտիվ դեր է խաղում բանվոր դասակարգը. ակտիվացել է գյուղացիական մասսաների դորու-նետությունը, շարժման ղեկավարությունը անցել է ավելի հեռանդական ռեուլուցիոն մարտիկների ձեռքը:

Վերջապես, հետպատերազմյան քրդական ազգային-ազատագրական շարժման կարևոր մոմենտներից է նրա հակաիմպերիալիստական բնույթը: Այդ շարժումների մեջ զգալի տեղ է զբաղեցրել պայքարը իմպերիալիստական տիրապետության դեմ, ազդեցիվ սոցիալական խմբավորումների միջոցով ժողովուրդների անկախության ձգտումները ճնշելու դեմ: Բավական բնորոշ է այս տեսակետից ամերիկյան «Քայմ» հանդեսի խոստովանությունը: 1952 թ. նա գրում էր. «Միայն քրդերի մի աննշան մասն է կարգում այն հաղորդումները, որոնք ամերիկյան հաստատությունները հրատարակում են քրդերին լեզվով: Նրանք այլևս չեն ունկնդրում Արևմուտքին, այլ լսում են «Կարմիր օտդոն»²⁶:

Իրարում տեղի ունեցող քրդական ազգային-ազատագրական շարժումը ավելի ընդգծեց արտերների և քրդերի միասնական պայքարի անհրաժեշտությունը ընդդեմ ընդհանուր թշնամու: Անցյալի հարուստ, երբեմն դառը փորձը ցույց է տվել օտարեր ժողովուրդների աշխատավորական լայն զանգվածների միասնական պայքարի անհրաժեշտությունը ներքին և արտաքին ռեակցիայի դեմ մղվող պայքարում: Իրարյան Քուրդիստանում տեղի ունեցող պայքարը այդ իմաստով Իրաքի ամբողջ ժողովրդի ղեմնկրատական պայքարի մի մասն է:

²⁶ „Les Balkans et le Moyen-Orient“, 1955, № 25, p. 31

Ծվ որքան էլ մեծ լինեն այդ պայքարի դժվարու-
թյունները, նրա հաղթական վախճանը անխուսա-
փելի է, քանի որ դա պատմական օբյեկտիվ,
հետևապես և անսպաժան իրականացվող անհրա-
ժեշտություն է:



ՔՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Քուրդ աշխատավորության սոցիալ-տնտեսական դրու- թյունը Իրաքում երկրորդ համաշխարհային պատե- րազմից հետո	13
Քրդական ազգային-ազատագրական շարժումները 1943— 1957 թվականներին	50
1958 թվականի սուլայիցիան և քրդական հարցը	107
Քրդական պրոբլեմը 1963 թ. փետրվարի 8-ի պետական հեղաշրջումից հետո	143

Շահբայի Խուրդ Մեջի (Մեջան)
Шахрое Хурдо Мегои (Мегоян)

ԲՐԻՒՎԱԼՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶՆԱՍԳՐԱՅԻՆ ՇԱՐԻՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱՔՈՒՄ ԵՐԿՐՈՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՑՈ

Տպագրվում է ԳԱ ասեկագիտության սեկտորի խմբագրական
նրատեսակչական խոհեղի սուշմամբ

Պատ. խմբագիր՝ Հ. Խ. Քոփուզյան
Հրատ. խմբագիրներ՝ Թ. Խ. Մանույան, Ա. Հովակիմյան
Նկարչական ձևավորումը՝ Կ. Հ. Յարուշյանի
Տեխ. խմբագիր՝ Է. Ա. Ավետյան
Որրագրիչ՝ Փ. Հ. Մարանյան

ՎՖ 06732, ԽՆ 977, Հրատ. № 2585, պատվեր 154, տպագր. 1000

Հանձնված է արտադրության 01/IX 1965 թ.

Ստորագրված է տպագրության 20/XI 1965 թ.

Քուղթ 70×92¹/₃₂, տպագր. մամ. 11,25, Հրատ. մամ. 5,15

Գինը 46 Կ.

Հայկական ՍՍՐ ԳԱ Հրատարակչության էջմիածնի տպարան